

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3099

31<33  
E-47



339/15  
U-94

12 NOV 2009 15 JUN 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

15 3K33  
C-47 ար

## ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բ) 15-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՀԿԿ (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Խ 4 ՀԱ.Վ.Ծ.Վ.Ա.Վ. ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ

78

Թիվ - 1928



5 AUG 2013

3099

3K33 14284  
S-4A Meyerle  
Age. 21-1 6/09  
Tues. 6/30/09  
xc brown  
re 2422 11/18/09

184  
Nº 3.  
4500.

10045  
14284



529

Համաշխարհային կապիտալիզմի հասունացող նգնաժամք  
յեվ ԽՍՀՄ արտաքին դրությունը

Մեր յերկիրը, ընկերներ, ապրում ու զարգանում է կապիտալիստական լրջապատի կացության մեջ, նրա արտաքին դրությունը կախված է վնչ միայն իր ներքին ույժերից, այլ և այդ կապիտալիստական շրջապատի վիճակից, մեր յերկիրը շրջապատող կապիտալիստական յերկրների դրությունից, նրանց ույժից ու թուլությունից, ամբողջ աշխարհի հարստահարված դասակարգերի ույժից ու թուլությունից, այդ դասակարգերի հեղափոխական շարժման ույժից ու թուլությունից: Յես դեռ չեմ խոսում այն մասին, վոր մեր հեղափոխությունը հարստահարված դասակարգերի միջազգային հեղափոխական շարժման մի մասն ե: Անձ թե ինչու յես կարծում եմ, թե Կ. Կ. հաշվետվությունը պետք է սկսել՝ նկարագրելով մեր յերկրի միջազգային դրությունը, նկարագրելով կապիտալիստական յերկրների դրությունը և բոլոր յերկրների հեղափոխական շարժման վիճակը:

Ոռաջին հարցը—կապիտալիստական խոշորագույն յերկրների արտադրության ու առևտրի վիճակն ե: Հիմնական փաստը այդ բնագավառում, ընկերներ, այն ե, վոր կապիտալիստական յերկրների արտադրությունը վերջին յերկու տարվա ընթացքում դերագանցեց մինչպատերազմյան նորմաներից, ավելի առաջ անցավ մինչպատերազմյան նորմաներից: Անձ մի քանի տվյալներ այդ մասին. չուզունի համաշխարհային արտադրության ինդեկսը 1925 թ. մինչպատերազմյան 97,6<sup>0/0</sup> եր, 1926 թ. —արդեն մինչպատերազմյան 100,5<sup>0/0</sup>, 1927 թ. —լիակատար տվյալներ չկան, բայց կան տվյալներ առաջին կիսամյակի մասին, վորոնցից յերկում ե, թե չուզունի արտադրությունն ավելի յետ առևտ: Պողպատի համաշխարհային արտադրության ինդեկսը 1925 թ. — մինչպատերազմյան 118,5<sup>0/0</sup> եր, 1926 թ. — 122,6<sup>0/0</sup>: Քարածուինի համաշխարհային արտադրության ինդեկսը 1925 թ.

— 97,9<sup>0/0</sup> եր, 1926 թ. մի փոքր իջակ—96,8<sup>0/0</sup>: Այստեղ ըստ յերկութին ազգեց անդիլիական գործադուլը: Բամբակի համաշխային գործածությունը 1925 — 26 թ. մինչպատերազմյան 108,3<sup>0/0</sup> եր, իսկ 1926 — 27 թ. — 112<sup>1/2</sup><sup>0/0</sup>: Հացի համաշխարհային բերքը 1925 թ. — մինչպատերազմյան 107,2<sup>0/0</sup> եր, 1926 թ. — 110<sup>1/2</sup><sup>0/0</sup> և 1927 թ. — 112,3<sup>0/0</sup>:

Այդպիս դանդաղ, փոքր քայլերով և առաջանում համաշխարհային արտադրության ընդհանուր ինդեկսը, գերազանցելով մինչպատերազմյան մակարդակից:

Սակայն, կան մի քանի կապիտալիստական յերկրներ, վորոնք ուղղակի գոտոյուններ են գործում, իրենց յետեկց թողնելով մինչպատերազմյան մակարդակը, որինակ Հյուսիս-Ամերիկայն Միացյալ Նահանգները և մասամբ Յապոնիան: Ահա տվյալներ Հյուսիս-Ամեր. Միացյալ Նահանգների մասին: Մշակող արդյունաբերությունն աճեց 1925 թ. 148<sup>0/0</sup>-ով մինչպատերազմյան մակարդակի համեմատությամբ, իսկ 1926 թ.—152<sup>0/0</sup>. հանքային արդյունաբերության աճումը 1925 թ. հասավ 143<sup>0/0</sup>-ի՝ մինչպատերազմյան մակարդակի համեմատությամբ, իսկ 1926 թ.—154<sup>0/0</sup>:

Համաշխարհային առևտուրն ընթանում է վնչ այնպես արագ, ինչպես արտադրությունը. սովորաբար առևտուրը յետ և մնում արտադրությունից, բայց և այնպես նու մոտեցել է մինչպատերազմյան նորմային: Ամբողջ աշխարհում և ավելի նշանավոր յերկրներում ապրանքային արտաքին շրջանառության ինդեկսը 1925 թ. — 98,1<sup>0/0</sup> եր, իսկ ըստ առանձին յերկրներ՝ Հ. Ա. Միացյալ Նահանգներ — 1925 թ. մինչպատերազմյան 134,3<sup>0/0</sup>, իսկ 1926 թ.— 143<sup>0/0</sup>, Ֆրանսիա — 98,2<sup>0/0</sup> և 99,2<sup>0/0</sup>, Գերմանիա — 74,8<sup>0/0</sup> և 73,6<sup>0/0</sup>, Յապոնիա — 176,9<sup>0/0</sup> և 170,1<sup>0/0</sup>, Ընդհանուր առևտամբ համաշխարհային առևտուրն արդեն մոտեցել է մինչպատերազմյան նորմային, իսկ մի քանի յերկրներում, որինակ Հյուսիսային Ամերիկայում և Յապոնիայում արգեն գերազանցել է մինչպատերազմյան նորմայից:

Յեվ, վերջապես, յերրորդ տեսակի փաստեր, վորոնք խոսում են կապիտալիստական արդյունաբերության տեխնիկական առաջազիմության ու նպատակահարմարության (ուցինալիքացիա) նոր ձյուղեր ստեղծելու, տրեստներն ուժեղացնելու, միջազգային ծագալով նորանոր արդյունաբերական միություններ (կարտելներ) կազմակերպելու մասին: Կարծում եմ, այդ թվերը հայտնի յեն բոլորին, ուստի յես յերկար չեմ խոսի այդ մասին: Կմառնա-

նշեմ միայն, վոր կապիտալն առաջադիմել և վոչ միայն արագ-  
գրության աճման, ինչպես և առնարի զծով, այլ և արտադրու-  
թյան տեխնիկան բարելավելու, տեխնիկական առաջադիմության  
ու արտադրության նպատակահարմարաւթյան բնագավառում, ըստ  
վորում այդ ամենից հետզհետե ուժեղանում են խոշորագույն  
տրեսուները ու կազմակերպվում են նոր հզոր կարտեխներ:

Ահա այն փաստեն, ընկերներ, վորոնց պետք եւ մատնանշել  
ու յելակետ ընդունել, նշանակնում եւ, արդյոք, այդ ամենը, թե  
դրանով ել կապիտալիզմի կայունությունը դարձել է հաստատուն  
ու անսասան: Ի հարկե վհչ: Դնո ԽIV-րդ համագումարում գեկուց-  
ման մեջ այլից, թե կապիտալիզմը կարող է հասնել մինչպատե-  
րազմյան նորմային, կարող է գերազանցել այդ նորմայից, կարող  
է նպատակահարմար ուղղություն տալ իր արտադրությանը, բայց  
դա գեռ չի նշանակում բնագ, թե կապիտալիզմի կայունությունը  
կարող է դրանից դառնալ հաստատուն, թե կապիտալիզմը կարող է  
նորից ձեռք բերել վաղեմի մինչպատերազմյան ամրությունը, ան-  
սասանությունը: Ընդհակառակը, հենց կայունությունից, նրա-  
նից, վոր արտադրությունն աճում է, նրանից, վոր առնատուն  
աճում է, նրանից, վոր տեխնիկական առաջադիմությունն ու ար-  
տադրական հնարակորություններն աճում են, մինչդեռ համաշ-  
խարհային շուկան, այդ շուկայի սահմանները և առանձին իմպե-  
րիալիստական խմբակների ազդեցության շրջանները մնում են  
ավելի կամ ուշական կայուն, — այդ ամենից առաջ է գալիս հա-  
մաշխարհային կապիտալիզմի ամենախոր, ամենասուր ճնշաժամ-  
հղի նոր պատերազմներով, սպառնող ամեն տեսակ կայունության  
գոյությանը: Մասնակի կայունությունն ուժեղացնում է կապի-  
տալիզմի ճնշաժամը, հասունացող ճնշաժամը քայլայում է կա-  
յունությունը, — այդպես ե կապիտալիզմի զարգացման տրամա-  
բանությունը ավելալ պատմական մոմենտին:

Համաշխարհային կապիտալիզմի արտադրության ու առետրի  
այդ աճման մեջ անհամեմատ ընորոշ հանդիսանում է այն փաս-  
տը, վոր զարգացումն ընթանում է անհամաշափ: Զարգացումը  
կատարվում է վհչ այնպես, վորպեսզի կապիտալիստական յերկըր-  
ներն առաջանան մեկը մյուսի հետեւյց, համաշափ ու սահուն,  
չսանդարելով մեկը մյուսին ու չընկճելով միմյանց, այլ ընդհա-  
կառակը, այդ զարգացման ժամանակ կապիտալիստական յերկըր-  
ները յետ են մզում միմյանց, նրանցից վորմանք ընկնում կամ  
բարձրանում են, մահացու կորի մզելով շուկայում առաջնություն

ձեռք բերելու համար: Տնտեսական կենտրոնը Յեվրոպայից փո-  
խազրվում է Ամերիկա, Ատլանտիկ ովկիանոսից—Մեծ ովկիան:  
Դրանով ել բարձրանում է Ամերիկայի ու Ասիայի տեսակարար  
կշիռը ապրանքային համաշխարհային շրջանառության մեջ ի հա-  
շիվ Յեվրոպայի, Ահա մի քանի թվեր. յեթե Յեվրոպայի բաժինը  
համաշխարհային արտաքին առետրի մեջ կազմում եր 1918 թվին  
66,5%, Ամերիկայի բաժինը — 21,2%, Ասիայի բաժինը — 12,3%,  
ապա 1925 թ. Յեվրոպայի բաժինն ընկավ 50%-ի, Ամերիկայի  
բաժինը բարձրացավ 26,6%-ի, իսկ Ասիայի բաժինը հասավ 16%-ի:  
Ի շարս կապիտալիզմի առաջ նետվող յերկրների (Հ. Ա. Միացյալ  
Նահանգներ և մասամբ Յապոնիա), կան տնտեսապես անկման յեր-  
կըրներ (Անգլիա), Ի շարս հետզհետե աճող կապիտալիստական Գեր-  
մանիայի և վերջին տարիների առաջ քաշվող-զարգացող յերկրնե-  
րի (Կանադա, Ավստրալիա, Արգենտին, Չինաստան և Հնդկաս-  
տան), կան կայունացող կապիտալիզմի յերկրներ (Ֆրանսիա,  
Իտալիա): Աճում է սպառման շուկաների ձգտող յերկրների ք-  
նակությունը, աճում են արտադրական հնարավորությունները,  
աճում և առաջարկությունը, իսկ շուկաների չափերն ու աղե-  
ցության շրջանների սահմանները մնում են ավելի կամ պակաս  
կայուն:

Այդպիս ե ժամանակակից կապիտալիզմի աճող անհաջո հա-  
կասությունների հիմքը: Արտադրական հնարավորությունների  
աճման և շուկաների համեմատական կայունության այդ հակա-  
սությունը հիմք ծառայեց այն փաստի, վոր շուկաների առեղծ-  
վածքը հանդիսանում է այժմ կապիտալիզմի հիմնական առեղծ-  
վածքը: Սուր կերպարանք և ստացել սպառման շուկաների առեղծ-  
վածքն՝ առհասարակ, սուր կերպարանք և ստացել արտաքին շու-  
կաների առեղծվածքն՝ առանձնապես, և սուր կերպարանք և ստա-  
ցել շուկաների առեղծվածքը կապիտալն արտահանելու համար՝  
մասնավորապես,—այդպիս ե կապիտալիզմի այժմյան վիճակը:  
Դրանով ե բացարկվում, վոր գործարանների ու ֆարբիկաների  
թերաշխատանքը գառնում է սովորական յերեւյթ: Մաքսային  
խոչնդուտների ուժեղացումը միայն յուղ և աճում կրակին: Կապի-  
տալիզմն իրեն ճնշված է զգում այժմյան շուկաների ու ազդեցու-  
թյան շրջանների շրջանակներում:

Շուկաների առեղծվածքը լուծելու խաղաղ ճիգերը չտվին ու  
չեյին կարող տալ հետեանքներ: 1926 թ. սեղանավորների հայտնի  
դեկլարացիան՝ առետրի աղատության մասին՝ ինչպես հայտնի յե-

վերջացավ մնանկությամբ: 1927 թ. Ազգերի Լիգայի տնտեսական կոնֆերենցան, վոր նպատակ ուներ «միացնել կապիտալիստական յերկրների տնտեսական շահերը», վերջացավ նույնպիս մնանկությամբ: Եռևկայի խնդիրը լուծերու խաղաղ ճանապարհը մնում է փակված կապիտալիզմի համար: Միակ «յելք» կապիտալիզմի համար մնում է՝ նորից բաժանել գաղութներն ու ազգեցության շրջաններն ույժով, առզմական ընդհարումներով, նոր իմակերխալիստական պատերազմներով: Կայունությունից ծնվում ու հետք-հետե աճում է կապիտալիզմի ճգնաժամը:

### Կապիտալիզմի միջազգային հաղախականությունը յեվ նոր իմակերխալիստական պատերազմների պատրաստություն

Դրա հետ զուգընթաց՝ աշխարհն ու ազգեցության շրջանները բաժանելու հարցը, վոր արտաքին շուկաների հիմքն և ներկայացնում, ներկայումս համաշխարհային կապիտալիզմի քաղաքականության մեջ հիմնական հարցն ե: Յես արդեն ասացի, թե գաղութների և ազգեցության շրջանների այժմյան բաժանումը, իբրև հետեւանք վերջին իմակերխալիստական պատերազմի, արդեն նացել ե: Դա չե բավարարում այժմ վնչ Հյուսիսային Ամերիկային, վոր աշխատում և ամրանալ Ասիայում (ամենից առաջ Չինաստանում), չբավականանալով Հարավային Ամերիկայով, վնչ Անգլիային, վորի ձեռքբերից դուրս սողացին գաղութները և Արեգելքի մի շարք կարեռ շուկաներ, վնչ Յապոնիային, վորին շարունակ «իսանդարում են» Զինաստանում Ամերիկան և Անգլիան, վնչ Իտալիային և Ֆրանսիային, վորոնք ունեն անհամար «վեճի առարկաներ» ինչպես Մերձանության յերկրներում, այնպես և Միջերկրական ծովում, վնչ ել մանավանդ Գերմանիային, վոր դեռ մնում է առանց գաղութների. այստեղից ել բղխում և «ընդհանուր» ձգուում նորից բաժանել շուկաները և հում նյութերի աղբյուրները: Հարկ չկա ապացուցել, վոր ասիական շուկաները և նրանց ճանապարհները գլխավոր կովարենին են: Այստեղից այն մի շարք հանգույցավոր առեղծվածքներն են, վորոնք ներկայացնում են ամբողջ ոչախներ նոր ընդհարումների համար: Այստեղից այսպես անվանված խաղաղ-ովկիանոսյան առեղծվածքն ե (Ամերիկայի, Յապոնիայի և Անգլիայի անտարբնիզմ), իբրև Ասիայում և նրա ճանապարհներին առաջնություն ձեռք բերելու կովի աղբյուր, Այստեղից Միջերկրական ծովի առեղծվածքն ե (անտարբնիզմ—Անգլիա, Ֆրան-

սիա, Իտալիա), իբրև Միջերկրական ծովի տիերում գերակշռելու կովի աղբյուր, իբրև կովի աղբյուր՝ կարծ ճանապարհով Արևելք մուտք գործելու համար: Այստեղից նավթի առեղծվածքի սրությունն ե (անտարբնիզմ—Անգլիա, Ամերիկա), վորովհետեւ պատերազմի առանց նավթի չի կարելի, իսկ ով գերակշռություն ունի նավթի գործում, նա ունի հաղթելու շանսեր ապագա պատերազմի մեջ:

Վերջերս անգլիական մամուլում տպվեց Զեմբերլենի «վերջին» ծրագիրը՝ Միջերկրական ծովի առեղծվածքը «հարթելու» մասին: Յես չեմ կարող յերաշխավորել ստուգությունը: Սակայն, վոր մամուլի մեջ Զեմբերլենի ծրագրի յերեալը հանդիսանում է սիմպատմ, դրա մեջ կասկած լինել չի կարող: Այդ ծրագիրը նրանումն ե, վոր Սիրիայի վերաբերմամբ «մանդատը» հանձնում է Ֆրանսիայից Խաւալիայի ձեռքը. Տանժերը արվում է Ֆրանսիային՝ Սպանիայի ոգտին Փինանսական վարձահատուցման փոխարեն, Գերմանիային վերադարձվում և Կամերունը, Իտալիան պարտավորվում ե գաղաքարել «գաղմկելուց» Բալկաններում և այլն:

Այդ ամենը Խորհուրդների գեմ կովելու գրոշի տակ: Հայտնի յե, վոր այժմ առհասարակ վոչ մի գարշելի գործ չի ձեռնարկվում առանց չխառնելու Խորհուրդներին կեղասոս գործին: Բայց ինչումն ե այդ ծրագրի իսկական իմաստը: Մբագրի իմաստն այն ե, վորպեսդի վանեն Փրանսիական բուրժուազիային Սիրիայից: Սիրիան հուոց գեափ Արևելք, Միջագետք և Յեգիպտոս տանող ճանապարհի դուռն ե: Սիրիայից կարելի յե վասել Անգլիային թե Սուեզի Ջրանցքի և թե Միջագետքի շրջանում: Յեվ ահա Զեմբերլենը կամհնում ե, ըստ յերեսությին, վերջ դնել այդ անհամելի գործին: Հարկ չկա ասել, վոր մամուլի մեջ այդ ծրագրի յերեալու փաստը չի կարելի անվանել պատահական: Այդ փաստի արժեքն այն ե, վոր նա ցայտում բնույթագրում և այն փոխադարձ թշնամությունը, այն միջագետքերն ու առզմական ընդհարումները, վորոնցով հղի յեն այսպես անվանված մեծ պետությունների այժմյան հարաբերությունները:

Ինչ վերաբերում է նավթի և դրա շուրջը կատարվող կովի առեղծվածքի այժմյան վիճակին, այդ մասին բավական պերճախոս դրում է հոկտեմբերի համարում ամերիկյան հայտնի «Ռուբրի» Ռեբթը. «Թոյություն ունի չափազանց իրական սպանալիք խաղաղության ու փոխադարձ հասկացողությանը Անգլո-Սաքսոն ժողովրդների միջև: Ամերիկյան առետրականնե-

րի աշակցությունը մինխստրության կողմից անխուսափելիքին կդառնա ավելի ուժեղ՝ վորչափով գրա կարիքը կածի: Յեթև բրիտանական կառավարությունը կշաղկապի իրեն բրիտանական նավթային արդյունաբերության հետ, ապա վաղ թե ուշ Ամերիկյան կառավարությունը կշաղկապի իրեն ամերիկյան նավթային արդյունաբերության հետ: Կոփը չի կարող կատարվել կառավարությունների միջև՝ առանց չափեացնելու ծայր աստիճան պատերազմի վտանգը»: Կասկած չկա, հարցը մեծ պետությունների նոր դաշինքներ կազմակերպելու մասին և նոր պատերազմներ պատրաստելու՝ արտաքին շուկաների, հում նյութերի աղբյուրների, գրանց ճանապարհների համար:

Յեղել են, արդյոք, փորձեր «հաշտությամբ հարթելու» հասունացող առզմական միջադեպերը վերջին յերկու տարվա ընթացքում: Այս, յեղել են, յեղել են ավելի շատ, քան կարելի եր սպասել: Բայց դրանք ուղղակի վոչնչի չհանգեցին: Ավելին, այդ փորձերով մեծ պետությունները սոսկ քողարկեցին նոր պատերազմների նախապատրաստական աշխատանքը, նալատակ ունենալով խարել բանվորներին ու գյուղացիներին: Վերցնենք Ազգերի կիգային, վոր, բուրժուական ստախոս մամուլի և վոչ պակաս ստախոս սոցիալ-դեմոկրատական մամուլի կարծիքով, հանդիսանում և խաղաղության գինք: Ինչի՞ հանդեց Ազգերի կիգայի գտառկախոսությունը խաղաղության, զինաթափության ու սպառագինումները կրծատելու հարցի առիթով: Վհչ մի լով բանի, բացի մասսաներին խարելուց, բացի սպառազինման նոր բռնկումներից, բացի հասունացող միջադեպերի նոր սրությունից: Միթե կարելի յի պատահական համարել այն փասաը, վոր յերեք տարի Ազգերի կիգան ճոռմարանում և խաղաղության ու զինաթափման մասին և յերեք տարի աջակցում և այդ ստախոս շատախոսությանը այսպիս անվանված Արդյունական գին գինվում էն են, ընդլայնելով հին միջադեպերը մեծ պետությունների միջև, ավելացնելով նոր միջադեպեր և քանդելով այդպիսով խաղաղության գործը: Ինչի՞ մասին և խոսում ծովային սպառազինումները կրծատելու յեռապեսյան կռնքերնցիայի (Անգլիա, Ամերիկա և Յապոնիա) տապալումը, յեթե վոչ այն մասին, վոր խաղաղ-ովկյանոսյան առեղծվածքը հանդիսանում և նոր իմպերիալիստական պատերազմների աղբյուր, վոր մեծ պետությունները չեն կամենում վհչ զինաթափ լինել, վոչ կրծատել սպառազինումները:

Ի՞նչ արակ Ազգերի կիգան, վորպեսզի կանխի այդ վտանգը: Կամ վերցնենք, որինակ, Խորհրդային պատմիքակալթյան վերջին յերկությունները ֆընկում՝ իրական (և վոչ քողարկված) զինաթափության հարցի առիթով: Ինչով բացատրել այն փաստը, վոր Լիտվինովի պարզ ու ազնիվ գեկլարացիան՝ վիակատար զինաթափության մասին, մահվան սահմառ պատճառեց Ազգերի կիգային, նրա համար յեղակ «միանգամայն անսպասելի»: Ճույց Մ տալիս, արդյոք, այդ փաստը այն, թե Ազգերի կիգան վաչ թե խաղաղության ու զինաթափության գործիք ե, այլ նոր սպառազինումները, նոր պատերազմների պատրաստությունը քողարկելու գործիք: Բոլոր յերկրների կաշառված բուրժուական մամուլը, Յաղոնիայից մինչև Անգլիա, Ֆրանսիայից մինչև Ամերիկա, աղաղակում և ամբողջ թափով, թե իբր զինաթափության մասին խորհրդային առաջարկություններն անկեղծ չեն: Իսկ ինչու այդ դեպքում չստուգել խորհրդային առաջարկությունների անկեղծությունը, չձեռնարկել ենց այժմ գործնականապես զինաթափման կամ համենայն դեպք սպառազինումների լուրջ կրծատման: Կամ, որինակ, կապիտալիստական պետությունների «բարեկամության պայմանագրերի» այժմյան սիստեմը, Ֆրանսիայի պայմանագրը՝ Հարավ-Սլավիայի հետ, Իտալիայի պայմանագրը՝ Ալբանիայի հետ, Պիլսուդսկու պատրաստած բարեկամության պայմանագրը՝ Լիհաստանի և Լիտվայի միջև, Լոկարնոյի սիստեմը, Լոկարնոյի վոգին — ինչ և այդ, յեթե վոչ նոր պատերազմների ու ույժերի դառնապումն պատրաստության սիստեմ՝ ապագա ուղմական ընդհարումների համար:

Կամ, որինակ, վերցնենք հետեւյալ փաստերը. 1913 թվից մինչև 1927 թ. Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Հյուսիս. Ամեր. Միացյալ Նահանգների և Յաղոնիայի բանակների քանակությունը 1.833.000-ից աճեց 2.262.000: Հենց այդ ժամանակամիջոցում միենույն յերկրների զինվորական բյուջեները 2345 միլիոն վոսկե սուբրուց զարձան 3948 միլիոն, այդ 5 յերկրներում սովառնակների թիվը 1925—1927 թ.թ. 2655-ից դարձավ 4340, այդ 5 մեծ պետությունների հածանավերի ույժը 1922 թ. 744.000 տոննից դարձավ 864.000 տոնն: Ռազմա-քիմիական գործում դրությունը պատկերանում և Հյուսիս. Ամեր. Միացյալ Նահանգների սպառազիմիական ծառայության պետ գիներալ Ֆրեյսի հետեւյալ հայտարարությունից. «450 կիլոդրամ ծանրությամբ մի քիմիական ուռմբը լուսիվիտով լցված կարող և անմարդաբնակ դարձնել:

Եյու-Յորքի 10 թաղամաս. իսկ 100 տոնն լցուիդիաը, վոր կնետեն 50 սավառնակ, կարող և անմարդաբնակ դարձնել ամբողջ Եյու-Յորքը համենայն գեպս մի շաբաթով»:

Ինչի՞ մասին են խոսում այդ փաստերը, յեթե վոչ այն մասին, վոր նոր պատերազմների պատրաստությունն ընթանում և ամենայն արագությամբ։

Այդպես են առհասարակ բուրժուական պետությունների և մասնավորապես Ազգերի Լիգայի, առանձնապես կապիտալի ոռցիալ-դեմ. արբանյակների՝ «զինաթափության քաղաքականության» և «խաղաղության քաղաքականության» հետևանքները. Սկզբում զինաթափությունների աճումն արդարացնում էին Գերմանիայի վոտից գլուխ սպառազինման գոյությամբ։ Այժմ այդ արդարացումը վերանում է. Միթե պարզ չե, վոր սպառազինումների աճումը թելազրվում և նոր իմպերիալիստական պատերազմների անբուսափելիությամբ մեծ պետությունների միջև, վոր պատերազմի վոգին հանդիսանում է Լոկարնոյի վոգու հիմնական բովանդակություն։ Յետ կարծում եմ, թե այժմյան «խաղաղ հարաբերությունները» կարելի յենմանեցնել հին, զգգղված, մաշված, բարակ թերով կարկատած շապկի հետ։ Բավական և միայն քաշել տվելի կամ պակաս լըջորին այդ թելը ու կտրել այս կամ այն տեղում, —ամբողջ շապկիը կքայլայի ու կմնան միայն նրա կարկատանները։ Բավական և ցնցել այժմյան խաղաղ հարաբերություններն Ալբանիայում, Լիտվայում, Զինաստանում կամ Հյուսիսային Ամերիկայում, և «խաղաղ հարաբերությունների այդ ամբողջ շնչքը» կկործանվի։ Այդպես եր գործը վերջին իմպերիալիստական պատերազմից առաջ, յերբ Սարակում կատարված սպանությունը պատճառ դարձավ պատերազմի։ Այդպես և գործը և այժմ։ Կայունությունից աճում և նոր իմպերիալիստական պատերազմների անբուսափելություն։

Համաշխարհային հեղափոխական շարժման վիճակը յեվ նոր հեղափոխական վերելիքի կարապետները

Պատերազմ վարելու համար բավական չե սպառազինումների աճում, բավական չե կազմակերպել նոր դաշնակցություններ (կոռլիցիաներ)։ Դրա համար անհրաժեշտ և նաև ամբազնի թիկունքը կապիտալիզմի յերկրներում։ Վաշ մի կապիտալիստական յերկեր չի կարող լուրջ պատերազմ վարել, չամբա-

պնզելով նախապես իր սեփական թիկունքը, չզսպելով «իր» բանվորներին և գաղութներին։ Այստեղից ել — բուրժուական կառավարությունների քաղաքականության աստիճանական ֆաշիզացումն եւ Զի կարելի պատահականություն անվանել այն փաստը, վոր Ֆրանսիայում տիրապետում և այժմ աջակողմյան բլոկը, Անգլիայում — չիկոսի, Դետերդինդի և Ռուկվարտի բլոկը, Գերմանիայում — բուրժուական բլոկը, Յապոնիայում — զինվորական կուսակցությունը, Խոալիայում և Լեհաստանում — Փաշիստական կառավարություններ։ Այստեղից — ճնշում բանվոր դասակարգի վրա, որենք՝ արհ։ միությունների մասին Անգլիայում, որենք՝ ազգի սպառազինման մասին Ֆրանսիայում, 8 ժամյա բանվորական որվա լիկվիդացիա մի շարք յերկրներում, բուրժուազիայի ամենուրեք արշավանք պրոլետարիատի դեմ։ Այստեղից — ուժեղ ճնշում գաղութների ու կախյալ վիճակ ունեցող յերկրների վրա և իմպերիալիստական զորքերի կազմի ուժեղացումը այդ յերկրներում, վորոնց քանակությունը հասնում և միլիոնի, վորոնցից ավելի քան 700.000 զինվոր գլարնվում են բրիտանական «ազգեցության շրջաններում»։ Դժվար չե հասկանալ, վոր Փաշիստական կառավարությունների այդ գաղանային ճնշումը չեր կարող մնալ առանց պատասխան շարժման հարստանարված ժողովրդների կողմից՝ գաղութներում և բանվոր դասակարգի կողմից՝ մայր ցամացներում։ Այսպիսի փաստեր, ինչպես հեղափոխական շարժման աճումն և Զինաստանում, Ինգոնելիքայում և Հնդկաստանում, չեն կարող չունենալ վճռական նշանակություն համաշխարհային իմպերիալիզմի բախտի համար։ Ինքներդ գատեցեք. ամբողջ յերկրագնդի 1905 միլիոն ազգաբնակչությունից 1134 միլիոն ապրում և գաղութներում և կիսագաղութներում, 143 միլիոն ապրում և ԽՍՀՄ մեջ, 264 միլիոնը միջանկյալ յերկրներում և միայն 268 միլիոնը գաղութներին և կիսազարդութներին հարստանարող խոշոր իմպերիալիստական յերկրներում։ Պարզ ե, վոր գաղութային յերկրների հեղափոխական դարթոնքը նախագուշակում և վախճան համաշխարհային իմպերիալիզմին։ Այս փաստը, վոր չինական հեղափոխությունը տակածին անմիջական հաղթություն չի տարել իմպերիալիզմի վրա, չի կարող ունենալ վճռական նշանակություն հեղափոխության հեռանկարների մտքով։ Ժողովրդական մեծ հեղափոխություններն առհասարակ յերբեք չեն հաղթում մինչև վերջը իրենց յերույթների առաջին շրջանում։ Նրանք աճում ու ամրացնում են մանկընթացու-

թյուների ու տեղատվությունների կարգով։ Այդպիս և յեզել ամենուը, զորի թվում և Ռուսաստանում։ Այդպիս կլինի նաև Չինաստանում։

Զինական հեղափոխության ամենակարեռը հետևանք այն փաստն է, վոր նա արթնեցրեց դարավոր նիբոհից ու շարժեց հայուր միջնամավոր շահագործվոր հարստահարվածներին, մերկացրեց գեներալների խմբակի հականեղափոխականությունը, պոկեց հականեղափոխության գոմինդանական հրու սպասավորների դիմակը, ամրացրեց կամմունիստական կուսակցության հեղինակությունը ժողովրդական ստորին խավերի մեջ, բարձրացրեց ամրող շարժումը մինչև խորհուրդներ կազմակերպելու աստիճանի, դարձեց նոր հույսեր Հնդկաստանի, Խորհնեղիայի միջնամավոր հարստահարված զասակարգերի մեջ, և այն։ Միմիայն կույրերն ու թուլամորթները կարող են կասկածել, թե չինական բանվորները և դյուզացիք զիմում են զեպի նոր հեղափոխական վերելք։

Ինչ վերաբերում ե Յեվրոպայի բանվոր դաստկարգի հեղափոխական շարժմանը, այսուեղ ել մենք տեսնում ենք բանվորական ստորին խավերի ձախանալու և հեղափոխական աշխուժացման բացարձակ նշաններ։ Այսպիսի փաստեր, ինչպես են անդիական ընդհանուր և քարածուխային դործադրությ, բանվորների հեղափոխական յելույթը Վիեննայում, հեղափոխական ցույցերը Ֆրանկֆուրտ և Գերմանիայում՝ Սակոյի և Վանցեստախի սպանության առիթով, գերմանական և լեհական կոմկուսների ընտրական աջողությունները, բանվորական շարժման բացահայտ շերտավորությ Անգլիայում, զորի ուժով բանվորները զեպի ձախ, իսկ պարագլուխները դեպի աջ սոց. իմպերիալիստների գրեկը՝ Հ-ըդ ինտերնացիոնալի՝ իմպերիալիստական Ազգերի Ազգայի բացարձակ ավելցուկ դառնալու իրողությունը, սոց. գեմոկրատական կուսակցության հեղինակության անկումը բանվոր դաստկարգի լայն զանգվածներում, կոմինաերնի և նրա սեկցիաների ազդեցության ու հեղինակության ամենուըք աճումը բոլոր յերկրների պըռկետարների մեջ, ԽՍՀՄ հեղինակության աճումն ազդող աշխարհի հարստահարված դաստկարգերի մեջ, «ԽՍՀՄ բարեկամների կոնգրեսը» և այն,—այդ բոլոր փաստերն անժիստելուրեն տսում են, թե Յեվրոպան թևակոխում ե հեղափոխական վերելքի նոր ըլջան։ Յեթե Սակոյի և Վանցեստի սպանության նման փաստը կարող եր ասիթ ծառայել բանվոր դաստկարգի ցույցերի համար, զա անտարակույտ ցույց ե տալիս, թե բանվոր

գասակարգի ստորին խավերում կուտակվել և հեղափոխական յետանդ, վոր վորոնում ե և կվորոնի առիթ ու դեպք՝ յերբեմն արտաքուած միանգամայն աննշան դեպք, վորպիսզի դուրս նետվի և իր ծանրությամբ ընկնի կապիտալիստական ուժիմի վրա։ Մենք ապրում ենք ինչպես գաղութների, այնպես և մայր ցամաքների հեղափոխական նոր վերելքի նախորյակին։ Կայունության վրա աճում ե նոր հեղափոխական վերելքը։

Այդպիսով մենք ունենք համաշխարհային կապիտալիզմի խորագույն ճգնաժամի ու աճող անկայունության բոլոր նշանները։ Յեթե 1920—21 թ. յետապատերազմյան ժամանակավոր ճգնաժամն իր ներքին քառոսով ու կապիտալիստական յերկրների արտաքին կտակերի քայլքայումով կարելի յե համարել վերացած, վորի հետեւ վանքում և վրա հասավ մասնակի կայունության ժամանակաշրջանը, ապա կապիտալիզմի հիմնական ճգնաժամը, վոր նկատվեց Նովոեմբերյան հեղափոխության հաղթության և ԽՍՀՄ համաշխարհային կապիտալիստական սիստեմից՝ անջատվելու հետեւանքում, վոչ միայն չի վերացած, այլ ընդհակառակն, ավելի ու ավելի յե խորանում, յերերելով համաշխարհային կապիտալիզմի գոյության հիմքերը։ Կայունությունը վոչ միայն արգելք չեղավ այդ հիմնական ճգնաժամի զարգացմանը, ընդհակառակը, նող ու ազգյուր տվեց նրա հետագա զարգացման համար։ Հետզհետեւ աճող կրիվ շուկաների համար, աշխարհի ու ազգեցության ըլջանների նոր բաժանման անհրաժեշտությունը, բուրժուական պացիֆիզմի և Ազգերի Լիբայի սնանկությունը, ույժերի դասավորման մեջ նոր կոալիցիաներ ստեղծելու տեսնդային աշխատանքը՝ նոր պատերազմների հանդեպ, սպառազինումների հախուռն աճումը, զագանային ճնշումը բանվոր դաստկարգի ու գաղութային յերկրների վրա, հեղափոխական շարժման աճումը գաղութներում և Յեվրոպայում, կոմինաերնի հեղինակության աճումն ամբողջ աշխարհում և, վերջապես, Խորհրդային Միության հզորության ամրապնդումը և նրա հեղինակության ուժեղացումը Յեվրոպայի բանվորների և գաղութների աշխատավոր մասսաների մեջ, —այդ ամենն այնպիսի փաստեր են, վորոնք չեն կարող չսասանել համաշխարհային կապիտալիզմի հենց հիմքերը։

Կապիտալիզմի կայունությունը դառնում և ավելի ու ավելի փառ ու յերերուն։ Յեթե յերկու ասրի առաջ կարելի յեր և պետք եր խոսել հեղափոխական ալիքների տեղատվության մասին Յեվրոպայում, այժմ արգեն մենք ամենք սիմք ունենք պնդելու, թե

Յեվրոպան բացարձակորեն վոտք և գնում հեղափոխական նոր վերելքի վրան։ Յես զեռ չեմ խոսում գաղութային յերկրների մասին, ուր իմպերիալիստների դրությունը դամում և ավելի ու ավելի կատաստրոֆիկ։

Խորտակվեցին կապիտալիստների հույսերը, թե ԽՍՀՄ կը մասնվի կապիտալիստական այլասեռման, թե կը նրա հեղինակությունը Յեվրոպայի բանվորների և գաղութների աշխատավոր մասսաների մեջ։ ԽՍՀՄ աճում և, զարգանում և դարձնվող սոցիալիզմի յերկիրը։ Նրա ազդեցությունն ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների մեջ աճում ու ամրանում և։ ԽՍՀՄ, — սոցիալիզմ կարուցանող յերկրի գոյությունն իսկ հանդիսանում և համաշխարհային իմպերիալիզմի քայլքայման, նոր կայունության թուլացման գործոններից մեկը՝ ինչպես Յեվրոպայում, այնպես և գաղութներում։ ԽՍՀՄ սրարզապես դառնում և Յեվրոպայի բանվոր դասակարգի և գաղութների հարտահարգած ժողովրդների գործակ։ Այդ պատճառով, վորպեսզի կարելի լինի հող պատրաստել ապագա իմպերիալիստական պատերազմների համար, ավելի հիմնովին ճշել «սեփական» բանվոր դասակարգին ու զապել «սեփական» գաղութներին՝ կապիտալիստական թիկունքն ամրապլնակելու համար, հարկավոր և ամենից առաջ զապել ԽՍՀՄ հեղափոխության այդ ոջախն ու տնկարանը, վոր միաժամանակ կապիտալիստական յերկրների սպառման մեծագույն շուկաներից մեկն և։

Այստեղից արտաքին ռազմական միջամտության տեսնդենցների աշխատացում իմպերիալիստների մեջ, ԽՍՀՄ-ը մեկուսացնելու քաղաքականություն, ԽՍՀՄ-ը շրջապատելու քաղաքականություն, ԽՍՀՄ զեմ պատերազմի համար պայմաններ պատրաստելու քաղաքականություն։ Իմպերիալիստների բանակում արտաքին ռազմական միջամտության տեսնդենցների ուժեղացումը (ԽՍՀՄ վերաբերմամբ) ներկա գրության հիմնական գործոններից մեկն և։ Անհամեմատ սպառնական կողմ կապիտալիզմի ծավալվող ճգնաժամի կացության մեջ հանդիսանում և անզիւական բուրժուազիան։ Նա նախաձեռնություն վեցըք իր վրա արտաքին ռազմական միջամտության տեսնդենցների ուժեղացնելու գործում։ Պարզ և, վոր խորհրդային բանվորների ոգնությունն անզիւական ածխահատներին, ԽՍՀՄ բանվոր դասակարգի համակրությունը Զինաստանի հեղափոխական շարժմանը չելին կարող յուղ չածել կրակին։ Այդ բոլոր հանգամանքները նպաստեցին անզիւ-խորհր-

դային հարաբերությունների խզման և հարաբերությունների վատթարացման մի շարք այլ պետությունների հետ։

Յերկու տեսնդենցների պայքարը կապիտալիստական աշխարհի և ԽՍՀՄ հարաբերությունների մեջ — ուազմական ագրեսիվ քաղաքականության տեսնդենց (ամենից առաջ Անգլիան) և հաշտ հարաբերությունները շարունակելու տեսնդենց (մի շարք ուրիշ կապիտալիստական յերկրներ) — հանդիսանում և, այդ պատճառով, հիմնական գործոն մեր արտաքին հարաբերությունների սիստեմի մեջ՝ ներկա ըովելին։

Հաշվետվության ժամանակաշրջանում հաշտության հարաբերությունների տեսնդենցը ընորոշ փաստերն են. պայմանագիր Թյուրքիայի հետ չհարձակվելու մասին, յերաշխիքային պայմանագիր Գիրմանիայի հետ, մաքսային համաձայնություն Հունաստանի հետ, համաձայնություն Գիրմանիայի հետ վարկերի մասին, մեզ ճանաչեց Ուրուգվան, յերաշխիքային պայմանագիր Ավդանիստանի հետ, յերաշխիքային պայմանագիր Լիտվայի հետ, յերաշխիքային պայմանագրի ստորագրություն Լատվիայի հետ, առևտրական պայմանագիր Թյուրքիայի հետ, միջադեպի հարթումն Շվեյցարիայի հետ, պայմանագիր Պարսկաստանի հետ՝ չեղոքության մասին, հարաբերությունների բարելավումն Յապոնիայի հետ, տնտեսական կապերի աճումն Ամերիկայի և Իտալիայի հետ։

Ռազմական ագրեսիվ քաղաքականության տեսնդենցը ընորոշող փաստերն են. անզիւական պաշտոնագիրը գործաթող ածխատաներին դրամական ողնություն ցույց տալու առիթով, հարձակում Պեկինում, Տյանցզինում և Չանհայում, հարձակում Արկոսի վրա, Անգլիայի հարաբերությունների խզումը ԽՍՀՄ-ից, Վոյկովի սպանությունը, անզիւական վարձկանների տերրորիստական ակտերը ԽՍՀՄ մեջ, հարաբերությունների սրումն Ֆրանսիայի հետ Ռակովսկուն յետ կանչելու հարցի առիթով։

Յեթե 2 տարի առաջ կարելի և պետք եր խոսել ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների վորոշ հավասարակշռության ու «խաղաղ կենակցության» մասին, այժմ արդեն մենք ամեն հիմք ունենք պնդելու, թե «խաղաղ կենակցության» ժամանակաշրջանը պատկանում և անցյալին, տեղի տալով իմպերիալիստական հանգընության և ԽՍՀՄ զեմ ռազմական միջամտություն պատրաստելու ժամանակակշռանին։ Անգլիայի փորձերը՝ ստեղծել միանական ճակատ ԽՍՀՄ դեմ մինչև այժմ չաղողվեց։ Այդ անաջ-



զության պատճառներն են. շահերի հակասություն իմպերիալիստների բանակում, մի քանի յերկրներ շահագրգոված են տընտեսական կապեր հաստատել ԽՍՀՄ հետ, ԽՍՀՄ խաղաղասեր քաղաքականությունը, Յեվրոպայի բանվոր դասակարգի դիմադրությունը, իմպերիալիստների այն յերկյուղը՝ թե կրօնկվէ հեղափոխությունն իրենց մոտ ԽՍՀՄ հետ պատերազմելու դեպքում: Բայց դա դեռ չի նշանակում, թե Անդինան կթողնի ԽՍՀՄ գեմ միասնական ճակատ կազմակերպելու իր աշխատանքը, թե նրան չի աջողվի կազմակերպել այդպիսի ճակատ: Պատերազմի սպառնալիքը մնում ե իր ույժի մեջ, չնայած Անդինայի ժամանակավոր անաջողություններին:

Այստեղից ինդիր ե—հաշվի առնել իմպերիալիստների բանակում յեղած հակասությունները, ձգձգել պատերազմը, ազատվելով կապիտալիստներից և ամեն միջոց ձերք առնել պահպանելու խաղաղ հարաբերությունները: Մենք չենք կարող մոռանալ ինինի այն խոսքերը, թե շատ բան մեր շինարարության գործում կախված ե նրանից—կաջողվի՞ արդյոք, մեզ՝ իտաձգել պատերազմը կապիտալիստական աշխարհի գեմ, մի պատերազմ, վոր անխուսափելի յե, բայց կարելի յե ձեձգել կամ մինչ այն ըոպեն, յերբ կհասունանա պրոլետարական հեղափոխությունը Յեվրոպայում, կամ մինչ այն ըոպեն, յերբ լիովին կհասունանան գաղութային հեղափոխությունները, կամ, վերջապես, մինչ այն ըոպեն, յերբ կապիտալիստները կկովին իրար հետ գաղութները բաժանելու պատճառով: Այդ պատճառով կապիտալիստական յերկըների հետ հաշտ հարաբերություններ պահպանելը մեզ համար պարտադիր ինդիր ե:

Կապիտալիստական յերկրների հետ մեր հարաբերությունների հիմքում թույլատրվում ե յերկու հակոտնյա սիստեմների գոյություն: Առորյա աշխատանքն ըստամենայնի արդարացրեց այդ: Գայթակղության քար հանդիսանում ե յերբեմն պարտքերի և վարկերի հարցը: Մեր քաղաքականությունն այստեղ պարզ եւ Դա ձեակերպված ե կոնկրետ կերպով «տալիս ես — տալիս եմ»: Տալիս ես վարկեր մեր արդյունաբերության բեղմնավորման համար — ստանում ես մինչպատերազմյան պարտքերի վորոշ մասը, վորպիսրն մենք համարում ենք իբրև լրացուցիչ տոկոսներ վարկերի համար: Զես տալի — չես ստանում: Փաստերն ասում են, թե մենք վորոշ նվաճումներ ունենք արդյունաբերական վարկեր ստանալու բնագավառում: Ներկա դեպքում յես նկատի ունեմ

վոչ միայն Գերմանիային, այլ և Ամերիկային ու Անգլիային: Ինչումն ե այստեղ զաղոնիքը: Նրանում, վոր մեր յերկիրը ներկայացնում ե կահավորման ներմուծման մեծագույն շուկան, իսկ կապիտալիստական յերկրները հենց այդ տեսակ մթերքների սպառման կարիք ունեն:

Հետևանքում մենք ունենք, նախ՝ հակասությունների աճում կապիտալիստական շրջապատի ներսում, աշխարհի նոր բաժանման անհրաժեշտություն պատերազմի միջոցով, Անդինայի գլխավորությամբ կապիտալիստական աշխարհի մի մասի ուազմական միջամտության տեսդենցներ, մինչդեռ կապիտալիստական աշխարհի մյուս մասը չի ցանկանում խառնվել ԽՍՀՄ գեմ պատրաստվող պատերազմի գործին, գերազանելով տնտեսական կապեր հաստատել ԽՍՀՄ հետ, այդ յերկու տեսդենցների կովի գոյություն և վորոշ հարավորություն ԽՍՀՄ համար՝ հաշվի առնել այդ հակասությունները խաղաղությունը պահպանելու նպատակով: Յերկրորդ՝ մենք ունենք քայլքայվող կայունություն, գաղութային հեղափոխության շարժման աճում, նոր հեղափոխական վերելքի նշաններ Յեվրոպայում, Կոմինտերնի և նրա սեկցիաների հեղինակության աճում ամբողջ աշխարհում, Յեվրոպայի բանվոր դասակարգի համակրանքի պարզորոշ աճում գեպի ԽՍՀՄ: ԽՍՀՄ աճող հզորություն յերկրի ներսում, մեր յերկրի բանվոր դասակարգի ամբապնդվող հեղինակություն ամբողջ աշխարհի հարստանարգած դասակարգերի մեջ:

Այստեղից կուսակցության ինդիրներն են. 1. միջազգային հեղափոխական շարժման գծով—կոփլ՝ կոմմունիստական կուսակցությունների զարգացման համար ամբողջ աշխարհում, կոփլ՝ հեղափոխական արհմիությունները և բանվորների ճակատն ամրապնդելու համար կապիտալի արշավանքի գեմ, կոփլ՝ ԽՍՀՄ բանվոր դասակարգի և կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի բարեկամությունն ամբապնդելու համար, կոփլ՝ ԽՍՀՄ բանվոր դասակարգի և գաղութային յերկրների ազատարար շարժման միջև կապն ուժեղացնելու համար:

2. ԽՍՀՄ արտաքին քաղաքականության գծով — կոփլ՝ իմպերիալիստական նոր պատերազմների պատրաստության դեմ, կոփլ՝ Անդինայի արտաքին ուազմական միջամտության տեսդենցների գեմ, ԽՍՀՄ ուազմունակության ուժեղացում, խաղաղության քաղաքականություն և խաղաղ հարաբերությունների պահպանումն կապիտալիստական յերկրների հետ, մեր ապրանքային

Ցջանառության ընդարձակում, մերձեցում տիրող իմպերիալիստական մեծ պետությունների ճնշմանն ու շահագործմանը յենթակա այսպես անվանված «թույլ» «վոչ իրավահավասար» պետությունների հետ:

## ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ազողությունները յեվ ներքին դրությունը

Թույլ տվեք, ընկերներ, դիմել մեր յերկրի ներքին գրությանը և մեր սոցիալիստական շինարարության աջողություններին, պրոլետարիատի դիկտատորայի բախտի, նրա զարգացման ու ամրապնդման հարցին:

Կուսակցության XIX համագումարը հանձնարարեց կենտրոնական կոմիտեյին վարել մեր ժողովրդական տնտեսության զարգացման գործը հետեւյալ հիմնական խնդիրների տեսակետից. նախ վորպեսզի մեր քաղաքականությունը սատարի մեր ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրության աճմանը, յերկրորդ՝ վորպեսզի կուսակցության քաղաքականությունը նպաստի արդյունաբերության զարգացման տեմպի արագացմանը և արդյունաբերության դեկավար գերը ապահոված լինի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ, յերրորդ՝ վորպեսզի ժողովրդական տնտեսության զարգացման ընթացքում ապահովի ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածի և տնտեսության սոցիալիստական ձևերի հետզհետե աճող տեսակարար կշիռը՝ ի հաշիվ մասնավոր ապրանքային կապիտալիստական հատվածի, չորրորդ՝ վորպեսզի մեր ամբողջ տնտեսական զարգացումը, արդյունաբերության նոր ճյուղերի կազմակերպումը, հումնյութերի փորոշ ճյուղերի զարգացումը, և այլն, կատարվի այնպիսի ուղղությամբ, վորպեսզի ընդհանուր զարգացումն ապահովի մեր յերկրի տնտեսական անկախությունը, վորպեսզի մեր յերկիրը չդառնա համաշխարհային տնտեսության կապիտալիստական հատվածի ավելցումը, հինգերորդ՝ վորպեսզի պրոլետարիատի դիկտատուրան և բանվոր դասակարգի ու գյուղացիական մասսաների միությունը և բանվոր դասակարգի գեկավարությունն այդ միության մեջ ամրանան, վեցերորդ՝ վորպեսզի բանվոր դասակարգի և գյուղի ընչազուրկ խավերի նյութական ու կուլտուրական զրությունը շարունակ բարձրանա:

Ի՞նչ են արել այդ խնդիրների իրագործման ընագավավառում մեր կուսակցությունը և կենտրոնական կոմիտեն հաշվետվության ժամանակամիջոցում:

Առաջին հարցը—ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը: Յես այստեղ կրերեմ մի քանի հիմնական թվեր՝ ամբողջ ժողովրդական տնտեսության և մասնավորապես արդյունաբերության ու գյուղատնտեսության աճման հարցին վերաբերյալ— հնդացս վերջին յերկու տարվա: Այդ թվերը յես վերցնում հմ Պետպլանի հայտնի աղյուսակներից. յես նկատի ունեմ Պետպլանի 1927—28 թ. վերահսկիչ թվերը և ննդամյա ծրագրի նախագիծը:

Ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման աճումը յերկու տարվա ընթացքում: Յեթե 1924—25 թ. գյուղատնտեսության ընդհանուր արտադրությունը Պետպլանի նոր հաշվերով կազմում եր մինչպատերազմյան  $87,3^0/0$ , իսկ ամբողջ արդյունաբերության արտադրությունը —  $63,7^0/0$ , այժմ արգեն, յերկու տարի անց, 1926/27 թ. գյուղատնտեսության արտադրությունը կազմում է  $108,3^0/0$ , իսկ արդյունաբերության արտադրությունը —  $100,9^0/0$ . Բայց Պետպլանի վերահսկիչ թվերի՝ 1927—28 թ. մտադրություն կա հասցնել գյուղատնտեսության արտադրությունը մինչպատերազմյան  $111,8^0/0$ -ի, իսկ արդյունաբերության արտադրությունը —  $114,4^0/0$ -ի:

Առեարա - միջնորդական շրջանառության աճումը յերկրում յերկու տարվա ընթացքում: Յեթե ընդունենք 1924—25 թ. արջանառությունների չափերը 100 (14613 միլիոն չերվոնի ոռորլի), ապա 1926—27 թ. մենք ունենք ավելացում  $97^0/0$ -ով (28775 միլիոն ոռորլի), իսկ 1927—28 թ. նախատեսվում է հետագա աճում մինչև  $116^0/0$  (33440 միլիոն ոռորլի):

Մեր վարկային սխառեմի զարգացումը յերկու աարվա ընթացքում: Յեթե վերցնենք մեր բոլոր վարկային հաստատությունների միացյալ հաշվեկշռներն առ 1 հոկտեմբեր 1925 թ.  $100$ , ( $5343$  միլիոն չերվոնի ոռորլի), ապա առ 1 հուլիս 1927 թ. մենք ունենք աճում  $53^0/0$ -ով ( $8175$  միլիոն ոռորլի): Հիմք չկա կասկածելու, վոր 1927—28 թ. մեր ապահոված վարկային սխառեմը նորեն կածի:

Յերկաթուղային արանսպորտի զարգացումը յերկու տարվա ընթացքում: Յեթե 1924—25 թ. մեր ամբողջ յերկաթուղային ցանցի ապրանքաշրջանառությունը մինչպատերազմյան  $63,1^0/0$ -ին

եր հավասար, այժմ արդեն 1926—27 թ. մենք ունենք  $99,1^0/₀$  ֆոկ 1927—28 թ. կունենանք  $111,6^0/₀$ : Յես արդէն չեմ խոսում այն մասին, վոր այս 2 տարվա ընթացքում մեր յերկաթուղարին ցանցը 74,4 հազար կիլոմետրից դարձավ 76,2 հազար կիլոմետր, այսինքն մինչպատերազմյան մակարդակի դիմաց ավելացավ  $3,3^0/₀$ -ով, իսկ 1917 թ. դիմաց— $8,9^0/₀$ -ով:

Պետական բյուջեյի աճումը յերկու տարվա ընթացքում: Յեթե միացյալ բյուջեն (միասնական պետական բյուջեն՝ պլյուս տեղական բյուջեները) մեզ մոտ կազմում եր 1925—26 թ.  $72,4^0/₀$  ( $5024$  միլիոն ռուբլի), ներկա ռոպեյին 1927—28 թ. միացյալ բյուջեն պետք ե կազմի մինչպատերազմյան  $110—112^0/₀$  (ավելիքան  $7$  միլիարդ ռուբլի): Յերկու տարում աճումը հավասար է  $41,5^0/₀$ :

Արտաքին առևտրի աճումը 2 տարվա ընթացքում: Յեթե արտաքին առևտրի ընդհանուր շրջանառությունը 1924—25 թ. մեզ մոտ կազմում եր 1282 միլիոն ռուբլի, այսինքն մինչպատերազմյան մոտ  $27^0/₀$ , ապա այժմ 1926—27 թ. մենք ունենք  $1483$  միլիոն ռուբլու շրջանառություն, այսինքն մինչպատերազմյան  $33,6^0/₀$ , իսկ 1927—28 թ. յենթադրվում ե ունենալ  $1626$  միլիոն ռուբլի, այսինքն մինչպատերազմյան  $37,9^0/₀$ :

Արտաքին առևտրի զարգացման գանդաղ տեմպի պատճառները. նախ՝ այն փաստը, վոր բուրժուական պետությունները հաճախակի արգելքներ են դնում մեր արտաքին առևտրին, վորոնք յերբեմն փոխվում են քողարկված պաշարման. յերկրորդ՝ այն փաստը, վոր մենք չենք կարող առևտուր անել բուրժուական «ինքներս կուշա չենք ուտի, բայց կարտահանենք» ֆորմուլայով: Պյուս հանդիսանում ե այստեղ 1926—27 թ. արտաքին առևտրի ոկտիվ սալգոն՝  $57$  միլիոն՝  $57$  միլիոն ռուբլին: Սա առաջին տարին ե 1923—24 թվից հետո, յերբ արտաքին առևտրի հաշվեկշիռը փակվում է պյուսով:

Հետևանքում մենք ունենք ամբողջ ազգային յեկամտի ընդհանուր աճման հետեւյալ պատկերը՝ յերկու տարվա ընթացքում. յեթե ընդունենք, վոր 1924—25 թ. ԽՍՀՄ ազգային յեկամտը կազմում եր  $15,589$  միլիոն չերվոնի ռուբլի, ապա 1925—26 թ. մենք ունենք  $20,252$  միլիոն ռուբլի, այսինքն մի տարում աճեց  $29,9^0/₀$ -ով, իսկ 1926—27 թ.— $23,560$  միլիոն ռուբլի, այսինքն մի տարում աճեց  $11,4^0/₀$ -ով: Պետպահնի վերահսկիչ թվերով՝ 1927—28 թ. մենք կունենանք  $24,208$  միլիոն ռուբլի,

այսինքն աճում  $7,3^0/₀$ -ով: Յեթե ուշադրության առնենք, վոր Միացյալ Նահանգների ազգային յեկամտի տարվա միջին աճումը  $3—4^0/₀$ -ից չի անցնում (միմիայն մի անգամ, անցյալ դարու ությունական թվականներին Միացյալ Նահանգների ազգային յեկամտուն աճեց մոտ  $7^0/₀$ -ով), մյուս յերկրների, որինակ Անգլիայի և Գերմանիայի ազգային յեկամտի ամենամյա աճումը չի անցնում  $1—3^0/₀$ -ից, ապա պետք ե ընդունենք, վոր ԽՍՀՄ մեջ ազգային յեկամտի աճման տեմպը վերջին տարիներում մրցանիշային ե՝ Յերկրոպայի և Ամերիկայի խոշոր կապիտալիստական յերկրների համեմատությամբ:

Յեղափակություն. մեր յերկրի ժողովրդական տնտեսությունն աճում ե արագ տեմպով: Կուսակցության խնդիրն ե՝ առաջ անել մեր յերկրի ժողովրդական տնտեսության զարգացումը պրտագրության բոլոր ճյուղերում:

Մեզ մոտ ժողովրդական տնտեսության աճումն ընթանում է վեց թե արտադրության, հասարակ քանակային աճման կարգով, այլ վորոշ, խստորեն ձևակերպված, ուղղությամբ:

Վճռական գործոն ժողովրդական՝ տնտեսության զարգացման գործում վերջին յերկու տարվա ընթացքում հանդիսանում է յերկու հիմնական հանգամանք: Նախ՝ մեր ժողովրդական տնտեսության զարգացումն ընթանում է յերկրի արդյունաբերման (ինդուստրիալիզացիայի) նշանաբանով, ըստ վորում աճում ե արդյունաբերության դերը՝ գյուղատնտեսության վերաբերմամբ: Յերկրորդ՝ յերկրի ժողովրդական տնտեսության ու արդյունաբերության զարգացումն ընթանում են տնտեսության սոցիալիստական ձևերի իշխող դերը և տեսակարար կշիռը՝ ինչպես արտադրության, այնպես և ապրանքաշրջանառության բնագավառում՝ ուժեղանալու ուղղությամբ — ի հաշիվ մասնավոր ապրանքային կապիտալիստական հատվածի:

Թվեր՝ արդյունաբերության տեսակարար կշիռի աճման մասին ժողովրդական տնտեսության սիստեմում (առանց տրանսպորտի ու ելեկտրիֆիկացիայի): Յեթե արդյունաբերության ամբողջ արտադրության բաժինը ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրության նկատմամբ կազմում եր 1924—25 թ. մինչպատերազմյան գներով  $32,4^0/₀$ , իսկ գյուղատնտեսության բաժինը  $67,6^0/₀$ , ապա 1926—27 թ. արդյունաբերության հաշիվը հասավ  $38^0/₀$ -ի, իսկ գյուղատնտեսության բաժինն իջակ 62 $^0/₀$ -ի. 1927

— 28 թ. արդյունաբերության բաժինը պետք է հասնի  $40,2^0/_{\circ}$ -ի, գյուղատնտեսության բաժինը պետք է իջնի  $59,8^0/_{\circ}$ :

Թվեր՝ մեքենաների արտադրության ու արտադրության միջոցների — տեսակարար կշռի աճման մասին — յերկու տարվա ընթացքում. 1924 — 25 թ. արտադրության միջոցների արտադրական բաժինը  $34,1^0/_{\circ}$  եր, 1926 — 27 թ. —  $37,6^0/_{\circ}$ , իսկ 1927 — 28 թ. յենթադրվում է հասցնել  $38,6^0/_{\circ}$ :

Թվեր՝ արտադրության միջոցների արտադրականի տեսակարար կշռի աճման մասին՝ պետական խոշոր արդյունաբերության մեջ յերկու տարվա ընթացքում. 1924 — 25 թ. —  $42^0/_{\circ}$ , 1926 — 27 թ. —  $44^0/_{\circ}$ , իսկ 1927 — 28 թ. մտադրություն կա հասցնել  $44,9^0/_{\circ}$ -ի:

Ինչ վերաբերում եւ արդյունաբերության ապրանքային արտադրությանը ու նրա տեսակարար կշռին՝ ապրանքների ամբողջ զանգվածի մեջ, արդյունաբերության բաժինը — 1924 — 25 թ.  $53,1^0/_{\circ}$ -ից հասավ 1926 — 27 թ.  $59,5^0/_{\circ}$ , իսկ 1927 — 28 թ. պետք է հասնի  $60,7^0/_{\circ}$ -ի, մինչդեռ գյուղատնտեսության ապրանքային արտադրության բաժինը կազմում եր 1924 — 25 թ.  $46,9^0/_{\circ}$ , 1926 — 27 թ.  $49,5^0/_{\circ}$ -ի, իսկ 1927 — 28 թ. պետք է իջնի  $39,3^0/_{\circ}$ -ի:

Յեղակացություն. մեր յերկիրը դառնում է արդյունաբերական, ինդուստրիալ յերկիր. կուսակցության խնդիրն եւ առաջանել բոլոր միջոցներով մեր յերկիր ինդուստրիալիզացիան:

Թվեր՝ տնտեսության սոցիալիստական ձևերի իշխող դերի ու տեսակարար կշռի աճման մասին՝ ի հաշիվ մասնավոր ապրանքային ու կապիտալիստական հատվածների — 2 տարվա ընթացքում. Այն ժամանակ, յերբ ժողովրդական տնտեսության ընդհանուրացրած հատվածի հիմնական գումարահատկացումները (պետական ու կոոպերատիվային արդյունաբերություն, տրանսպորտ ու եկամուտիկացիա) 1924 — 25 թ. 1231 միլիոն սուբլուց դարձան 2683 միլիոն սուբլի 1926 — 27 թ., իսկ 1927 — 28 թ. այդ գումարները պետք է հասնեն 3436 միլիոն սուբլու, այսինքն 1924 — 25 թ.  $43,8^0/_{\circ}$ -ը, — 1927 — 28 թ. դառնալու յե  $65,3^0/_{\circ}$ . Ժողովրդական տնտեսության վոչ ընդհանուրացրած հատվածի գումարները շարունակ պակասում եյին համեմատաբար ու աճեցին միայն աննշան՝ բացարձակ թվերով — 1924 — 25 թ. 1577 միլիոնը դարձավ 1717 միլիոն, այդպիսով վոչ ընդհանուրացրած հատվածի գումարահատկացումների տեսակարար կշիռը 1924 — 25 թ.  $36,2^0/_{\circ}$ -ից իջավ 1927 — 28 թ.  $34,7^0/_{\circ}$ -ի: Այն ժամանակ, յերբ արդյու-

նաբերության ընդհանուրացրած հատվածի ամբողջ արտադրությունը 1924 — 25 թ.  $81^0/_{\circ}$ -ից դարձավ  $86^0/_{\circ}$  1926 — 27 թ. ամբողջ արդյունաբերության մեջ, իսկ 1927 — 28 թ. պետք է զառնա  $86,9^0/_{\circ}$ , արդյունաբերության վոչ ընդհանուրացրած հատվածի դերը ընկնում եւ տարեցտարի — 1924 — 25 թ. ամբողջ արդյունաբերության արտադրության  $19^0/_{\circ}$ -ը իջավ 1926 — 27 թ.  $14^0/_{\circ}$ -ի, իսկ 1927 — 28 թ. պետք է իջնի մինչև  $13,1^0/_{\circ}$ -ի: Ինչ վերաբերում է մասնավոր կապիտալի դերին խոշոր (ցինդային) արդյունաբերության մեջ, դա ընկնում եւ վոչ միայն համեմատաբար (1924 — 25 թ.  $3,9^0/_{\circ}$ -ից իջավ 1926 — 27 թ.  $2,4^0/_{\circ}$ ), այլև բացարձակորեն (1924 — 25 թ. 169 միլիոն մինչպատերազմյան սուբլին դարձավ 1926 — 27 թ. 165 միլիոն մինչպատերազմյան սուբլ.):

Նույն կերպ յետ են մղվում մասնավոր կապիտալիստական տարրերը նաև յերկրի ապրանքաշրջանառության բնագավառում: Այն ժամանակ, յերբ ընդհանուրացրած հատվածի բաժինն ամբողջ առևտրա-միջնորդական շրջանառության մեջ 1924 — 25 թ. կաղմում եր  $72,6^0/_{\circ}$ , մեծաքանակ առևտրի մեջ —  $90,6^0/_{\circ}$ , մանրածախսի մեջ —  $57,3^0/_{\circ}$ , 1926 — 27 թ. ընդհանուրացրած հատվածի տեսակարար կշիռն ամբողջ շրջանառության մեջ հասավ  $81,9^0/_{\circ}$ -ի, մեծաքանակ առևտրի մեջ մինչև  $94,9^0/_{\circ}$ , մանրածախսի մեջ —  $67,4^0/_{\circ}$ , մինչդեռ մասնավոր հատվածի բաժինը նույն ժամանակամիջոցում ամբողջ տնտեսարա-միջնորդական շրջանառության մեջ  $27,4^0/_{\circ}$ -ից իջավ  $18,1^0/_{\circ}$ -ի, մեծաքանակ առևտրի մեջ  $9,4^0/_{\circ}$  դարձավ  $5,1^0/_{\circ}$ , մանրածախսի մեջ  $42,7^0/_{\circ}$ -ը դարձավ  $32,6^0/_{\circ}$ , իսկ 1927 — 28 թ. յենթադրվում եւ նորից իջնեցնել մասնավոր հատվածի տեսակարար կշիռը բոլոր տիպի առևտրի մեջ:

Յեղակափակություն. մեր յերկիրը զիմում եւ գեպի սոցիալիզմ ինքնավատան ու արագ, յետ մղելով քայլ առ քայլ ժողովրդական անտեսությունից կապիտալիստական տարրերին: Այդ ժամատը բաց եւ անում մեր առաջ «ժումը» հարցի հիմքը: Այդ հարցն առաջադրեց կենիսը 1921 թ. տնտեսական նոր քաղաքականություն մտցնելուց հետո: Կարող ենք, արդյոք, մենք կապակցել մեր սոցիալիստականացրած արդյունաբերությունը զյուղաշիական տնտեսության հետ, յետ մղել մասնավոր առևտրականին ու մասնավոր կապիտալիստին և սովորել առևտուր անել, թե մասնավոր կապիտալիստին մեզ, պառակտում ձգելով պրոլետարիատի և գյուղացիության միջև, — ահա թե ինչպես եր գրված այն ժամանակ հարցը: Այժմ մենք կարող ենք ասել, թե

հիմնականում այդ ընագավառում մենք ունենք արդեն վճռական աջողություններ: Այդ ժխտել կարող են սիմիայն կույրերը կամ խելազարները: Բայց այժմ «ՏՎ ՌԵ» և ձեռք դցում հարցն արդեն այլ բնույթի յե: Այժմ այդ հարցը փոխադրվում է առևտրի բնագավառից արտադրության շրջանը, տնայնագործական արտադրության և գյուղատնտեսական արտադրության շրջանը, ուր մասնավոր կապիտալն իր վորոշ տեսակաբար կշիռն ունի և վորտեղից նրան հարկավոր և սիստեմատիկաբար վանել:

Կուսակցության խնդիրն եւ ընդլայնել ու ամրապնդել մեր սոցիալիստական գերիշխող գաղութները ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում՝ ինչպես քաղաքում, այնպես և գյուղում, լիկվիդացիայի յենթարկելով կապիտալիստական տարրերին ժողովրդական տնտեսության մեջ:

Խոշոր ազգայնացված արդյունաբերության արտադրության աճումը: Յեթե 1925—26 թ. արտադրության աճումը (մինչպատերազման սուրլիներով) խոշոր ազգայնացված արդյունաբերության մեջ՝ նախկին տարվա համամատությամբ՝ կազմում եր  $42,2\%$ , 1926—27 թ.— $18,2\%$ , իսկ 1927—28 թ. կազմի  $15,8\%$ , ապա Պետպանի հնդամյա ծրագրի նախագծով արտադրության աճումը հինգ տարվա ընթացքում կազմի  $76,7\%$ , ամեն տարի ավելանալով միջին հաշվով  $15\%$ , իսկ 1931—32 թ. արդյունաբերական արտադրությունը կրկնապատկվելու յե մինչպատերազման արտադրության համեմատությամբ: Յեթե վերցնենք յերկրի թե խոշոր (պետական ու մասնավոր) և թե մանր ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրությունը, ապա արտադրության ամենամյա միջին—թվարանական աճումը Պետպանի հնդամյա նախագծով կազմելու յե մոտ  $12\%$ , վորով ամբողջ արդյունաբերական արտադրությունը 1931—32 թ. ավելանալու յե համարյա  $70\%-ով$  մինչպատերազման մակարդակի համեմատությամբ:

Ամերիկայում ամբողջ արդյունաբերական պրոդուկցիայի տարեկան աճը 1890—1895 թ. հնդամյակում կազմում եր  $8,2\%$ , 1895—1900 թ. հնդամյակում —  $5,2\%$ , 1900—1905 թ. հնդամյակում —  $2,6\%$ , 1905—1910 թ. հնդամյակում —  $3,6\%$ : Ռուսաստանում 1895—1905 թ. տասնամյակում արտադրական պրոդուկցիայի միջին տարեկան աճը կազմում եր  $10,7\%$ , 1905—1913 ութամյակում —  $8,1\%$ : Մեր սոցիալիստական արդյունաբերության, ինչպես և ամբողջ արդյունաբերության պրոդուկցիայի տարեկան աճման

առկոսը մրցանիշանային ե, վորպիսի տոկոս չունի աշխարհիս վոչ մի խոշոր կապիտալիստական յերկիր: Յեվ այդ, չնայած այն բանին, վոր ինչպես ամերիկական արդյունաբերությունը, այնպես ել մասնավանդ, ուստական մինչպատերազման արդյունաբերությունը լիուլի բեղմնավորում եյլն ուստար կապիտալի ուժեղ ներմուծումով, մինչդեռ մեր սոցիալիզացիայի յենթարկված արդյունաբերությունն ստիպված ե հիմնվել իր սեփական կուտակումների վրա: Յեվ չնայած այն հանգամանքին, վոր մեր սոցիալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը մտել ե արդեն ուկոնստրուկցիայի շրջանը, յերբ հիմ գործարանների վերասարքավորումը և նորերի կարուցումը վճռական նշանակություն ե ստանում արդյունաբերական պլուդուկցիայի ամման համար, — մեր արդյունաբերությունն ընդհանրապես և մեր սոցիալիստական արդյունաբերությունը մասնավորապես իր զարգացման տեմպով գերազանցում ե կապիտալիստական յերկրների արդյունաբերության զարգացմանը: Ինչով բացատրել մեր խոշոր արդյունաբերության զարգացման չտեսնված տեմպը: Նախ և առաջ նրանով, վոր նա սոցիալիզացիայի յենթարկված արդյունաբերություն ե, վորի չնորհիվ նա ազատ ե կապիտալիստական խմբակների հակահասարակական շահամոլությունից ե նարավորություն ունի զարգանալու ամրող հասարակության շահերի տեսակեալից: Յերկրորդ՝ նրանով, վոր նա աշխարհում գոյություն ունեցող արդյունաբերությունների համեմատությամբ տմենամեծ չափով կոնցենտրացիայի յենթարկված արդյունաբերությունն ե, վորի չնորհիվ ամեն հնարավորություն ունի հաղթահարելու մասնավոր կապիտալիստական արդյունաբերությունը: Յերրորդ՝ նրանով, վոր պետությունն իր ձեռքում ունենալով նացիոնալիզացիայի յենթարկված վարկը, արտաքին առևտուրը և ընդհանուր պետական բյուջեն ամեն հնարավորություն ունի պլանային կարգով ղեկավարելու նացիոնալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը՝ վորպես միասնական արդյունաբերական անտեսություն, վորը խոշոր առավելություններ ե տալիս ամեն աեսակի արդյունաբերության հանդեպ, վորն արագացնում ե նրա զարգացման տեմպը մի քանի անդամ: Չորրորդ՝ նրանով, վոր նացիոնալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը, վորպես ամենախոշոր և ամենաառևտեղ արդյունաբերություն, ամեն հնարավորություն ունի իրագործելու ինքնարժեքի իջեցման քաղականությունը, իջեցնելու բացթողի գները, եժանացնելու իր պրոդուկցիայն, միաժամանակ ընդարձակելով շուկան իր

պրոդրուկցիայի համար, բարձրացնելով ներքին շուկայի տարողությունը, ստեղծելով իր համար մշտական աճող աղբյուր՝ արտադրության հիտագա ծավալման համար։ Հինգերորդ՝ նրանով, վոր նացինալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը կարող է շատ պատճառներով, իմիջի այլոց, և այն պատճառով, վոր նա վարում ե գների իջեցման քաղաքականություն, զարգանալ քաղաքի և գյուղի, պլրութարիատի և գյուղացիության, աստիճանական մերձացման միջավայրում՝ հակառակ կավիտալիստական արդյունաբերության, վորը զարգանում ե գյուղացիությունը հյուծող բուրժուական քաղաքի և քայլացիող գյուղի միջև աճող թշնամության պայմաններում։ Վերջապես՝ նրանով, վոր նացինալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը հենվում ե բանվոր դասակարգի, վորպես մեր ամբողջ զարգացման հեգիմնի վրա, վորի շնորհիվ նա հնարավորություն ունի զարգացնել մեծ հեշտությամբ տեխնիկան ընդհանրապես և աշխատանքի արտադրողականությունը մասնավորապես, և կերառել արտադրության ու վարչության սացինալիզացիան, ունենալով բանվոր դասակարգի լայն մասսաների աջակցությունը, վորը չկա և չի կարող լինել արդյունաբերության կավիտալիստական սիստեմի ժամանակ։ Այդ բոլորը վկայում ե, անկասկած, մեր տեխնիկայի վերջին յերկու տարվա աճումը, արդյունաբերության նոր ճուղերի արագ զարգացումը (մեքենաշինարարություն, դաշտահաշինարարություն, տուրբոշինարարություն, ավտո-ավիոշինարարություն, քիմիա և այլն)։ — Այդ են վկայում նաև մեզ մոտ գործադրվող արտադրության սացինալիզացիան՝ բանվորական որվա կրծատման (յոթամյա բանվորական որ) և բանվոր դասակարգի նյութական և կուլտուրական անշեղ բարձրացման հետ միասին, վորը չկա և չի կարող լինել տնտեսության կավիտալիստական սիստեմի ժամանակ։ Մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացման չտեսնված ունմաքը ուղղակի և անկասկած ապացույց և խորհրդային արտադրության սիստեմի գերազանցության՝ կավիտալիստական սիստեմի հանդեպ։ Լենինն արդարացի եր, յերբ գեռ 1917 թ. սեպտեմբերին, մինչև բոլցիկների իշխանություն վերցնելն, ասում եր, թե մենք, հաստատելով պրոլետարիատի դիկտատուրան կարող ենք և պարտավոր ենք ռհանել առաջավոր յերկրներին և անցնել նրանցից նաև տնտեսապես (հատոր 14-րդ, մաս 2-րդ, եջ 213):

Կուսակցության անելիքն և պահել սոցիալիստական արդունաբերության զարգացման ձեռք բերած տեմպը և ուժեղացնել այն մոտ ապագայում՝ ստեղծելու այնպիսի նպաստավոր պայմաններ, վորոնք անհրաժեշտ են կավիտալիստական առաջավոր յերկըրներին համարու և նրանցից անցնելու համար։

Գյուղում, ընդհակառակը, մենք պրոդուկցիայի համեմատաբար դանդաղ աճ ունենք։ Յեթե 1925—26 թ. ընդհանուր պրոդուկցիայի աճը (նախապատերազմական ուռվլիներով) նախորդ տարիների համեմատությամբ կազմում եր 19,2<sup>0/0</sup>, 1926—27 թ. — 4,1<sup>0/0</sup>, իսկ 1927—28 թ. թ. կազմելու յե 3,2<sup>0/0</sup>, Պետպլանի զգալի կերպով նվազեցրած հնգամյա ուրվագծով պրոդուկցիայի աճը հինգ տարվա ընթացքում կազմելու յե 24<sup>0/0</sup>, ունենալով արտադրանքի տարեկան միջին-թվաբանական աճ 4,8<sup>0/0</sup> և գյուղատնտեսական պրոդուկցիայի մեցածում 1931—32 թվին 28—30<sup>0/0</sup>։ Նախապատերազմական պրոդուկցիայի համեմատությամբ։ Սա գյուղատնտեսական պրոդուկցիայի քիչ թե շատ տանելի տարեկան աճ ե, սակայն վոչ կավիտալիստական յերկրների համեմատությամբ մրցանիշային կարելի յե համարել, վոչ ել ապագայում գյուղատնտեսության և մեր նացինալիզացիայի յենթարկված արդյունաբերության միջև անհրաժեշտ հավասարակշռություն պահպաննու համար բավարար։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների գյուղատնտեսության ընդհանուր պրոդուկցիայի տարեկան աճը հավասար ե 1890—1900 թ. տասնամյակում — 9,3<sup>0/0</sup>, 1900—1910 թ. տասնամյակում — 3,1<sup>0/0</sup>, 1910—1920 թ. տասնամյակում — 1,4<sup>0/0</sup>, մինչդաշտերազման Ռուսաստանում գյուղատնտեսական պրոդուկցիայի տարեկան աճը 1900—1911 թ. թ. տասնամյակում կազմում եր 3,2<sup>0/0</sup>-ից մինչև 3,5<sup>0/0</sup>։ Ճիշտ ե, մեր գյուղատնտեսական պրոդուկցիայի տարեկան աճը 1926—27 թ.-ից մինչև 1931—32 թ. հնգամյակում կազմելու յե 4,8<sup>0/0</sup>. ըստ վորում, ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսական պրոդուկցիայի աճման տոկոսը խորհրդային պայմաններում մեծացել ե՝ կավիտալիստական Ռուսաստանի շրջանի աճման համեմատությամբ։ Սակայն չպետք ե մոռանալ, վոր մինչդեռ նացինալիզացիայի յենթարկված արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիան յերկու անգամ մեծանալու յե 1931—32 թ. մինչդաշտերազման արդյունաբերական պրոդուկցիայի համեմատությամբ, ամբողջ արդյունաբերության պրոդուկցիան 1931—32 թ. գերազանցնելու յե մինչ-

պատերազմյան մակարդակին մոտ  $70\%$ , գյուղատնտեսական պրոդուկցիան գերազանցնելու յի մինչպատերազմյան գյուղատնտեսական պրոդուկցիային միայն  $28 - 30\%$ , այսինքն ավելի պակաս, քան մեկ յերբորդականով։ Այդ պատճառով մեր գյուղատնտեսության զարգացման տեմպը՝ չի կարելի բավական գոհացուցիչ համարել։ Ինչով բացատրել գյուղատնտեսության զարգացման այդպիսի դանդաղ տեմպը մեր նացիոնալիզացիայի յենթարկված արդյունաբերության զարգացման տեմպի համեմատությամբ։ Դա բացատրվում ե՝ ինչպես մեր գյուղատնտեսական տեխնիկայի անշափ յետամացությամբ և գյուղի կուլտուրական կացության խիստ ծանր մակարդակով, այնպես ել մասնավանդ նրանով, վոր մեր ցրված գյուղատնտեսական արդյունաբերությունը չունի այն առավելությունները, վոր ունի մեր խմբված նացիոնալիզացիայի յենթարկված խոշոր արդյունաբերությունը։ Գյուղատնտեսական արդյունաբերությունը նախ և առաջ նացիոնալիզացիայի չի յենթարկված և չի միացված, այլ ցրված և կտոր-կտոր։ Նա պլանային կարգով չի տարվում և յենթարկվում և գեռևս մեծ մասմբ մասն արտադրության տարեքին։ Նա միացված և ամրացված չե կոլեկտիվիզացիայի գծով, վորի պատճառով գեռևս հարմար միջոց ե ներկայացնում կուլակային տարրերի կողմից շահագործվելու համար։ Այդ հանգամանքները զրկում են ցրված գյուղատնտեսությունը խոշոր միացյալ և պլանային կարգով տարվող արտադրության այն հսկայական առավելություններից, վոր ունի մեր նացիոնալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը։

Վերև ե գյուղատնտեսության յերկը։ Գուցե ընդհանրապես արդյունաբերության և մասնավորապես նացիոնալիզացիայի յենթարկված մեր արդյունաբերության զարգացման տեմպի դանդաղցումը. վոչ մի գեպքում։ Դա կլիներ ամենաբերակցիոն, վոչ պրոլետարական ուստոպիս։ (Ճայներ՝ «Ճիշտ ե»)։ Նացիոնալիզացիայի յենթարկված արդյունաբերությունը պետք ե զարգանա արագ տեմպով։ Դա յե մեր գեպի սոցիալիզմ առաջ շարժվելու յերաշխիքը, դա ե հետո գյուղատնտեսության ինդուստրացման յերաշխիքը։ Վերտեղ ե ապա յելքը։ Յելքը մանր, ցրված գյուղացիական տըստեսությունների՝ խոշոր միացյալ տնտեսություններին անցնեն ե, հողի համայնական մշակումով, նոր բարձր տեխնիկայով հողի կոլեկտիվ մշակումով։ Յելքն այն ե, վոր մանր և ամենամանը գյուղացիական տնտեսություններն աստիճանաբար և անշեղ

կերպով վոչ ճնշման, այլ ցուցադրման և համոզման կարգով միացնենք խոշոր տնտեսությունների մեջ՝ հողի համայնական ընկերական կոլեկտիվ մշակման հիմունքներով, կիրառելով գյուղատընտեսական մեքենաներ և տրակտորներ, կիրառելով հողագործության ինտենսիվիկացիայի գիտական միջոցները։ Ուրիշ յելք չկա։ Առանց դրան՝ մեր գյուղատնտեսությունը չի կարող վոչ ճամսել և վոչ ել անցնել գյուղատնտեսական տեսակետից ամենազգագացած կապիտալիստական յերկրներից (Կանադա) և այլն։ Մեր բոլոր միջոցները՝ սահմանափակելու գյուղատնտեսության կապիտալիստական տարրերը, զարգացնելու գյուղում սոցիալիստական տարրերը, գրավելու գյուղացիական տնտեսությունները կոռպերատիվ զարգացման հունի մեջ և ուժեղացնելու պետության գյուղի վրա պլանային ներկործությունը՝ ինչպես մատակարաման և սպառման, այնպես ել արտադրության կողմից գյուղացիական տնտեսությունները կոռպերատիվ զարգացման նաև սպառելու ուղղութեամբ, մենք հետեւյալ նվաճումներն ունենք. գյուղատնտեսական կոռպերացիան համախմբում և այժմ բոլոր գյուղացիական տնտեսությունների մոտ մեկ յերրորդը։ Սպառողական կոռպերացիան միծացըրել և իր մատակարաման ընդգրկումը 30% -ից 1924—25 թ. մինչև  $50,80\%$  1926—27 թ.։ Կոռպերատիվային և պետական մարմինները մեծացրել են գյուղատնտեսական պրոդուկցիայի վաճառքի ընդգրկումը 55,7% -ից 1924—25 թ. մինչև  $63\%$  1926—27 թ.։ Ինչ վերաբերում ե գյուղատնտեսության ընդգրկմանն, այսպես ասած, ներքուստ, գյուղատնտեսական արտադրության գծով, այդ բնագավառում չափազանց քիչ բան ենք արել։ Բավական ե ասել, վոր կոլեկտիվ և խորհրդացին տնտեսությունները տալիս են ներկայումս ամբողջ գյուղատնտեսական պլոտությացիայի ընդամենը  $20\%$  և ապրանքային պրոդուկցիայի  $70\%$  -ից քիչ ավելին։ Քիչ չեն, ինարկե, սրա որյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները։ Նախ մեր աշխատավորների անշնորք

ի արել կուսակցությունն այդ ուղղությամբ յերկու տարվա ընթացքում։ Քիչ բան չի արված, բայց վոչ այն բոլորը, ինչ կարելի եր անել։ Ինչ վերաբերում ե գյուղատնտեսության ընդգրկմանը, այսպես ասած, արտաքուստ, գյուղատնտեսությանն անրաժեշտ գործիքներ հայթայթելու, գյուղատնտեսական միջոցներն սպառելու ուղղութեամբ, մենք հետեւյալ նվաճումներն ունենք. գյուղատնտեսական կոռպերացիան համախմբում և այժմ բոլոր գյուղացիական տնտեսությունների մոտ մեկ յերրորդը։ Սպառողական կոռպերացիան միծացըրել և իր մատակարաման ընդգրկումը 30% -ից 1924—25 թ. մինչև  $50,80\%$  1926—27 թ.։ Կոռպերատիվային և պետական մարմինները մեծացրել են գյուղատնտեսական պրոդուկցիայի վաճառքի ընդգրկումը 55,7% -ից 1924—25 թ. մինչև  $63\%$  1926—27 թ.։ Ինչ վերաբերում ե գյուղատնտեսության ընդգրկմանն, այսպես ասած, ներքուստ, գյուղատնտեսական արտադրության գծով, այդ բնագավառում չափազանց քիչ բան ենք արել։ Բավական ե ասել, վոր կոլեկտիվ և խորհրդացին տնտեսությունները տալիս են ներկայումս ամբողջ գյուղատնտեսական պլոտությացիայի ընդամենը  $20\%$  և ապրանքային պրոդուկցիայի  $70\%$  -ից քիչ ավելին։ Քիչ չեն, ինարկե, սրա որյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները։ Նախ մեր աշխատավորների անշնորք

մոտեցումը գործին և անբավարար ուշադրությունը, ապա դյուզացիների պահպանողականությունը և յետամասցությունը, այնուհետև գյուղացիներին հողի համայնական մշակմանը փոխադրելու անհրաժեշտ միջոցների պակասը և այլն։ Իսկ միջոցներ քիչ չեն պահանջվում։ Լենինն ասում եր 10-րդ համագումառում, վոր մինը գյուղատնտեսությունը պետական կամ կոլլեկտիվ սկզբունքին յենթարկելու անհրաժեշտ ֆոնդեր չունենք դեռևս։ Յես կարծում եմ, վոր այժմ այդ ֆոնդերը մենք կունենանք, և նրանք պետք ե աճեն ժամանակի ընթացքում։ Պակայն, գործն այնպիսի ընթացք և ստանում, վոր առանց ցրված գյուղացիական տնտեսությունների միացման, առանց նրանց հողի համայնական մշակման փոխադրելու՝ հնարավորություն չեա առաջ տանելու լուրջ կերպով վոչ գյուղատնտեսության ինտենսիվիկացիան, վոչ ել մեքենացումը, հնարավորություն չկա գործն այնպես դնելու, վոր մեր գյուղատնտեսությունն իր զարգացման տեմպով կարողանա համել կապիտալիստական յերկրներին, ինչպես կանագան ե։ Այդ պատճառով մեր գյուղական աշխատավորների ուշադրությունը հարկավոր ե կենտրոնացնել այդ կարեոր գործի վրա։ Յես կարծում եմ, վոր հողգողկոմատների և գյուղատնտեսական կոոպերացիայի մարմիններին կից վարձու կետերը խոշորագույն դեր են կատարելու արդ գործում։ Անա մի որինակ, թե ինչպես են խորհըրդային անտեսություններն ոգնում գյուղացիներին հողի կոլլեկտիվ մշակմանն անցնելու, վորը շատ ձեռնուու յե գյուղացիներին։ Յես ի նկատի ունեմ ուկրայինական խորհրդային տնտեսությունների միության տրակտորներով զոյց տված ոգնությունը Ողեսաայի սայոնի գյուղացիներին, վորի առթիվ վերջեռու «Իզվեստիա»-յում այդ գյուղացիների շնորհակալական նամակն եր տպված ցույց տված ոգնության համար։ Թույլ տվեր կարգալ նամակի բովանդակությունը։ (Զայներ՝ «Խնդրում ենք»)։

«Մենք, Շեվչենկոյի, Կրասինի, Կալինինի անվան «Չերվոնագիրկա» և «Վոսխոգյաշերե սոլնցե» խուտորների բնակիչներս, հայտնում ենք մեր ամենախոր շնորհակալությունը Խորհրդային իշխանությանն այն խոշոր ոգնության համար, վոր մեզ ցույց տվեց մեր տնտեսության վերականգնման գործում։ Մեզանից մեծ մասը չքափորներ են, առանց ձիերի, առանց ինվենտարի։ Եթինք կարողանում մշակել մեզ հատկացրած հողը և ստիպված եյինք հողը կապալով տալ տեղացի կուլակներին՝ ի հաշիվ բերուի մի մասի։ Բերքը շատ վատ եր, վորովհետեւ, ինչպես հայտնի յե,

կապալառում լավ չի մշակում ուրիշի հողը։ Այն փոքր վարկերը, վոր ստանում եյինք պետությունից, ծախսում եյինք մեզ վրա և տարեց-տարի ավելի եյինք աղքատանում։ Այս տարի մեզ մոտ յեկավ ուկրայինական խորհրդային տնտեսությունների միության ներկայացուցիչը և առաջարկեց մեզ դրամական վարկերի փոխարեն տրակտորներով մշակել մեր հողերը։ Բոլորը, բացի առանձին կուլակներից, տվեցին իրենց համաձայնությունը, թեպետ քիչ եյին հավատում, թե աշխատանքը կանոնավոր կկատարվի։ Մեր բախտից և կուլակների ջգրու տրակտորները վարեցին թե անմշակ և թե հանգիստ թողած հողերը, վարեցին միենույն հողը հինգ-վեց անգամ, ցաքանցիցն՝ աղքը խոտից մաքրելու համար և, վերջապես, ցանցիցն ամբողջ դաշտը մաքուր տեսակի ցորենով։ Այժմ արդեն կուլակներն այլևս չեն ծիծաղում տրակտորային խմբի աշխատանքի վրա։

Այս տարի մեր ուայնում գյուղացիներն անձրեների բացակայության պատճառով աշնանացան համարյա չեն ցանել, իսկ ցանած հողերը զեռ ծիլեր չեն տվել, մինչդեռ մեր դաշտերում հարյուրավոր գեսյատիններ կանաչել և հիանալի ցորենը, վորը չի նկատվում նույնիսկ գերմանացիների հարուստ գաղութիւններում։ Բացի ցորենի աշնանացան ցանքսերից, արակտորները շուռ տիֆն գարնանացանի ամբողջ հողը։ Այժմ մենք վոչ մի գեսյատին չըմշակված կամ կապալով տված հող չունենք։ Զեա մեզ մոտ վոչ մի չքափոր գյուղացի, վորը մի քանի գեսյատին աշնանացան ցորեն չունենա։ Տրակտորների այն աշխատանքներից հետո, վոր մենք տեսանք, չենք ուզում այլևս շարունակել չքափորի մասն տնտեսություն և վորոշեցինք կաղմակերպել համայնական տրակտորային տնտեսություն, վորտեւ չեն լինի այլևս գյուղացիական զատ-զատ, կտոր-կտոր ցանքսեր։

Մեզ համար այդպիսի տրակտորային տնտեսություն կազմակերպելու գործն իր վրա վերցրեց Տարաս Շեվչենկոյի անվան խորհրդային տնտեսությունը, վորի հետ մենք պայմանագիր կնքեցինք»։ («Իզվեստիա» № 267, նոյեմբերի 22, 1927 թ.)։ Ավելի շատ այսպիսի որինակներ, ընկերներ, և այն ժամանակ կարելի կլինի շատ ավելի առաջ տանել այդ գործը։

Կուսակցության ինդիրն ե՝ ընդլայնել գյուղատնտեսության ընդգրկումը վաճառքի և մտակարարման գծով կոոպերացիայի և պետական մարմինների կողմից, գյուղում մեր շինարարության հերթական գործնական խնդիրը համարել ցրված գյուղացիական

տնտեսությունների աստիճանական փոխադրումը միացած խոշոր տնտեսությունների ուղարկելու վրա, հողի համայնական կողեկանի մշակումը հողագործության ինտենսիվիկացիայի և մեքենացման հիմունքներով, այն հաշվով, վոր զարգացման այդ ուղին ամենակարևոր միջոցն ե արագացնելու գյուղատնտեսության զարգացման տեմպը և հաղթահարելու գյուղում կապիտալիստական տարրերը: Այդ և ընդհանուր առմամբ նվաճումների արդյունքները գյուղատնտեսական շինարարության բնագավառում: Դա չի նշանակում, թե դրությունը մեզ մոտ միանգամայն լավ է այդ բնագավառում: Վոչ, ընկերներ, մեզ մոտ դեռ շատ բան լավ չե: Մենք ունենք, որինակ, ապրանքային սովոր տարրեր: Դա մեր տնտեսության մինուն ե: Բայց այդ մինունը դեռևս, դժբախտաբար, անխուսափելի յե: Վորովհետև այն փաստը, վոր մենք գործիքների և արտադրության միջոցների արտադրությունն ավելի արագ տեմպով ենք զարգացնում, քան թեթև արդյունաբերությունը, ինքնին նախորշում ե, վոր մենք մոտակա մի շարք տարրիների ընթացքում դեռևս ապրանքային սովոր տարրեր կունենանք: Բայց մենք այլ կերպ չենք կարող վարկել, յեթե ուզում ենք առաջ շարժել ամեն կերպ յերկրի ինդուստրիալիզացիան: Կան մարդիկ, որինակ մեր ոպողիցիան, վորոնք իւնց իդեոլոգիայի համար նյութեր են քաղում սպեկուլյանտային պոչերում (հերթաշար) և աղաղակում են ապրանքային սովոր մասն, պահանջելով միաժամանակ «գերինդրուտիվիզացիա»: Բայց դա դատարկ բան ե, ընկերներ: Այդպես կարող են խոսել միմիայն համբակները: Մենք չենք և չպետք ենք գուցնենք ծանր արդյունաբերությունը՝ թեթև արդյունաբերության զարգացման համար: Ենվ վերջապես, անկարելի յե զարդացնել թեթև արդյունաբերությունը բավարար չափով՝ առանց ծանր արդյունաբերության արագ զարգացման: Կարելի յեր ավելացնել պատրաստ ապրանքների ներմուծումը և ծածկել այդպիսով ապրանքային սովոր, ինչպես պնդում եր ոպողիցիան: Բայց դա հիմարություն ե, վորից պետք ե հրաժարվեր ոպողիցիան: Ուրիշ հարց ե, թե վորքան գործնական կերպով ե տարրում մեզ մոտ ապրանքային սովոր տարրերի թուլացման գործը, վորն ըստ ամենայնի հնարավոր ե մեր պայմաններում և վորը պնդել ե միշտ կուսակցությունը: Ենա կարծում եմ, վոր հենց այդ բնագավառում ել ամեն ինչ աեղին չե մեզ մոտ: Այնուհետև մենք ունենք այսպիսի փաստ, ինչպես կապիտալիստների համեմատաբար վոչ փոքր քանակությունն ինչպես արդյունաբերության, այնպես ել առերրի:

բնագավառում: Այդ տարրերի տեսակաբար կշիռն այնքան ել փոքր չե, ինչպես յերեխն յերեակայում են մեզ մոտ մի քանի ընկերներ: Դա ել մինուս և մեր տնտեսության հաշվեկշռում: Յես կարդացի վերջերս կարինի շատ հետաքրքիր գիրքը՝ «Մասնավոր կապիտալ ԽՍՀՄ մեջ»: Յես խորհուրդ կտայի ընկերներին կարդալ այդ գրքույկը: Այդ գրքույկում դուք կտեսնեք, թե ինչպիսի ճարդ պիտի պարզաբան կապիտալիստը պրոմիսային կոռպերացիայի, գյուղատնտեսական կոռպերացիայի և այս կամ այն առևտրական մարմինների գրոշի տակ: Արվիւմ ե արդյոք ամեն ինչ, վորպեսզի սահմանափակվին, կրծատվեն, դուրս վանվեն վերջապես ժողովրդական տնտեսության վշանից կապիտալիստական տարրերը:

Կարծում եմ, վոչ ամեն ինչ: Ինձ հայտնի յե, որինակ, վոր տնայնագործական արդյունաբերության բնագավառում ընդհանրապես և կաշեգործության ու տեքստիլ արդյունաբերության բնագավառում մասնավորտպես՝ կան վոչ քիչ թվով նոր միլիոններներ, վորոնք շահագործում են տնայնագործներին և առհասարակ մանր արտադրողներին: Արվիւմ ե արդյոք ամեն ինչ, վորպեսզի տնտեսապես շրջապատենք և դուրս վանենք այդ շահագործող տարրերը, կապելով տնայնագործներին կոռպերացիայի կամ պետական մարմինների հետ: Հազիվ թե կարելի լինի կասկածել վոր շատ բան չի արվում այդ բնագավառում: Մինչդեռ այդ հարցը խոշորագույն նշանակություն ունի մեզ համար:

Այնուհետև մենք ունենք գյուղում կուլակության վորոշակում: Դա ևս մինուս և մեր տնտեսության հաշվեկշռում: Արվիւմ ե արդյոք ամեն ինչ, կուլակությունը տնտեսապես սահմանափակելու, մեկուսացնելու համար: Կարծում եմ, վոչ ամեն ինչ: — Ճիշտ չեն այն ընկերները, վորոնք կարծում են, թե կարելի յե և պետք ե վերջ տալ կուլակին վարչական կարգով Պետական Քաղաքական Վարչության միջոցով: — կարգադրել, զրոշմել և վերշակետ: Դա հեշտ միջոց ե, սակայն վոչ այսքան իրական: Կուլակին պետք ե հաղթահարել տնտեսական միջոցներով: հեղափոխական որինակությունը դատարկ խոսք չե: Դա չի բացասում, ինարկե, վորոշ անհրաժեշտ վարչական միջոցների գործադրություն կուլակի դեմ: Բայց վարչական միջոցները չպետք ե փոխարինեն տնտեսական միջոցներին: Պետք ե լուրջ ուշադրություն գարձնել կուսակցական գծի այլասերման վրա կուլակության դեմ պայքարի

բնագավառում՝ մեր կոռպերատիվ մարմինների պրակտիկայում, մանավանդ գյուղատնտեսական վարկի գծով:

Մենք ունենք այսուհետև այնպիսի փաստ, ինչպես արդյունաբերության ինքնարժեքի և արդյունաբերական ապրանքների բացթողի գների, մանավանդ քաղաքային ապրանքների հատավաճառ գների իջեցման չափազանց գանգազ տեմպը: Դա ևս մինուս և մեր տնտեսական շինարարության հաշվեկոռում: Չի կարելի չիշտակել այստեղ այն խոշոր դիմադրությունը, վոր տեսնում ենք պետական, կոռպերատիվ և կուսակցական ապրատիվ կողմից: Մեր ընկերներն, ըստ յերկութիւն, չեն հասկանում, վոր արդյունաբերական ապրանքների գների իջեցման քաղաքականությունը հիմնական ծագներից մեկն և մեր արդյունաբերության բարելավման, շուկայի ընդարձակման և հենց այն աղբյուրի ուժեղացման, վորի հիմնա վրա կարող ե զարգանալ մեր ինդուստրիան: Հազիվ թե կարելի լինի կասկածել, վոր միայն այդ իներտ ապարատի, գների իջեցման քաղաքականության կիրառման գործում այդ ապարատի դիմադրության դեմ անխնա պայքարի միջոցով միայն կարելի կլինի լիկվիդացիայի յենթարկել այդ մինուսը: Վերջապես, մենք ունենք այնպիսի մինուսներ, ինչպես ողին մեր բյուջեյում և արտաքին առևտրի զարգացման ծայրահեղ դանդաղ տեմպն ու ուղերժների պակասը: Կարծում եմ, վոր կարելի կլիներ աստիճանաբար նվազեցնել ողին և ընդարձակել այնպիսի աղբյուրներ, ինչպես ըադին և և կինոն: Իսկապես, ինչու մեր ձեռքը չփերցնենք այդ կարևորագույն միջոցները և հարվածային մարդիկ չնշանակենք այդ գործում իսկական բոլցեկներից, վորոնք կարող լինեն աջղությամբ մեծացնել գործը և վերջապես հսարավորություն տալ կրծատելու ողու գործը: Ինչ վերաբերում և արտաքին առևտրին, ինձ թվում ե, վոր մեր տնտեսական ընտագմանի մի շարք դժվարություններ առաջանում են անբարար արտահանության (եքսպորտ) պատճառով:

Կարծի մենք, արդյոք, առաջ քաշել արտահանության գործը: Կարծում եմ, վոր կարող ենք: Արգման և արդյոք ամեն ինչ, արտահանությունն ըստ ամենայնի ընդարձակելու համար: Կարծում եմ՝ վոչ ամեն ինչ: Նույնը պետք ե ասել և ուղերժների մասին: Իրավացի չեն այն ընկերները, վորոնք յերենն թեթևամտորեն, իսկ յերենն ել գործին անծանոթ լինելու պատճառով, առևտ են, թե մենք ուղերժներ չունենք: Վոչ, ընկերներ, մեզ մոտ կան փոքր ուղերժներ. մեր պետության բոլոր մարմինները՝

գավառականից և նահանգականից սկսած մինչև շրջանային և կենտրոնական մարմիններն աշխատում են վորև բան պահել և որվա համար: Բայց այդ ուղերժները քիչ են: Պետք է խոստովանել այդ: Այդ պատճառով պետք է ուղերժները մեծացնել վորքան հնարավոր ե, նույնիսկ յերենն ի հաշիվ ընթացիկ կարիքների կրծառման: Սրանք են, ընկերներ, մեր տնտեսական շինարարության թերի կողմերը, վորոնց վրա պետք ե ուշագրություն դարձնել և վորը պետք ե լիկվիդացիայի յենթարկել անպայման՝ ավելի արագացած տեմպով առաջ շարժվելու հսարավորություն ունենալու համար:

Եերկրի տնտեսական դրության վերաբերյալ հարցերից անցնենք քաղաքական կացության վերաբերյալ հարցերին:

### Բանվոր դասակարգը

Թվեր՝ բանվոր դասակարգի և ընդհանրապես վարձու աշխատանքի անձանց քանակական աճման մասին: Վարձու աշխատանքի անձանց թիվը և (առանց գործադուրկների) 1924—25 թ. — 8.215.000, 1926—27 թ. 10.346.000: Աճում՝ 25%: Սրանցից ֆիզիկական աշխատանքի բանվորներ են, ներառյալ գյուղատնտեսական և սեղոնային բանվորները, 1924—25 թ. 5.448.000, 1926—27 թ. — 7.060.000 հոգի: Աճում՝ 29,6%: Սրանցից խոշոր արդյունաբերության բանվորներ 1924—25 թ. 1.734.000 հոգի, 1926—27 թ. — 2.388.000: Աճում՝ 33%:

Բանվոր դասակարգի նյութական դրությունը: Ազգային յեկամուտի մեջ վարձու աշխատանքի անձանց բաժինը կազմել է 1924—25 թ.—24,1%՝ իսկ 1926—27 թ. այդ մասն աճել է մինչև 29,4%՝ վորը գերազանցում և վարձու աշխատանքի անձանց բաժնի մինչպատերազմյան չափին ազգային յեկամուտ 30%-ով, մինչդեռ մյուս սոցիալական խմբակների, վորոնց թվում և ըստքուագիայի, բաժինը նվազել է այդ ժամանակամիջոցում (որինակ, ըստքուագիայի բաժինն ընկնել է 5,5%-ից մինչև 4,8%):

Բանվորների իրական աշխատավարձն ամբողջ պետական արդյունաբերության մեջ առանց հավելումների կազմում եր 1924—25 թ.—25,18 մուկովյան պայմանական ոռւբլի ամսական, 1926—27 թ.—32,14 ոռւբլի, վորը տալիս է հավելում յերկու տարվա ընթացքում 27,6% և գերազանցում և մինչպատերազմյան մակարդակին 5,4%-ով:

Հավելումներով (սոցապահովագրություն, կուտկարիքներ, կոմունալ վճարներ և այլն) աշխատավարձը կազմել է 1924—25 թ. մինչպատերազմյանի  $101,5^0/0$ -ը, 1926—27 թ. — մինչպատերազմյանի  $128,4^0/0$ : Սոցիալական ապահովագրության ֆոնդերն աճել են 461 միլիոն ռուբլուց 1924—25 թ. մինչև 852 միլ. 1926—27 թ., այսինքն  $85^0/0$ -ով, վորը հնարավորություն տվեց հանգստյան տների և սանատորիաների միջոցով անցկացնել 513,000 մարդ, ապահովել նպաստներով 460,000 անգործ և 700,000 կենսաթոշակավոր աշխատանքի և քաղաքացիական պատերազմի ինվալիդներ) և բաց թողնել հիվանդ բանվորներին հիվանդության ժամանակամիջոցի լրիվ աշխատավարձը: Բնավորական բնակարանային շինարարության վրա յերկու տարի առաջ՝ 1924—25 թ. ծախսվել է 132 միլիոնից ավել, 1925—26 թ. — 230 միլիոնից ավել, 1926—27 թ. — 282 միլիոն, իսկ 1927—28 թ. ծախսվելու յե 391 միլիոնից ավել, հաշվելով այստեղ և կենտգործկոմի մանիքստափի վորոշած 50 միլիոնը: Ըստամենն անցած յերեք տարվա ընթացքում բանվորական բնակարանային շինարարության վրա, առանց անհատականի, ծախսված է՝ արդյունաբերության, տրանսպորտի գործկոմների և կոռոպերացիայի գծով 644,7 միլ. ռուբ., իսկ 1927—28 թ. նշանակվածի հետ միասին — 1036 միլ. ռուբ.: Այդ հատկացումները յերեք տարվա ընթացքում հնարավորություն տվին կառուցելու 4,594,000 քառ. մետր բնակարանային տարածություն և բավարարել 207 հազար բանվորի, իսկ ընտանիքների հետ միասին մոտ 900,000 մարդու:

Դորժագրկության հարցը: Յես պետք է ասեմ, վոր այս հարցում տարածայնություններ կան պրօֆմիությունների համամիութենական կենտրոնական խորհրդի և Աշխատանքի Ժողկոմատի միջև: Յես վերցնում եմ Աշխատողկոմատի թվերը, վորով հետեւ նրանք իսկապես ընդգրկում են աշխատանքի բորսաների հետ կապված գործազուրկ տարրերը: Աշխատողկոմատի տվյալների համաձայն, գործազուրկների թիվը յերկու տարվա ընթացքում աճել է 950,000-ից մինչև 1,048,000: Մրանցից ինդուստրիալ բանվորներ են —  $16,5^0/0$ , իսկ ինտելիգենտական աշխատանքի անձինք և վոչ վորակյաներ  $74^0/0$ : Այդափառվ, մեր գործազուրկության հիմնական աղբյուրը գյուղի գերաբնակչությունն ե, իսկ արդյունաբերության չհագեցումն ինդուստրիալ բանվորների վորոշ քանակությամբ յերկրորդ աղբյուր ե ներկայանում: Արդյունքը՝ ամբողջ բանվոր դասակարգի նյութական մակարդակի անկատակած

բարձրացումը: Կուտակցության խնդիրն է՝ շարունակել այդ գիծը բանվոր դասակարգի նյութական և կուտուրական դրության հետազա բարելավման և բանվոր դասակարգի աշխատավարձի հետազա բարձրացման ուղղությամբ:

### Գյուղացիությունը

Յես կարծում եմ, վոր գյուղացիության շերտավորման հարցի առթիվ չարծի թվեր բերել, վորովհետեւ իմ գեկուցումն առանց այն ել յերկարեց, իսկ թվերը բոլորին հայտնի յեն: Կասկած չկա, վոր պլութառական գիկտատուրայի որով տեղի ունեցող շերտավորումը չի կարելի նմանեցնել կապիտալիստական կարգերի ժամանակ կատարվող շերտավորման: Կապիտալիզմի ժամանակ աճում են ծայրերը՝ չքավորությունը և կուլակությունը, իսկ միջակ գյուղացին հալչում ե: Մեզ մոտ, ընդհակառակը, աճում է միջակ գյուղացին ի հաշիվ չքավորության վորոշ մասի, վորը գառնում է միջակ, աճում է կուլակը, իսկ չքավորությունը պակասում է: Այդ փաստը վկայում է, վոր հողագործության կենտրոնական գեմքը մնում է միջակ գյուղացին, ինչպես վոր եր: Բլոկը նրա հետ, նենված չքավորության վրա, վճռական նշանակություն ունի մեր ամբողջ շինարարության, պրոլետարիատի գիկտատուրայի համար:

### Գյուղի նյութական դրության ընդհանուր աճը

Մենք թվեր ունենք գյուղացիական բնակչության յեկամուտների աճման մասին: Գյուղացիական բնակչության յեկամուտները յերկու տարի առաջ՝ 1924—25 թ. հավասար ենին — 3,548,000,000 ռ., 1925—26 թ. այդ յեկամուտներն աճեցին մինչև 4,792,000,00 ռուբ., այսինքն  $35,1^0/0$ -ով՝ գյուղացիական բնակչության նույն ժամանակամիջոցում ունեցած ընդամենը  $2,38^0/0$  աճման գեղքում: Դա անկանության պատճեն է, վոր գյուղի նյութական դրությունը լավանում է: Դա չի նշանակում, վոր գյուղացիությունը բարելավել է իր նյութական դրությունը յերկրի բոլոր ռայոններում: Հայտնի յե, վոր տեղ-տեղ այդ յերկու տարվա ընթացքում տարբեր բերքեր ստացվեցին, 1924 թ. յերաշտի հետեւանքները գեռ վերացված չեն: Այստեղից ել՝ պետական ոգությունն աշխատավոր գյուղացիանն ընդհանրապես և գյու-

զայիտական չքավորությանը՝ մասնավորապես։ Պետության ոգնությունն աշխատավոր գյուղացիությանը 1925 թ. կազմում եր 373 միլ. ռ., 1926 թ. — 373 միլ., և 1927 թ. — 427 միլ. ռուբ., 1925 — 26 տարում գյուղական չքավորագույն անտեսություններին հատկացվել ե 38 միլ. ռուբ., հարկային արտոնություններ չքավոր անտեսություններին 44 միլ. ռուբ., չքավորագույն գյուղացիությանը ապահովագրական արտոնություններ 9 միլ. ռուբ., ընդամենը 91 ռուբ.։ Հատուկ ոգնություն գյուղական չքավորությանը 1926 — 27 թ. արված ե նույն ռուբրիկաներով՝ չքավորագույն անտեսություններին 39 միլ. ռուբլի, հարկային արտոնություններ 52 միլ. ռուբ. և ապահովագրական արտոնություններ չքավորագույն անտեսություններին — 9 միլ. ռուբ.։ Արդյունքը՝ գյուղացիության հիմնական մասսաների նյությական դրության բարելավումը։

Կուսակցության խնդիրն ե՝ շարունակել այդ գիծը՝ գյուղացիության, նախ և առաջ գյուղացիական չքավորության հիմնական մասսաների նյութական և կուլտուրական գրության հետագա բարելավման համար, ամրացնել բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ, բարձրացնել բանվոր դասակարգի և նրա կուսակցության հեղինակությունը գյուղացիության համար ամբողջությամբ առաջ գալու համար։ Այդ գործությունն իր արմատներն ունի կյանքում։ Յետ խոսեցի մեր ժողովրդական տնտեսության աճման, մեր արդյունաբերության աճման մասին, ժողովրդական տնտեսության սոցիալիստական տարրերի աճման մասին, մասնավորի տեսակարար կշռի անկման մասին, մասն առևտրականներին գուրս մղելու մասին։ Սակայն ինչ ե նշանակում այդ։ Դա նշանակում է, վոր յեթե մեր արդյունաբերությունը, մեր առևտրական մասին, մասնավորի տեսակարար կազմակերպությունը, մեր առևտրական մասին մարմիններն աճում են, ապա տասնյակի հազար միջակա առևտրական մասին մասն աճում է։

### Նոր բուրժուազիան յեվ ինտելիգենցիան

Նոր բուրժուազիայի բնորոշ գիծն այն ե, վոր նա, հակառակ բանվոր դասակարգին և գյուղացիությանը, հիմք չունի գոռ լինելու խորհրդային իշխանությունից։ Նրա գժգոհությունը պատահական բան չե։ Այդ գժգոհությունն իր արմատներն ունի կյանքում։ Յետ խոսեցի մեր ժողովրդական տնտեսության աճման, մասն արդյունաբերության աճման մասին, ժողովրդական տնտեսության սոցիալիստական տարրերի աճման մասին, մասնավորի տեսակարար կշռի անկման մասին, մասն առևտրականներին գուրս մղելու մասին։ Սակայն ինչ ե նշանակում այդ։ Դա նշանակում է, վոր յեթե մեր արդյունաբերությունը, մեր առևտրական մասին, մասնավորի տեսակարար կազմակերպությունը, մեր առևտրական մասին մարմիններն աճում են, ապա տասնյակի հազար միջակա առևտրական մասին մասն աճում է։

Վորքան մանր և միջակ խանութներ են փակվել այս յերկու տարվա ընթացքում։ Հազարներ վորքան մանր արդյունագործներ են պրոլետարացել։ Հազարներ վորքան ծառայող տարրեր են

գուրս մնացել մեր պետական ապարատի շտաբների կրծատման ժամանակ։ Հարյուր հազարներ Մեր արդյունաբերության, մեր առևտրական և կոռպերատիվ մարմինների առաջնազգումը, մեր պետապարտի բարեկավումը պլյուս և բանվոր դասակարգի, գյուղացիության հիմնական մասսաների համար, և մինում՝ նոր բուրժուազիայի, միջին շերտերի ընդհանրապես և քաղաքի միջին շերտերի համար մասսավորապես։ Կարելի յի արդյոք զարմանալ, վոր այդ շերտերի մեջ աճում է գժգոհությունը խորհրդային իշխանությունից։ Պարզ ե, չի կարելի զարմանալ։ Այստեղից ել հականական տրամադրություններն այդ միջավայրում։ Այստեղից ել՝ սմբնավեխովյան իդեոլոգիան՝ վորպես մոդայի ապրանք նոր բուրժուազիայի քաղաքական շուկայում։

Սխալ կլիներ կարծեվ թե ամբողջ ծառայող տարրը, ամբողջ ինտելիգենցիան դժգոհության, արտունջի և խմորման վիճակ և ապրում խորհրդային իշխանության գեմ։ Դժգոհության աճման հետ նոր բուրժուազիայի խորքերում՝ մենք ունենք շերտավորման փաստը ինտելիգենցիայի մեջ, սմբնավեխովյությունից հեռացման փաստը, աշխատավոր ինտելիգենցիայի հայրությունների և հազարների անցումը խորհրդային իշխանության կողմը։ Այդ փաստը բարեպատիկ և հիշատակության արժանի փաստ ե։ Ակզենտապատճառն այստեղ տեխնիկական ինտելիգենցիան ե, վորպես ներու կերպված լինելով արտագրության պրոցեսի հետ, չի կարող չտեսնել, վոր բուրժուազիները մեր յերկիրն առաջ են տանում, դեպի լավի տանում, Այնպիսի հոկա ձեռնարկություններ, ինչպես են վոլվովարոյը, Ինեպրոստրոյը, Սվիբստրոյը, Թուրքեստանի յերկաթուղին, Վոլգոդոն և նոր հոկա գործարանների ամբողջ շարքը, վորոնց բախտի հետ կապված և տեխնիկական ինտելիգենցիայի ամբողջ շերտերի վիճակը, չեն կարող վորոշ նորաստավոր ազգեցություն չիտոնել այդ շերտերի վրա։ Դա նրանց համար վոչ միայն մի կտոր հացի ինդիր ե, այլ և միաժամանակ պատվի, տեղագործության գործ ե, վորը մոտեցնում է նրանց բանվոր դասակարգին և խորհրդային իշխանությանը։ Յետ գեռ չեմ խոսում գյուղական և աշխատավորական, մասնավանդ գյուղական ուսուցչության մասին, վորը վաղուց արդեն գարձել է խորհրդային իշխանության կողմը, վորը չի կարող չողջունել դպրոցական գործի զարգացումը գյուղում։ Այդ պատճառով, ինտելիգենցիայի վորոշ շերտերի միջև գժգոհության հետ միաժամանակ մենք ունենք շերտերի միջև գժգոհության հետ միաժամանակ մենք ունենք աշխատավորական ինտելիգենցիայի շաղկապի փաստը բանվոր

դասակարգի հետ: Կուսակցության խնդիրն ե՝ շարունակել նոր բուժությագի մեկուսացման գիծը, ամրացնել բանվոր դասակարգի շաղկապն աշխատավորական ինտելիգենցիայի հետ քաղաքում և գյուղում:

Բյուրոկրատիզմի մասին այնքան շատ են խոսում, վոր կարեք չկա արտահայտվելու այդ մասին: Վոր բյուրոկրատիզմի տարրեր կան պետական, կոռուպտական և կուսակցական ապարատում՝ զրանում կասկած չկա: Վոր այդ բյուրոկրատիզմի տարրերի գեմ պայքարն անհրաժեշտ ե, վոր այդ խնդիրը մեր առջև ծառացած կլինի ամրող ժամանակ, քանի մենք կունենանք պետական իշխանություն, քանի վոր գյուղական ունի պետությունը, դա ել փաստ ե: Սակայն պետք ե համենայն դեպս սահմաններ ճանաչել: Պետական ապարատի մեջ բյուրոկրատիզմի գեմ պայքարը հասցնել մինչև պետական ապարատի վոչնչացում, մինչև պետական ապարատի ստորացում, կամ մինչեւ նրա բեկումն՝ դա նշանակում ե գնալ լենինիզմի դեմ, նշանակում ե մոռանալ, վոր մեր ապարատը խորհրդային այնպիսի ապարատ ե, վորը ներկայումս աշխարհում գյուղական ունեցող բոլոր պետական ապարատների համեմատությամբ՝ պետական ապարատի գերազույն տիպն ե: Վարդն ե մեր պետական ապարատի ույժը: Այն, վոր նա Խորհուրդների միջոցով իշխանությունը կազում ե բանվորների և գյուղացիների միջանակվոր մասսաների հետ: Այն, վոր Խորհուրդները կառավարելու դպրոց են տասնյակ և հարյուրհազարավոր բանվորների և գյուղացիների համար: Այն, վոր պետական ապարատը չի անջատվում միջինավոր ժողովրդական մասսաներից և ձուլվում ե նրանց հետ՝ անհամար թվով մասսայական կազմակերպությունների, զանազան տեսակի հանձնաժողովների, սեկցիաների, խորհրդակցությունների, պատվիրակային ժողովների և այլն միջոցով, վորոնք հեշտացնում են խորհուրդների գործը և առաջ մղում այդպիսով իշխանության մարմիններին: Վարդն ե մեր պետական ապարատի թուլությունը: Այն բյուրոկրատական տարրերի ներկայությունը, վորոնք փչացնում են և այլասերում ապարատի աշխատանքը: Վորպեսզի դուրս գանենք այդ ապարատից բյուրոկրատիզմը, իսկ այդ 1—2 տարում անկարելի յե կատարել, պետք ե սիստեմատիկորեն բարելավենք պետական ապարատը, մոտեցնենք նրան մասսաներին, թարմացնենք բանվոր դասակարգի գործին նվիրված նոր մարդկանցով, փոխենք այն կոմմունիզմի վորով և վոչ թե ջախջախենք ու ստորացնենք: Լենինը հազար

անգամ իրավացի եր, յերբ ասում եր՝ «Առանց ապարատի մենք վաղուց կործանված կլինիցինք. առանց ապարատի բարեկավման սիստեմատիկ և համառ կովի՝ մենք կործանվենք մինչև սոցիալիզմի հենարան ստեղծելը»:

Յես չեմ խոսելու պետական ապարատի այն թերությունների մասին, վորոնք աչքի յեն զարնում: Յես ի նկատի ունեմ նախ և առաջ ձգձգումները (վոլոկիտա): Յես ունեմ իմ ձեռքին ձգձգումների վերաբերյալ նյութերի մի ամրող կապոց, վորոնք մերկացնում են մի շարք դատական, վարչական, ապահովագրական, կոռոպերատիվ և այլ կազմակերպությունների հանցավոր վերաբերմունքը: Ահա ձեղ մի գյուղացի, վորը 21 անգամ գնացել ե մի ապահովագրական հիմնարկություն, վորպեսզի իմանա ճշմարտությունը, բայց և այնպես վոչինչ չի կարողացել իմանալ: Ահա մի ուրիշ գյուղացի — 68 տարեկան մի ծերունի, վորը անցել ե վոտքով 600 վերստ մի պարզ բան իմանալու գավառական սոցալից, բայց զարձյալ անհետեանք: Ահա և ձեղ մի պառավ կին — 56 տարեկան գեղջկունի, վորը ժողովատարանի հրավերով անցել ե 500 վերսա վոտքով, 600 վերստ ձիով, բայց համենայն գեղա ճշմարտության չի հասել: Եյթպիսի փասուեր անթեվ են: Թվել չարժե: Բայց դա խայտառակություն ե մեղ համար, ընկերներ: Ինչպես կարնի յե տանել պյուղի այլանդակություններ: Վերջապես կարնի առաջական առաջական գյուղացիների (զադվիժենցի) մասին: Բանից դուրս ե գալիս, վոր բացի առաջքաշվածներից (վիզվիժենցի) բանվորների մեջ գյուղական ունեն նաև յետքաշվածներ, վորոնք յետին պլանն են քշվում հենց ընկերների կողմից՝ վոչ թե անընդունակության կամ աշխատել չկարողանալու պատճառով, այլ աշխատանքի վերաբերյալ իրենց բարեկարդանության և ազնվության համար: Ահա ձեղ մի փականագործ բանվոր — ինստրումենտալիզմի, վորը առաջ և քաշվել գործարանում վորոշ պաշտոնի համար վորպես ընդունակ և անկաշառ մարդ: Նա աշխատում ե մի տարի, յերկու տարի, աշխատում ե ազնվությամբ, կարգ ու կանոն ե մտցնում և վոչնչացնում անտնտեսավարությունը և շուայությունը: Բայց աշխատելով այդպես, նա գիտչում ե «կոմունիստաների» մի տաք կոմպանիայի շահերին և խանգարում նրանց հանգիստը: Յեզի բնչ: «Կոմմունիստաների» տաք կոմպանիան սկսում է արգելքներ հարուցել նրա դեմ և այդպիսով ստիպում ե նրան «յետ քաշվել»: «Ուզեցիր մեզանից խելոք գտնվել համ, չես թողնում ապրենք և հանգիստ ոգտվենք, դե ուրիմ յետ քաշվիր,

բարեկամ»: Ահա և մի ուրիշ բանվոր, — նույնպես փականագործ - ինսպրումենտալցիկ: Առաջ և քաշվել գործարանում վորոշաշտոնի: Աշխատում եւ յեռանդագին և աղնվությամբ: Բայց աշխատելով այդպես նա խախտում և վոմանց հաճդիստը — և ինչ: Հարմար դեպք են գտնում և ազատվում «անհանգիստ» ընկերություն: Ի՞նչպես նեռացավ այդ առաջ քաշված ընկերը, թուչ զդաղմունքով: Ահա թե ինչպես, «ամենաուրեք, ուր ինձ նշանակում եյին, յես աշխատում եյի արդարացնել ինձ ցույց տված վստահությունը: Բայց ահա այս առաջ քաշումը, վորը չար խաղ խաղաց ինձ հետ, յես յերբեք չեմ մոռանա: Ինձ վրա ցեխ շպրտեցին, իմ ցանկությունը — ամեն ինչ մերկացնել, այնպես ել մնաց ցանկություն: Վոչ գործարիսմը, վոչ գործարանային վարչությունը, վոչ ել թվիվը ինձ լսել չեյին ուզում Յես առաջ քաշման համար մեռած եմ: Թող վրաս վոսկի թափեն, յես վոչ մի տեղ չեմ գնա:» («Տրուգ» № 128, հունվարի 9, 1927 թ.): Բայց սա չեմ վոր խայտառակություն և մեզ համար, ընկերներ: Ի՞նչպես կարելի յետ առանել այդպիսի այլանդակություններից: Կուսակցության խնդիրն հայտական ապարատի բարելուգման համար բյուրոկրատիզմի դեմ պայքարելով՝ այրել շիկացած յերկաթով մեր կյանքի այնպիսի այլանդակությունները, վորոնց մասին յես նոր խոսեցի:

◀ Կուլտուրական հեղափոխության վերաբերյալ լինինյան լուգունդի մասին: Ամենաճիշտ միջոցը բյուրոկրատիզմի դեմ՝ բանվորների և գյուղացիների կուլտուրական մակարդակի բարձրացումն եւ: Կարելի յետ հայնոյել պետական ապարատի բյուրոկրատիզմը, կարելի յետ վատաքանել և խայտառակության սյունին գամել բյուրոկրատիզմը մեր կյանքում, սակայն յիթե լայն բանվորական մասսաները չունեն այնպիսի կուլտուրական մակարդակ, վորը հնարավորություն, ցանկություն և ունակություն ստեղծի ներքեց հսկելու պետական ապարատը՝ հենց իրենց բանվորների ույժերով, բյուրոկրատիզմը կշարունակի ապրել: Այդ պատճառով բանվոր դաստիարագի, աշխատավորական մասսաների և գյուղացիության կուլտուրական զարգացումը, վոչ միայն վրագիտության դարպացման մտքով, — թեպետև գրագիտությունը՝ հանդիսանում և կուլտուրականության հիմքը, — այլ նախ և առաջ յերկերը կառավարելու գործի փորձառություն ձեռք բերելու մտքով, կազմում և պետական և ամեն մի ուրիշ ապարատի բարելավման հիմնական լծակը: Սրա մեջ և հենց կուլտուրական հեղափոխության մասին լինինյան լոգունդի նշանակությունը: Ահա թե ինչ եր

ասում լինինն այդ մասին 1922 թվի մարտին մեր կուսակցության 12-րդ համագումարի բացումից առաջ՝ կենտկոմին՝ ընկեր Մոլոտովի անվամբ ուղղած նամակում, «Ամենագլխավորը, վոր մեղ պակասում եւ զա կուլտուրականությունն եւ կառավարելու ընդունակությունը: Տնտեսական և քաղաքական նեպն ըստ ամենաշնի յերաշխավորում եւ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման նսարավորությունը: Դորձը կախված եւ միայն պրոլետարիատի և նրա ավանդաբարդի կուլտուրական ույժերից»: Լինինի այդ խոսքերը չի կարելի մոռանալ, ընկերներ: (Չայներ՝ «Ճիշտ ե»): «Եյստեղից ել՝ կուսակցության խնդիրը՝ ուժեղացնել պայքարը բանվոր դաստիարագի և գյուղացիական աշխատավորության շերտերի կուլտուրական վերելքի համար: »

Իսկ ինչպիսի արդյունքներ ունենք մեր յերկրում ներքին քաղաքական գրության վերաբերյալ: Այն արդյունքը, վոր խորհրդային իշխանությունն աշխարհում գոյություն ունեցող իշխանություններից ամենակայցուն իշխանությունն եւ: (Բուռն ծափահարություններ): Բայց յեթե խորհրդային իշխանությունն ամենաամուր իշխանությունն եւ աշխարհում գոյություն ունեցող բոլոր իշխանություններից, վորին (խորհրդային իշխանությանը): Կարող եւ նախանձել պմեն մի բուրժուական կարավառություն, դա դեր չի նշանակում, վոր մեզ մոտ այդ տեսակետից ամեն ինչ տեղին եւ, մի բան, վոր մենք չենք կարող և չպետք եւ ծածկենք վերպես բոլշեվիկներ: Մեղ մոտ կա, նախ և առաջ գործադրկություն — զա մինուս եւ, վորը մենք պիտի հաղթահարենք կամ գոնե հասցնենք մինիմումի՝ ինչ գնով ուզում եւ լինի: Յերկրորդ՝ մենք ունենք թերություններ բանվորների բնակարանային շինարարության նկատմամբ, բնակարանային ճգնաժամ, վորը մենք սույնպես պետք եւ հաղթահարենք կամ գոնե հասցնենք մինիմումի մոտակա տարիներում: Մենք ունենք անտիսեմիտիզմի վորոշ ծիլեր վոչ միայն միջին շերտերի վորոշ շրջաններում, այլև բանվորների վորոշ մասի մեջ, նույնիսկ մեր կուսակցության վորոշ ողակներում: Այդ չարեցի դեմ, ընկերներ, պետք եւ պայքարել ամենապօք կերպով: Մենք ունենք գարձայալ այնպիսի մինուս, ինչպես հակակրնսական պայքարի թուլացումը: Մենք ունենք, վերջադիմ, կուլտուրական սարսափելի հետամնացություն, բառի վոչ միայն լայն, այլև նեղ իմաստով, տարրական գրագիտության մտքով, վորովնետե խորհրդային միության մեջ անգրագիտության տոկոսը զենուս մեծ եւ: Այդ բոլոր և գրանց նման մինուսները պետք եւ

վերացվեն, ընկերներ, յեթե մենք ուղում ենք առաջ շարժմիլ քիչ  
թե շատ արագ տեմպով:

Վորաբեսովի ավարտման իմ հաշվետվության այս բաժինը,  
թույլ տվեք մի քանի խոսք ասել հաշվետվական ժամանակամի-  
ջոցում կատարված ամենաբնորոշ նշանակությունի մասին: Յես  
չեմ խոսի ԽՍՀՄ Ժողկոմի մասին: Չեմ խոսի, նաև՝ Ժողովրդական  
Տնտեսության Գրեագույն Խորհրդի, Առեւտի Ժողովրդական  
Ժամանակամիջության մասին: Չեմ խոսի, նաև՝ Ժողովրդական  
Տնտեսության Գրեագույն Խորհրդի, Առեւտի Ժողովրդական  
Ժամանակամիջության մասին: Յես կուգեյի շոշափել միայն յերեք նշանակում,  
վորոնք ունեն ցուցազրական նշանակություն: Դուք գիտեք, վոր  
Ռենդօչ ժՏԿԴ նախագահ և հաստատված ընկեր Լորովը: Դա՝  
բանվոր մետալիստ և: Դուք գիտեք, վոր Մոսկվայի խորհրդի նա-  
խագահ և ընտրված Կամենսկի փոխարքն ընկ. Ուխանովը, վորը  
բանվոր մետալիստ և: Դուք գիտեք նաև, վոր Լենինգրադի խորհրդի  
նախագահ Զինովյեսի փոխարքն ընտրված և ընկ. Կոմարովը, վորը  
նույնական բանվոր մետալիստ և: Ռենդօչ յերկու մայրաքաղաքների  
«Լորդմերերը» մեզ մոտ բանվոր մետալիստներ են: (Ծափահարու-  
թյուններ): Դուք կասեք, վոր դա տենդենցիա յե գեպի մետալի-  
զացիա: Կարծում եմ, վոր այստեղ վոչ մի վատ բան չկատ: (Չայ-  
ներ՝ «Ընդհակառակը, շատ լավ ե»): Ցանկանք կապիտալիստական  
յերկուներին, ցանկանք լուսններին, Պարիսին նույնը, վորաբեսովի  
նրանք վերջապես հասնեն մեզ և նշանակեն լորդմերեր իրենց սե-  
փական մետալիստներին: (Ծափահարություններ):

### Կուսակցությունը յեվ ոպոգիցիան

Կուսակցության կացության մասին: Յես չեմ խոսի, ընկեր-  
ներ, մեր կուսակցության թվական և գաղափարական աճման  
մասին, չեմ բերի թվեր, վորովնետե այդ մասին մանրամասն կզե-  
կուցի ձեզ ընկ. Կոստիորը:—Յես չեմ խոսի նաև մեր կուսակցության  
սոցիալական կազմի և դրան հարակից թվերի մասին, վորովնետե  
այդ մասին լիակատար թվեր կտա ձեզ ընկ. Կոստիորը՝ իր զեկուց-  
ման մեջ: Յես կուգեյի մի քանի խոսք ասել մեր կուսակցության զե-  
կավար աշխատանքի բարձրացման և վորակի բարելավման մասին  
ինչպես անտեսության, այնպես ել քաղաքական բնագավառում: Կար ժամանակ, ընկերներ, յերկու-յերեք տարի սրանից առաջ, յերբ ընկերների մի մասը, կարծեմ Տրոցկու զեկավարությամբ,

(ծիծաղ, ձայներ՝ «կարծեմ») մեղադրում եյին մեր նահանգական,  
շրջանային կոմիտեներին և կենտկոմներին, պնդելով, վոր կուսակ-  
ցական կաղմակերպությունները կոմակետնատ չեն և զուր տեղն են  
խառնվում յերկրի տնտեսական գործերին: Եյն, յեղել և այդպիսի  
ժամանակ, այժմ հաղիվ թե վորմե մեկի լեզուն շարժվի՝ կուսակաղ-  
մակերպություններին նման մեղադրանք շպրտելու համար: Վոր  
նահանգական և շրջանային կոմիտեները ալիրացան տնտեսական  
զեկավարության գործին, վոր կուսակաղմակերպությունները կանգ-  
նած են տնտեսական շինարարության գլխին և վոչ թե պոչին, դա  
այնպիսի ակնրախ փաստ ե, վորը բացասել կհամարձակվեն թերևս  
միայն կույրերն ու խելառները: Արդեն այն փաստը, վոր մենք  
համարձակվեցինք տնտեսական շինարարության հնգամյա ծրա-  
դրի հարցը զնել այս համագումարում, ցուց ե տալիս, վոր կուսակ-  
ցությունը շատ հեռու յե զնացել մեր տնտեսական շինարարու-  
թյան պլանային զեկավարության գործում, ինչպես տեղերում,  
այնպես ել կենտրոնում: Վոմանը կարծում են, վոր այստեղ առան-  
ձին վոչինչ չկա: Վոչ ընկերներ, դա կարեոր բան ե, վորը պետք  
է հիշատակվի: Որինակ են բերում յերբեմն ամերիկական և զերմա-  
նական տնտեսական մարմիններին, վորոնք իր թե պլանային  
կարգով են զեկավարում ժողովրդական տնտեսությունը, վոչ, ըն-  
կերներ, նրանք զբան զեր չեն հասել և չեն հասնի, քանի դեռ  
այնտեղ գոյություն ունեն կապիտալիստական կարգեր: Պահային  
կարգով զեկավարելու համար հարկավոր և ունենալ արդյունա-  
բերության սոցիալիստական և վոչ կապիտալիստական սիստեմ,  
հարկավոր և ունենալ զնեն նացիոնալիզացիայի յենթարկված  
արդյունաբերություն, նացիոնալիզացիայի յենթարկված փարկու-  
յին սիստեմ, նացիոնալիզացիայի յենթարկված հող, սոցիալիստա-  
կան շաղկապ դյուլի հետ, բանվոր դասակարգի իշխանություն  
յերկրում և այլն: Ճիշտ ե, նրանք ել ունեն պլանների նման ինչ  
վոր բան: Սակայն այդ պլանները պրոցոնդներ են, յենթարու-  
թյուններ, վորոնք վոչ վոքի համար պարտադիր չեն և վորոնց  
հիման վրա անկարելի յե զեկավարել յերկրի տնտեսությունը:

Այլ և մեզ մոտ: Մեր պլանները վոչ թե պրոցոնդներ են  
կամ յենթարություններ, այլ դիրքեկտիվներ, վորոնք պարտադիր  
են զեկավար մարմինների համար և վորոնք վորում են մեր  
տնտեսական զարգացման ուղղությունն ապագայում՝ ամբողջ  
յերկրի ծավալով: Դուք տեսնում եք, վոր մենք ունենք այստեղ  
սկզբունքային տարբերություն: Ահա թե ինչու յեմ յես տառւմ,

վոր անտեսական զարգացման հնգամյա ծրագրի հարցի համագումարում զնելու հասարակ փաստը, նույնիսկ այդ փաստը ներկայանում և մեր պլանային ղեկավար աշխատանքի բարձրացման նշանը:

Ցես չեմ խոսելու նաև մեր կուսակցության մեջ ներկուսակցական դեմոկրատիայի աճման մասին: Միայն կույրերը չեն տեսնում, վոր ներկուսակցական դեմոկրատիան, իսկական ներկուսակցական դեմոկրատիան և կուսակցական մասսանների ակտիվության իսկական վերելքը մեղ մոտ աճում և զարգանում են: Բարբաջում են դեմոկրատիայի մասին: Բայց ինչ բան և դեմոկրատիան կուսակցության մեջ: Դեմոկրատիա ում համար: Ցես դեմոկրատիա ասելով հասկանում են հեղափոխությունից կտրված մի քանի ինտելիգենտների համար անվերջ բարբաջելու և սեփական մամուլի որդան ունենալու ազատություն, այդպիսի դեմոկրատիա մեզ հարկավոր չե, վորովհետեւ դա կլինի դեմոկրատիա աննշան փոքրամասնության համար, վորը դեմ և գնում խոշոր մեծամասնության կամքին: Իսկ յեթե դեմոկրատիայի տակ հասկանում են կուսակցական մասսանների համար՝ մեր շինարարության հարցերը վճելու ազատություն, կուսակցական մասսանների ակտիվության վերելք, նրանց առաջ քաշելը կուսակցության դեկավորության գործում և նրանց մեջ կուսակցության տիրող զգացմունքի զարգացում, ապա այդպիսի դեմոկրատիա մեղ մոտ կա, նա մեղ պետք ե, և մենք կզարդացնենք այն անշեղ կերպով: (Մափահարություններ): Չեմ խոսի, ընկերներ, նաև այն մասին, վոր ներկուսակցական դեմոկրատիայի հետ միասին մեղ մոտ քայլ առ քայլ աճում ե կոլլեգիալ ղեկավարությունը: Վերցնենք մեր կենտկոմը և կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովը: Նրանք միասին կազմում են 200—250 ընկերներից բաղկացած ղեկավար կենտրոն, վորը կամունավոր կերպով հավաքում և վճռում ե մեր շինարարության խոշորագույն հարցերը: Դա ամենաշեմոկրատիկ և կողմանական կենտրոններից մեկն ե, վորը յերբ երցե յեղել ե մեր կուսակցության մեջ: Ցեվ ինչ, Միթե փաստ չե այն, վոր մեր աշխատանքի կարևորագույն հարցերի լուծումը հետզետե նեղ խմբակից անցնում ե այն լայն կենտրոնի ձեռքը, վորն ամենասերտ կերպով կապված ե շինարարության բոլոր բնագավառների և մեր անսահման յերկրի բոլոր ռայոնների հետ: Ցես չեմ խոսի նաև մեր կուսակցական կազմերի աճման մասին: Անվիճելի յե, վոր այս վերջին տարիները մեր կուսակցության

հին կազմերը փոխարինվում են վեր բարձրացող նոր կազմերով, վերոնք բաղկացած են, գլխավորապես, բանվորներից: Ցեթե մենք առաջ հաշվում ենք մեր կազմերը հարյուներով և հազարներով, այժմ մենք նրանց պետք են հաշվենք տասնյակ հազարներով: Ցես կարծում եմ, վոր յեթե սկսենք ամենաստրին՝ ցեխային և ողակային կազմակերպություններից, և գնանք մինչև վերև, մեր ամբողջ Միության մեջ, մեր կուսակցական կազմերը, վորոնք իրենց խոշոր մեծամասնությամբ բաղկացած են բանվորներից, այժմ կարսու են հասնել վոչ պակաս քան 100,000 մարդու: Դա մեր կուսակցության մեծագույն աճումն ե: Դա մեր կազմային կազմի մեծագույն աճումն ե, նրա գաղափարական-կազմակերպչական փորձառության, նրա կոմունիստական կուլտուրայի աճումն ե:

Վերջապես, կա գարձյալ մի հարց, վորի մասին կարիք չկախում է, սակայն վորը պետք ե հիշատակել: Դա կուսակցության հեղինակության աճման հարցն ե, ընդհանուրապես անկուսակցական բանվորների և աշխատավորական մասսանների մեջ մեր յերկրում, բանվորների ընդհանուրապես և ամրող աշխարհի ճնշված դասակարգերի մեջ: Այժմ հազիվ թե կարելի յե կասկածել, վոր մեր կուսակցությունը գաւնում և ամրող աշխարհի աշխատավորական մասսանների աղատության դրոշը, իսկ բոլցեկի կաշումը բանվոր գասակարգի լավագույն մարդկանց համար պատվագոր կոչում գաւնում:

Սյուպես ե ընդհանուրապես, ընկերներ, մեր նվաճումների պատկերը կուսակցական շինարարության բնագավառում: Բայց գտ չի նշանակում, ընկերներ, վոր մեր կուսակցության մեջ չկան թերություններ: Վոչ, թերություններ կան, թերությունները լուրջ են: Թույլ տվելը մի քանի խոսք ասել այդ թերությունների մասին:

Վերցնենք, որինակ, կուսակցական կազմակերպությունների անտեսական և այլ կազմակերպությունների ղեկավարման գործը: Ամեր ինչ արդյոք մեղ մոտ աեղին ե: Վոչ, վոչ ամեն ինչ: Մեզ մոտ հաճախ հարցերը վոչ միայն անդերում, այլ և կենտրոնում, վճռում են, այսպես ասած, ընտանեկան ձեռվություն անդամը թույլ ավեց, ասենք, մի ամենակապիտ սխալ և փչացրեց գործը: Բայց իվան ֆյուզորովիչը չի ուզում նրան քննադատել, գուրս բերել նրա սխաները: Զի ուզում, վորովհետև ցանկություն չունի «թշնամիներ գաստակելու»: Միալ են վործել փչացրել են գործը—ինչ

մեծ բան ե: Իսկ հվ մեզանից չի սխալվում: Այսոր յես նրան՝ իվան Ֆյոդրովիչին կիսայեմ, վաղը նա ինձ՝ իվան իվանիչին, կիսայի, վորովինետե ինչ յերաշխիք, վոր յես ել չեմ սխալվի: Ամէն ինչ իր կարգին: Խաղաղություն և բարյացակամություն: Թույլ տված սխալը փչացնում և մեր մեծ գործը: «Վոչինչ, մի կերպ դուրս կդանք տակից»: Ահա, ընկերներ, մեր մի քանի պատասխանատու աշխատավորների սովորական դատողությունը: Բայց ինչ ե նշանակում սա: Յեթե մենք, բոլցելիներս, վոր քննադատում ենք ամբողջ աշխարհը, վոր Մարքսի ասածի համաձայն ոմբակոծում ենք յերկինքը, յեթե մենք այս կամ այն ընկերների խաթեր հրաժարվում ենք ինքնաքննադատությունից, ապա պարզ չե, վոր դա բացի մեր մեծ գործի կործանումից մեզ վոչինչ չի տա: (Չախներ՝ «Ճիշտ ե»: Ծափահարություններ): Մարքսն ասել ե, վոր պրոլետարական հեղափոխությունը նրանով ե, իմիջիայլոց, տարբերվում ուրիշ վորեն հեղափոխությունից, վոր նա ինքն և իրեն քննադատում, և քննադատելով իրեն, ամրանում ե: Դա շատ կարևոր ցուցմունք ե Մարքսի կողմից: Յեթե մենք, պրոլետարական հեղափոխության ներկայացուցիչներս, փակենք մեր աչքերը մեր թերությունների առաջ, լուծենք հարցերը ընտանեկան կարգով, լուելով փոխադարձաբար մեր սխալների մասին և մեր իսկական հիվանդությունները ծածկենք մեր կուսակցական մարմին ներսում, ապա հվ և ուղղելու այդ սխալները, այդ թերությունները: Արդյոք պարզ չե, վոր մենք կդադարենք պրոլետարական հեղափոխական լինելուց և անշուշտ կկորչենք, յեթե դուրս չվանենք մեր միջավայրից այդ որիվատելչինան, մեր շինարարության կարևորագույն հարցերի լուծման այդ ընտանեկան ձեր: Պարզ չե արդյոք, վոր, հրաժարվելով ազնիվ ու շիտակ ինքնաքննադատությունից, հրաժարվելով սեփական սխալների ազնիվ և բաց ուղղումից, մենք փակում ենք մեր ուղին՝ առաջ շարժվելու, մեր գործի բարելավման, մեր գործի նոր աջողությունների համար: Չե վոր մեր զարգացումը գնում ե վոչ գեպի վեր միալար սահուն վերելքի կարգով: Վոչ, ընկերներ, մեզ մոտ կան դասակարգեր, մեր յերկրի ներսում կան հակասություններ, մեզ մոտ կա ներկա և ապագա, մեզ մոտ կան հակասություններ նրանց միջև, և մենք չենք կարող առաջ շարժվել սահուն որորություններով կյանքի ալիքների վրայով: Մեր առաջխաղացումը տեղի յե ունենում պայքարի կարգով, հակասությունների զարգացման կարգով, այդ հակասությունների հաղթահարման կարգով, այդ հակասությունների

դրակորման և լիկվիդացիայի կարգով: Մենք յերբեք հնարավորություն չենք ունենա, քանի գոյություն ունեն դասակարգերը, ասելու՝ դե, փառք աստծու, այժմ ամեն ինչ լավ ե: Յերբեք այդ չի լինի մեզ մոտ, ընկերներ, միշտ մեզ մոտ վորեն բան մահանում ե կյանքում: Բայց այն, ինչ մահանում ե, չի ուզում ուղղակի մեռնել, այլ կովում ե իր գոյության համար և պաշտպանում ե իր հնացած գործը: Մեր կյանքում միշտ ծնվում ե վորեն նոր բան: Բայց այն, ինչ ծնվում ե, ծնվում ե վոչ հասարակ կերպով, այլ աղաղակում ե և բղավում, պաշտպանելով իր գոյության իրավունքը: (Զայներ՝ «Ճիշտ ե»: Ծափահարություններ): Պայքար հնի և նորի միջև, ծնվողի և մեռնողի միջև— ահա մեր զարգացման հիմքը: Զհիշատակելով և չդրսենորելով բաց ու ազնիվ կերպով, ինչպես այդ սպառում ե բոլցելիներին, մեր աշխատանքի թերությունները և սխալները, մենք մեր առաջադիմության հասապարհը: Իսկ մենք ուղում ենք առաջ շարժվել: Յեվ հենց այն պատճառով, վոր մենք ուղում ենք առաջ շարժվել, մենք պետք ե մեր ամենակարևոր խնդիրներից մեկը համարենք հեղափոխական ինքնաքննադատությունը: Առանց որպան՝ չկա առաջխաղացում: Առանց որպան՝ չկա զարգացում: Բայց հենց այդ գծով մեզ մոտ գենս կազում ե գործը: Ավելին, բավական ե մի քանի աջողություններ, վորպեսզի մենք մոռանանք մեր թերությունները, հանգստանանք և հպարտանանք: Յերկու-յերեք խոշոր աջողություն, և արդեն պարծենկու ենք զառնում: Դարձյալ յերկու-յերեք մեծ աջողություն և մենք արդեն աշխարհը մերն ենք կարծում: Բայց սխալները մնում են, թերությունները շարունակվում են, հիվանդությունները ներս են քաշվում մեր կուսակցական մարմին նկրսը:

Յերկորդ թերությունը: Դա վարչականության մեթոդի կուսակցության ներսը փոխադրեն և կուսակցության մեջ վճռական նշանակություն ունեցող համոզիչ մեթոդը վարչականության մեթոդի փոխադրենեն ե: Այդ թերությունը պակաս զգալի վտանգ չե, քան առաջին թերությունը:

Ինչու, վորովհետեւ նա ստեղծում ե վտանգ զարձնելու մեր կուսակցական կազմակերպություններին, վորոնք հանդիսանում են ինքնուրույն կազմակերպություններ, դատարկ դիվանական հաստատություններ: Յերբ ընդունենք, վոր մեզ մոտ կան վոչ պակաս 60000 անհամեմատ ակտիվ աշխատավորներ, վորոնք ցրված են ամեն տեսակ տնտեսական, կոռպերատիվ ու

պետական հաստատությունների մեջ և պայքարում են այնակ ըյուրկրատիվի դեմ, ապա պետք եւ խոստվանենք, թե նրանց մի մասը, պայքարելով ըյուրկրատիվմի դեմ այդ հաստատությունների մեջ, յերբեմն ինքն եւ վարակվում ըյուրոկրատիվմով և փոխադրում եւ այդ կուսակցական կազմակերպության մեջ։ Դա, ընկերներ, մեր հանցանքը չե, այլ գժրախտությունը, վորովհետո քանի կա պետություն, այդ պրոցեսը կշարունակվի ավելի կամ պակաս չափով։ Հենց այդ պատճառով, վոր այդ պրոցեսը վորոշ արժանակությունը, հենց այդ պատճառով մեզ անհրաժեշտ եւ զինվել այդ պակասության դեմ կովելու համար, վորովի հանելով կուսակցական մասսաների ակտիվությունը, մասնակից անելով նրանց մեր կուսակցական զեկավարության հարցերի վճռին, հաստատելով սիստեմատիքաբար ներկուսակցական դեմոկրատիա։

Յերրորդ թերությունը. Մեր մի շաբթ ընկերներ ցանկանում են լողալ հոսանքով սահուն, հանգիստ, տունց հեռանկարների, տունց նայելու առաջային, այնպես, վորպեսզի շուրջը զգացվի տոնական, հանդիսավոր տրամադրություն, վորպեսզի ամեն որ մեզ մոտ լինեն հանդիսավոր նիստեր, ամեն տեղ լինեն ծափահարություններ, վորպեսզի ամեն մեկը մեղանից առանց հերթի գանա ամեն տեսակ նախագահությունների պատվավոր անդամ։ (ծիծաղ, ծափահարություն)։ Ամեն տեղ տոնական տրամադրություն տեսնելու ամբողջ այդ անզուապ ցանկությունը, ցույցերի, ամեն տեսակ հոբելյանների այդ ձգտումը հարկավոր են և հարկավոր չեն, լողալու այդ ցանկությունը, վորքան կարելի յեւ լողալ, չնայելով թե մինչեւ մեր կողմանք (ծիծաղ, ծափահարություն), այդ ամենը կազմում եւ մեր կուսակցական առողյա կյանքի յերրորդ թերության եյությունը, մեր պակասությունների հիմքը մեր կուսակցական կենցաղում։ Տեսել եք, արդյոք, ազնիվ, քըրանաշախ թիավարների, բայց վորոնք չեն տեսնում, թե մեր և տանում նրանց հոսանքը։ Յես տեսա այդպիսի թիավարների Յենիսե գետի վրա։ Դրանք ազնիվ, ժիր թիավարներ են։ Բայց նրանց գժրախտությունը նրանումն ե, վոր նրանք չեն տեսնում, չեն կամենում տեսնել, թե ալիքը կարող եւ զարկել նրանց ժայրին, ուր նրանց սպասնում եւ կորուստ։

Միենայնը լինում եւ կ' մեր միքանի ընկերների հետ։ Թիավարում են ազնվորներ, անզուկ, լողում են սահուն, հոսանքի ուղղությամբ, բայց թե մեր են լողում՝ վոչ միայն չդիտեն, այլ մինչեւ

անգամ չեն եւ կամենում իմանալ Աշխատանք առանց հեռանկարների, աշխատանք առանց դեկի ու առանց առաջաստի, անա թե ինչի յեւ հանգում անպայման հոսանքով լողալու ցանկությունը։ Իսկ հետևանքները։ Հետևանքները պարզ են, ոկզում նրանք ծածկվում են բորբոսով, հետո դառնում են մոխրագույն, ապա նրանց ծծում եւ քաղցինիության տիզմը, իսկ հուսկ հետո նրանք դառնում են սովորական քաղցինի։ Դա — իսկական այլասեռական ուղին է։

Անա, ընկերներ, մի քանի թերություններ մեր կուսակցական գործնական աշխատանքի մեջ, մեր կուսակցական կենցաղում, վորոնց մասին յես կուսանում եյի ասել միքանի դառն խոսքեր։

Իսկ այժմ թույլ տվեք դիմել այսպիս անվանված ուղղիցիայի հետ մեր ունեցած դիմկուսիայի հարցերին։

### Դիմկուսիայի արդյունքը

Առաջի, արդյոք, վորեն խմաստ, վորեն արժեք դիմկուսիան։ Յերբեմն ասում են. «Ինչի համար դուք փեցիք դիմկուսիան։ Ո՞ւմ և նա հարկավոր։ Ավելի լավ չեր մինի լուծել վիճելի հարցերը ներկուսակցական կարգով, դուրս չածելով աղը խրճից։ Դա սխալ ե, ընկերներ!»

Դիմկուսիան յերբեմն բացարձակորեն անհրաժեշտ եւ ու անուղյաման ոգտակար։ Ամբողջ նարցը նրանումն ե, — ինչպիսի դիմկուսիա։ Յեթե դիմկուսիան ընթանում է ընկերական շրջանակներում, կուսակցական շրջանակներում, յեթե դա նպատակ ունի բարեկարգություն, քննադատուել կուսակցական թերությունները, յեթե դա, ուրիշն, բարելավում ե մեր գործը և զինում և բանվոր գասակարգին, ապա այդպիսի դիմկուսիան հարկավոր ե ու ոգտակար։ Բայց լինում ե ուրիշ տեսակի դիմկուսիա, վորի գուշակում և վոչ թե բարելավել մեր ընդհանուր գործը, այլ վատացնել այն, վոչ թե ամրապնդել կուսակցությունը, այլ տապաւել նրան։ Այդ տեսակ դիմկուսիան հանգում ե սովորաբար վոչ թե մեր ակտուարիատի զինման, այլ նրա զինաթափման։ Մեղ այդպիսի պրոլետարիատի հարկավոր չե։ (Զայներ՝ «Ճիշտ ե»։ Ծափահարություն)։

Յեթե ոպողիցիան պահանջում եր սկսել համամիութենական դիմկուսիա համագումարից յերեք ամիս առաջ, մինչեւ կե թեզերի դիմկուսիա համագումարից մինչեւ այդ թեզերի հրատարակությունը, նա վործում մշակումը, մինչեւ այդ թեզերի հրատարակությունը, նա վործում

եր մեր վզին փաթաթել այսպիսի դիսկուսիա, վոր անխուսափելուրեն կթեթևացներ մեր թշնամիների գործը, բանվոր դասակարգի թշնամիների գործը, մեր կուսակցության ախոյանների գործը: Հենց այդ պատճառով կե արգելք յեղավ ուղողիցիայի ծրագրներին: Հենց այն պատճառով, վոր նա դիմադրեց ուղողիցիայի ծրագրներին, մեզ աջողվեց դնել դիսկուսիան կանոնավոր ուղղու վրա, տալով նրան հիմնակետ կե համագումարին ուղղաձև թեզիների ձևով: Այժմ մենք կարող ենք ասել առանց տատանվելու, թե դիսկուսիան ընդհանրապես տվեց պլյուս: Ինչ վերաբերում ե աղբը խրճիթից դուրս տանելուն, դա դատարկ բան ե, ընկերներ: Մենք յերեք չենք վախեցել ու չենք ել վախենա բացարձակ քննադատել մեզ ու մեր սխալներն ամբողջ կուսակցության հանդեպ: Բոլշեկիպմի ույժն իսկապես նրանումն ե, վոր նա չի վախում քննադատությունից և իր պակասությունների քննադատությունից քաղում և յեռանդ նորից առաջանալու համար: Այդպիսով այժմյան դիսկուսիան հանդիսանում ե մեր կուսակցության ույժի, նրա հզորության նշան:

Զպետք ե մոռանալ, վոր ամեն մի մեծ կուսակցության մեջ, առանձնապես մերի նման կուսակցության մեջ, վոր իշխանության դրույ ե, ուր կան գյուղացիների և ծառայող տարրերի վորոշ մաս, վորոշ ժամանակամիջոցում կուտակվում են վորոշ անզգա, գեղական կուսակցական գործնական աշխատանքն անտարբեր տարրեր, վորոնք ձայն են տալիս փակելով աչքերը և լողում են հոսանքի համեմատ: Այդ տեսակ տարրերի մեծ քանակության գոյությունը չարիք է, վորի դեմ պետք ե կովել: Այդ տարրերը կազմում են մեր կուսակցության ճահիճը: Դիսկուսիան գանգատական դիմումն ե այդ ճահճին: Դիմում են նրան ոպողիցիոներները, վորպեսզի պոկեն նրանից վորոշ մասը: Ու նրանք, հիրավի, պոկում են նրա ամենավատ մասը: Դիմում ե նրան և՛ կուսակցությունը, վորպեսզի պոկեն նրանից նրա ամենալավ մասը և հաղորդակեց անե կուսակցական ակտիվ կյանքին: Հետեանքում ճահիճը հարկադրված ե ինքնավորոշվել, չնայած իր բովանդակ անշարժության: Յեվ նա, հիրավի, ինքնավորոշվում ե այդ դիմումների հետեանքում, տալով մի մասը ոպողիցիային, իսկ մյուս մասը՝ կուսակցությանը, գաղարելով այդպիսով գոյություն ունենալ իրեր ճահճ: Մեր կուսակցական գարգացման ընդհանուր հաշվեկշռի մեջ դա պլյուս ե: Այժմյան դիսկուսիայի հետեանքում մեզ մոտ ճահիճն ավելի

փոքրացավ, կամ նա բոլորովին դադարել ե կամ դադարում ե գոյություն պահպանել: Դրա մեջն ե դիսկուսիայի պլյուսը:

Դիսկուսիայի արդյունքը: Արդյունքը հայտնի յն: Մինչև յերեկ կուսակցության ոգտին ձայն են տվել, ինչպես պարզվում է, 725000 ընկեր, ոպողիցիայի ոգտին — 4000-ից ավելի: Անա ձեզ արդյունքը: Մեր մասին ոպողիցիոներները դպրոցացնում ենին, թե Կ.Կ. պոկվել ե կուսակցությունից, կուսակցությունը պոկվել ե դասակարգից և յեթե բերանում սունկեր բռնակելին, այդ գետքում նրանք՝ ոպողիցիոներները հավանորեն կունենային իրենց կողմը 99<sup>0</sup>/<sub>0</sub>: Բայց վորովհետև սունկերը բերանի մեջ չեն բռնում, յերեաց, վոր ոպողիցիան նույնիսկ մի տոկոս ել չունի: Այդպես ե արդյունքը:

Ինչպես կարող եր պատահել, վոր ամբողջ կուսակցությունը  
և նրա հետեւից բանվոր դասակարգն այնպես շեշտակի չեղոքաց-  
րին ոպողիցիային։ Զե վոր այնտեղ, ոպողիցայի գործ կանգնած  
են հայտնի մարդիկ, վորոնք կարողանում են իրենց ըեկլամ անել  
(ձայներ՝ «Ճիշտ ե»), մարդիկ, վորոնք հիվանդ չեն համեստությամբ  
(ծափահարություն), կարողանում են իրենց զովարանել, ցույց  
տալ ապրանքը բաց։ Բայ դա յեղագ այն պատճառով, վոր ուսո-  
ղիցայի ղեկավար խմբակը յերեաց մանր բուրժուական, կյանքից,  
հեղափոխությունից, կուսակցությունից ու բանվոր դասակարգից  
կորված ինտելիգենտների խմբակ. (ձայներ՝ «Ճիշտ ե»։ Ծափահա-  
րություն)։ Յես մի փոքր առաջ խոսեցի մեր աշխատանքի աջո-  
ղությունների, մեր նվաճումների մասին արդյունաբերության,  
առևտրի, տնտեսության, արտաքին առևտրի բնագավառում։  
Սակայն ոպողիցիան գործ չունի այդ նվաճումների հետ։ Նա չի  
տեսնում զբանց կամ չի կամենում տեսնել, չի կամենում տեսնել  
մասսամբ իր տղիտությունից, մասսամբ կյանքից կորված ինտե-  
լիգենտների հայտնի համառությունից։

Հիմնական տարածայնությունները կուսակցության յեզ  
ոպղիցիայի միջև

Դուք կհարցնեք — ինչո՞ւմն են, վերջապես, տարածայնությունները կուսակցության և ոպղղիցիայի միջև, վեր հարցերի շուրջն են այդ տարածայնությունները:

Բոլոր հարցերի վերաբերմամբ, ընկերներ. (Ճայուղը օգջա-  
եց): Վերջերս յես կարդացի Մոսկվայի անկուսակցական բանվոր-

Ներից մեկի հայտաբարությունը, այդ բանվորը մտնում է կառարդեն մտել և կուսակցության մեջ։ Ահա թե ինչպես և ձևակերպում նա կուսացությունը և ոպողիցայի տարածայնությունները «Սկզբում մենք վորոնում եցինք, թե ինչժմամ են տարածայնությունները կուսակցության և ոպողիցայի միջև։ Իսկ այժմ արդեն չես գտնի, թե ինչժմամ նրանք համաձայն են կուսակցության հետ»։ (Ծիծաղ. ծափահարություն)։ Ահա թե ինչպես սրամիտու միաժամանակ կարճ կարողանում են արտահայտվել յերբեմն բանվորները։ Յես կարծում եմ, թե դա ամենասրամիա, ամենաանիշտ բնութագիրն ե ոպողիցայի վերաբերմունքի դեպի կուսակցությունը, դեպի նրա գաղափարախոսությունը, դեպի նրա ծրագիրը, դեպի նրա տակտիկան։ Հենց այն պատճառով, վոր ոպողիցիան մի խմբակ և իր գաղափարախոսությամբ, իր ծրագրով, իր տակտիկայով, իր կազմակերպչական սկզբունքներով։ Այն տմենը, ինչ միայն անհրաժեշտ ե նոր կուսակցության համար, այդ բոլորն ունի ոպողիցիան։ Պակասում են միայն «մանր» կետերը, պակասում են միայն ստվերները։ (Ծիծաղ. ծափահարություն)։ Յես կարող եմ թվել յոթ հիմնական հարց, վորոնց առիթով ծագել են տարածայնություններ կուսակցության և ոպողիցիայի միջև։

1. Մեր յերկրում սոցիալիստական հաղթական շինարարության հասրավորության հարցը: Յես չեմ հենվի ոպողիցիայի փափերագրերի ու հայտարարությունների վրա այդ հարցի առթիվ: Դրանք բոլորին հայտնի յեն և հարկ չկա կրկնել: Պարզ ե բոլորի համար, վոր ոպողիցիան ժխտում ե սոցիալիստական հաղթական շինարարության հնարավորությունը մեր յերկրում: Խոկ ժխտելով այդ հնարավորությունը, նա գործում է բացարձակ և ուղղակի մենակերպների դիրքը: Ապողիցիայի այդ վերաբերմունքը տվյալ հարցի առթիվ նոր չի նրա այժմյան զեկավարների համար: Այդ վերաբերմունքն ունեցին յելտակետ Կամենեվը և Զինովյանը, յերբ նրանք հրաժարվում եին համաձայնել հոկտեմբերյան ապշտամքության: Նրանք ուղղաղի ասում եյին այն ժամանակ, թե, բարձրացնելով ապստամբություն, մենք գնում ենք դեպքի կորուստ, թե հարկավոր ե սպասել մինչև հիմնադիր ժողովը, թե սոցիալիզմի պայմանները չեն հասունացել և շուտով չեն հասունանա: Մինույն վերաբերմունքն ունեմ ծրագին, յերբ նա համաձայնեց ապստամբության: Վորովհետեւ նա ուղղակի ասում եր, թե հաղթական պրոլետարական հեղափոխությունը յեթե

ողնության չհասնի արեմուտքից ավելի կամ պակաս մոտ առագայում, հիմարություն կլինի մտածել թե հեղափոխական թուսատանը կարող է դիմագրել պահպանողական Յեվրոպային:

Խսչպես — ինչպես ելին այն ժամանակ հեղափոխության դրմում կամենեմ ու Զինովյան մի կողմից և Տրոցկին՝ մյուս կողմից, Լենինը կուսակցության հետ յերրորդ կողմից: Դա շատ հետաքրքիր հարց է, վորի մասին արժե միքանի խոսք ասել: Դուք գիտեք, վոր Կամենեվը և Զինովյանը համաձայնեցին ապրատամբության ճարանատյալ: Լենինը նրանց քըում եր մտակալի սպառնալով արտաքսել կուսակցությունից (ծիծաղ, ծափահարություն), և նրանք ստիպված ելին հաղիվ հաղ գնալ դեպի տպառամբություն. (ծիծաղ, ծափահարություն): Տրոցկին գնում եր դեպի ապատամբություն հոծարակամ: Բայց նա գնում եր վոչ թե ուղղակի, այլ ծանոթությամբ, վորը զետ այն ժամանակ մոտեցնում եր նրան կամենեվի և Զինովյանի հետ: Հետաքրքիր է, վոր հենց Հոկտեմբերից առաջ 1917 թ. հունիսին Տրոցկին բարվոք համարեց նորեն հրատարակել Լենինյանական «Խաղաղության ծրագրը» իր հին բրոյցուրը, ասես ցանկանալով դրանով ասել, թե նա գնում է գեղի ապատամբություն իր սեփական դրոշակով: Ի՞նչի մասին ե խոսում նա այդ բրոյցուրի մեջ: Նա բանավիճում և այդտեղ Լենինի հետ՝ մի յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության հարցի արդիով, համարում է Լենինի այդ միտքը սիսալ ու պնդում է, թե հարկ կլինի իշխանությունը վերցնել բացց յեթե ոգնություն չհասնի արևմտա-յելլոպական հաղթած բանվորների կողմից, այն դեպքում անհուսալի յե կարծել, թե հեղափոխական թուսաստանը կարող է դիմանալ պահպանողական Յեվրոպայի հանդեպ: Իսկ ով չե հավատում Տրոցկու քննադատությունը, նա տառապում է ազգային սահմանափակությամբ: Անա մի քաղ-գածք Տրոցկու այն ժամանակավա բրոյցուրից: «Չսպասելով ուրիշներին, մենք սկսում ու շարունակում ենք կրիվը ազգային հողի վրա իտակատար հավատով, թե մեր նախաձեռնությունը կովկի իթան կդառնա ուրիշ յերկրներում, իսկ յեթե դա չինի, ապա անհուսալի յե կարծել — ինչպես վկայում է թե պատմության փորձը ու թե տեսական նկատառությունը — վոր, որինակ, հեղափոխական թուսաստանը կարող է դիմադրել պահպանողական Յեվրոպային: Քննել սոցիալական հեղափոխության հեռանկարներն ազգային շրջանակներում — նշանակում է զոհ գառնալ հենց այն ազգային սահմանափակման, վորպիսին կազմում է սոցիալ-

հայրենասիրության եյությունը»: Ահա, ընկերներ, Տրոցկու ծանոթությունը, վոր շատ բանում՝ բացատրում ե մեզ նրա և Կամենելի ու Զինովյելի այժմյան բլոկի արմատներն ու հողը:

Ինչպես եր գնում Լենինը դեպի ապստամբություն, ինչպես եր գնում կուսակցությունը: Նույնպես ծանոթությամբ: Վհչ, Լենինը և նրա կուսակցությունը գնում ելին դեպի ապստամբություն առանց ծանոթությունների: Ահա մի քաղվածք Լենինի մի նշանավոր հոգվածից՝ «Պրոլետարական հեղափոխության ռազմական ծրագիրը», հրատարակված արտասահմանում 1917 թվի սեպտեմբերին. — «Մի յերկրում հաղթած սոցիալիզմը բնավ միանգամբ չի բացառում բոլոր պատերազմները, ընդհակառակը, նախառեսում և նրանց: Կապիտալիզմի զարգացումը կատարվում է վերին աստիճանի անհամաշափ տարբեր յերկրներում: Ուրիշ կերպ ել չի կարող լինել ապրանքային արտադրության ժամանակ: Այստեղից ել անզրդվելի յեղբակացություն, սոցիալիզմը չի կարող հաղթել միաժամանակ բոլոր յերկրներում: Նա կհաղթի սկզբում մեկ կամ մի քանի յերկրում, իսկ մեացածները փորոշ ժամանակի ընթացքում կմնան բուրժուական կամ մինչբուրժուական: Դա պետք ե առաջ բերի վոչ միայն շփում, այլև ուղղակի ձգում մյուս յերկրների բուրժուազիայի կողմից՝ ջախջախելու սոցիալիստական պետության հաղթական պրոլետարիատին: Այդպիսի գեղքերում պատերազմը մեր կողմից կլինի որինական ու արդարացի: Դա կլինի պատերազմ սոցիալիզմի և մյուս ժողովրդներին բուրժուազիայից ազատագրելու համար»: (Լենին՝ «Պրոլետարական հեղափոխության ռազմական ծրագիրը»: Լենինի ինստիտուտի գրություններ, Ա-րդ պրակ, եջ 7):

Դուք տեսնում եք, վոր մենք այստեղ ունենք միանգամայն այլ տեսակետ, Յեթի Տրոցկին գնում եր դեպի ապստամբություն ծանոթությամբ, վոր մոտեցնում եր նրան Կամենելի ու Զինովյելի հետ, պնդելով, թե պրոլետարական իշխանությունն ինքնին չի կարող ներկայացնել վորևե առանձին բան, յեթե ժամանակին ոգնության չհամնի զրաից, Լենինն, ընդհակառակը, գնում եր դեպի ապստամբություն առանց ծանոթությունների, պնդելով, թե պրոլետարական իշխանությունը մեր յերկրում պետք ե հենակետածայի նրա համար, վորպեսզի ոգնի մյուս յերկրների պրոլետարներին՝ աղատվելու բուրժուազիայի լծից: Ահա թե ինչպես եյին գնում բոլշևիկները դեպի հոկտեմբերյան հեղափոխությունը և ահա ինչն Տրոցկին ու Կամենելի Զինովյելի հետ գտան ընդհանուր

լեզու Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարում: Կարելի եր բերել յերկարաբառության ձևով մի կողմից Տրոցկու, և մյուս կողմից Կամենելի ու Զինովյելի միջն տեղի ունեցած զրույցը՝ ոպոզիցին բլոկ կազմակերպելու ժամանակ: Կամենենելին ու Զինովյելին ասում են Տրոցկուն. «Տեսնում եք, թանգագին ընկեր, մենք վերջիվերջո իրավացի յերեացինք, ասելով, թե հարկավոր չեր համաձայնել Հոկտեմբերյան ապստամբության, թե հարկավոր եր սպասել հիմնադիր ժողովին, և այլն: Այժմ ամենքը տեսնում են, թե յերկերը վերասեռվում ե, իշխանությունն այլասեռվում ե, մենք գնում ենք դեպի կորուստ և վոչ մի սոցալիզմ մեզ մոռ չելինի: Հարկավոր չեր համաձայնել ապստամբության, իսկ դուք համաձայնեցիք հօժարակամ: Դուք գործեցիք մեծ սխալ»: Տրոցկին պատասխանում է նրանց. «Վհչ, թանգագին կուեգներ, դուք անարդարացի եք դեպի ինձ: Թեև յես համաձայնեցի ապստամբության, բայց ինչպես համաձայնեցի — դուք այդ մասին մոռացաք ասել: Զե վոր յես գնացի գեպի ապստամբություն վհչ ուղղակի, այլ ծանոթությամբ: (Ընդհանուր ծիծաղ): Յեվ վորչափով այժմ պարզվեց, վոր դրսից ոգնություն բոլորավին չի համար, պարզ ե, վոր գործը գնում ե դեպի կործանում, ինչպես նախազուշակում եյի իր ժամանակին «Խաղաղության ծրագիրը» բրոյուրի մեջ»:

Զինովյելին ասում է Կամենենեն. «Դա գուցե և այդպես ե: Մենք մոռացանք ծանոթության մասին: Այժմ պարզ ե, վոր մեր ըլոկը զաղափարապես հիմնավորված ե»: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություն):

Ահա թե ինչպես ձևակերպվեց բացասական վերաբերմունքը դեպի սոցիալիստական շինարարության հնարավորությունը մեր յերկրում: Իսկ ինչ է նշանակում այդ տեսակետը: Դա նշանակում է անձնատվություն: Ում առաջ: Հարկավ, մեր յերկրի կապիտալիստական արքայի. առաջ: Դարձյալ հետ առաջ: համաշվարհային բուրժուազիայի առաջ: Իսկ ձախակողմյան դարձվածքները, իսկ նեղափական ցատկրտանքները, հեր մնացին դրսնք: Դրանք չքացան: Մի լավ թափահարեցիք մեր ոպոզիցիալին, ուն շպրտեցիք հեղափոխական վոճարանությունը և դուք կտեսնեք, շպրտեցիք նրանց մոտ հատակում նստած և անձնատվություն: (Ծափահարություն):

2. Պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Կա, արդուք, մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա, թե վոչ: Հարցը մի

փոքր տարորինակ եւ (Ծիծաղ): Այսուամենայնիվ ուղողիցիան դնում եւ այդ հարցը իր ամեն մի հայտարարության մեջ: Ուղողիցիան առում եւ, թե մեզ մոտ տերմիգորյան այլասեռում եւ, իսկ ի՞նչ եւ նշանակում դա: Դա նշանակում եւ, թե մեզ մոտ չկա պրոլետարիատի դիկտատուրա, թե մեզ մոտ քանդվում է յետյան և գնում թե տնտեսությունն ու թե քաղաքականությունը և մենք դնում ենք վոչ թե գեղի սոցիալիզմ, այլ գեղի կապիտալիզմ: Այդ ամենը մի փոքր տարորինակ ու հիմարություն եւ Բայց ուղողիցիան պնդում եր ասածի վրա:

Ահա ձեզ, ընկերներ, գարճալ մի տարածայնություն: Դրա վրա եւ հենվում է Տրոցկու հայտնի թեզը կեմանսոյի մասին:

Յեթե իշխանությունն այլասոնեվել և կամ այլասոնեվում եւ, արժե, միթե, ինայել նրան ու պաշտպանել: Պարզ եւ, զոր չարժե: Յեթե ստեղծվի նալաստավոր կացություն այդ տեսակ իշխանությունը բանալու համար, դիցուք յեթե թինամին մոտենա Մոովային 80 կիլոմետր հեռավորությամբ, միթե պարզ չե, զոր հարկավոր և ոգտագործել կացությունը՝ մաքրելու այդ իշխանությունը և զնելու նոր կեմանսիստական, այսինքն տրոցկիստյան իշխանություն: Պարզ եւ, զոր այստեղ վոշինչ լինինյան չկա: Դա — մաքուր մենշևկմի եւ Ուղողիցիան հասել և մենշևկմին:

3. Բանվորի և միջին գյուղացու բլոկի հարցը: Ուղողիցիան շարունակ թագցնում եր իր բացասական վերաբերմունքը դեպի այդորինակ բլոկի գաղափարը: Նրա պլատֆորման, նրա հակաթերն ուշագրով են վոչ այնքան նրանով, ինչ ասված և այնտեղ, զորքան նրանով, ինչ աշխատում եր թագցնել բանվոր դասակարգից ուղողիցիան: Բայց ահա յերեաց Ի. Ե. Սմիրնովը — նույնպես ուղողիցիայի լիգերներից մեկը, զոր արիություն ունեցավ ասել ճշմարտությունն ուղողիցիայի մասին, լույս աշխարհ հանելով նրան: Ու ի՞նչ պարզվեց: Պարզվեց, զոր մենք դնում ենք գեղի կործանում և յեթե կամնում ենք փրկվել պետք եւ յերես դարձնենք միջին գյուղացուց: Այնքան եւ խելոք բան չե, բայց պարզ եւ: Այստեղ եւ մենշևկյան իսկական դեմքը վերջապես պարզվեց բոլորի համար:

4. Մեր հեղափոխության բնույթի հարցը: Քանի ժխտվամ և մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը, քանի ժխտվամ և պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության բլոկի անհրաժեշտությունը, այդ գեղքում ի՞նչ և մում մեր հեղափոխությունից, նրա սոցիա-

լիստական բնույթից: Պարզ եւ — վոչինչ, բացարձակապես վոչինչ: Պրոլետարիատն իշխանության յեկավ, իր վախճանին հասցը բռությունում կամ հեղափոխությունը գյուղացիությունը վոլինչ անելիք չունի այժմ հեղափոխության հետ, վորովհետեւ նա արգեն ստացավ հող և նշանակում եւ պրոլետարիատը կարող և հեռանալ տեղ տալով մյուս դասակարգերին: Ահա ձեզ ուղղիցիայի արմատները: Ահա ձեզ մեր ուղողիցիայի անձնատվության բոլոր արմատները: Իզմուր չե նրան գովարձնում Աւրամովուզ:

5. Լինինյան տեսակետի հարցը գաղութային հեղափոխությունները զեկավարելու ժամանակի: Լինինը յեկակետ ուներ իմպերիալիստական յերկրների ու հարստահարված յերկրների, իմպերիալիզմի յերկրներում ու գաղութային յերկրներում կոմմունիզմի քաղաքականության տարբերությունը: Նկատի առաջ տարբերությունը, նա առում եր զեր պատերազմի ժամանակակիցիան իմպերիալիզմի պատերազմով յերկրներում: Հնաց այդ պատճառով նա ընդունում եր զորոշ ժամանակաշրջանում ազգային բուրժուազիայի հետ գաղութային յերկրներում բոլոր և նույնիսկ մյուսթյուն հաստատելու հնարավորությունը, յեթե այդ բուրժուազիան պատերազմ և մզում իմպերիալիզմի զեմ և յեթե նա չի խանգարում կոմմունիստներին՝ զասիարակելու բանվորին ու գյուղացիական ընչազուրկներին կոմմունիզմի վողով: Ուղողիցիայի գյուղացիական պատերազմնցությունն այստեղ նրանումն եւ, զոր նա վերջապես անջատվում և լինինի այդ տեսակետից, զլորվելով զեպի Արդ ինտերնացիոնալի տեսակետը, զոր ժխտում և հեղադարձական պատերազմներին զաղութային յերկրներում իմպերիալիզմի զեմ աշակեցելու նպատակահարմարությունը: Հնաց զրանով են բացարձառում այն ամեն գերախոսությունները, զոր ունեցավ մեր ուղողիցիան չինական հեղափոխության հարցում: Ահա ձեզ մի տարածայնություն նա:

6. Միասնական ճակատի տակտիկայի հարցը համաշխարհային բանվորական շարժման մեջ: Ուղողիցիայի մեղանչումն այստեղ նրանումն եւ, զոր նա անջատվում և լինինյան տակտիկայից՝ բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներին աստիճանաբար կոմմուր զասակարգի միլիոնավոր մասսաներին հարցում: Բանվոր դասակարգի միլիոն իզմի կողմը նվազելու հարցում: Բանվոր դասակարգի միլիո-

նավոր մասսաները գրավվում են կոմմունիզմի կողմը վհչ սոսկ կուսակցության ճիշտ քաղաքականության պայմանով: Կուսակցության ճիշտ քաղաքականությունը խոշոր գործ է, բայց դա դեռ բոլորը չեն: Վորպեսզի բանվոր դասակարգի միջինավոր մասսաներն անցնեն կոմմունիզմի կողմը, դրա համար անհրաժեշտ է, վոր իրենք մասսաները համոզվին իրենց սեփական փորձով կոմմունիզմի քաղաքականության ճշտությանը: Յեվ վորպեսզի՝ մասսաները համոզվեն, դրա համար անհրաժեշտ է ժամանակ, անհրաժեշտ և կուսակցության հմտություն, կարող աշխատանք՝ համոզելու միջինավոր մասսաներին, թե կուսակցության քաղաքականությունը ճիշտ է: Մենք իրավացի եյխնք զեռ 1917 թ. ապրիլին, վասընդի մենք գիտեյինք, վոր գործը վերաբերում է բուրժուազիային տապալելուն ու խորհրդային իշխանություն հաստատելուն: Բայց մենք այն ժամանակ չեյխնք կանչում բանվոր դասակարգի լայն մասսաներին ապստամբության: Խոչժու. վորովհետեւ մասսաները հնարավորություն չունեյին համոզվելու, թե մեր քաղաքականությունն իսկապես ճիշտ է: Միմիայն յերը եսերների և մենշերիկների մանր բուրժուական կուսակցությունները խայտառակեցին հեղափոխության հիմնական հարցերում, միայն յերը մասսաներն սկսեցին համոզվել մեր քաղաքականության ճշտությանը, միմիմյն այն ժամանակ մենք առաջնորդեցինք մասսաներին զեպի ապստամբություն: Յեվ վորովհետեւ մենք ժամանակին առաջնորդեցինք մասսաներին զեպի ապստամբություն, հենց այդ պատճառով ել այն ժամանակ հաղթություն տարանք: Ահա թե ինչնաև են միասնական հակատի գաղափարի արմատները: Միամասական հակատի տակտիկան իսկապես նրա համար գործադրեց լենինը, վորպեսզի դյուրություն տա կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի՝ սոցիալ-դեմոկրատական համաձայնականության նախապաշարմունքներով վարակված՝ միջինավոր մասսաներին անցնելու կոմմունիզմի կողմը: Ոպոզիցիայի մեղանչումը նրանունի, վոր նա պարզապես բացասում է այդ տակտիկան: Հափշտակված մի ժամանակ հիմարաբար ու անմտորեն այդ տակտիկայով, նա ամեն կերպ վորզունում էր Անդիխյի գլխավոր խորհրդի հետ համաձայնելու գործը, յենթադրելով, թե այդ համաձայնությունը հանդիսանում է «իսաղաղության ամենալուրջ յերաշխիքներից մեկը արտաքին ռազմական ապստամբության զեմ», ամենալուրջ միջոցներից մեկը՝ Յեվրոպայում ուժորմիզմը անվտանգ դարձնելու համար. (տես Զինովյեվի զեկուցումը Հեկ ԽլՎ - բղ

համագումարում): Բայց չարաչար հիասթափվելով իր հույսերի մեջ, թե սեփորմիզմը կարելի յե անլիտանդ դարձնել Պերսեների և չիկսերի ոգնությամբ, ոպոզիցիան դիմեց հետո ուրիշ ծալքաներության, պարզապես ժխտելով միանական ճակատի տակտիկայի դաղափարը: Ահավասիկ ձեզ, ընկերներ, դարձյալ մի տառածայնություն, վոր ցույց ե տալիս, թե ոպոզիցիան ըստ ամենայնի հեռացել ե միասնական ճակատի լենինյան տակտիկայից:

Դ. Լենինյան կուսակցականության ու լենինյան միաբանության հարցը Հ. Կ. Կ. և Կոմինտերնի մեջ: Ոպոզիցիան այստեղ բացըրոշ անջատավում ե լենինյան կազմակերպչական տեսակենությունը կանգնելով 2-րդ կուսակցություն կազմակերպելու, նոր ինտերնացիոնալ կազմելու ճանապարհի վրա:

Ահա ձեզ Դ հիմնական հարցերը, վորոնք մատնանշում են, թե բոլոր այդ հարցերի վերաբերմամբ ոպոզիցիան զլորվել ե գեղի մենշերիմ: Կարելի՞ յե, արդյոք, համարել ոպոզիցիայի այդ մենշեվիկյան հայացքները համակերպ մեր կուսակցության գաղափարախոսության, նրա ծրագրի, նրա տակտիկայի, Կոմինտերնի տակտիկայի և լենինիզմի կազմակերպչական առաջադրման հետ: Վհչ մի գեղեցում և վհչ մի բողի: Դուք կասեք. ինչպես կարող եք ստեղծվել մեզ մոտ այդպիսի ոպոզիցիա, ուր են նրա սոցիալական արմատները: Յես կարծում եմ, թե ոպոզիցիայի սոցիալական արմատները գտնվում են քաղաքի մանր բուրժուական խավերի քայլայման փաստի, մեր զարգացման կացության մեջ, նրանում, վոր այդ խավերը, գժգոն պրոլետարիատի դիկտատուրայի ուժից մից, ցանկանում են այդ ուժիմը փոխել «բարելավել», բուրժուական դեմոկրատիա հաստատելու վոզով:

Յես արդեն ասացի վերեւում, թե մեր առաջնապացման, մեր արդյունաբերության աճման, տնտեսության սոցիալիստական ձեղիքի տեսակարար կշռի աճման հետևանքում՝ մանր, առանձնապես քաղաքային, բուրժուազիայի մի մասը քայլայման ու տապալվում է: Ոպոզիցիան արտացոլում ե պրոլետարական հեղափոխության ուժիմից այդպիսի տրտունջը: Ահա թե ուր են ոպոզիցիայի սոցիալական արմատները:

Իսկ այսուհետեւ: Ինչպես վարվել այժմ ոպոզիցիայի հետ: Նախքան այդ հարցին դիմելը, յես կկամենայի պատմել ձեզ այն միացյալ աշխատանքի պատմությունը, վոր կատարեց Կամենիլ Տրոցկու հետ 1911 թվին: Դա շատ հետաքրքիր հարց է, մանաւագնդ, վոր դա կարող եր մեղ մի տեսակ բանալի ծառայել՝ առավանդ:

Զաղբած հարցին ճիշտ մոտենալու համար: 1910 թվին մեր կ. կ. պլենումն եր արտասահմանում: Նա քննում եր այն հարցը, թե ինչպիսի փոխ-հարաբերություններ պետք ե ունենան բոլշևիկները մենշևիկների, մասնավորապես Տրոցկու հետ: (Մենք այն ժամանակում եյինք մենշևիկների հետ մի ընդհանուր կուսակցության մասնիկը և անվանում եյինք մեզ ֆրակցիա): Պլենումն արտահայտվեց մենշևիկների, նշանակում ե և Տրոցկու հետ հաշտվելու ոգտին, հակառակ լենինին ու ընդդեմ լենինին: Լենինը մնաց փոքրամասնության մեջ: Ապա Կամենեվը, Կամենել հանձն առաջ իրականացնել այդ համագործակցությունը, բայց առանց լենինի գիտության ու համաձայնության, վորովհետեւ լենինը կամենում եր փորձով ապացուցել Կամենելին՝ Տրոցկու հետ բոլշևիկների գեմ համագործակցելու ընասակարությունն ու անկարելիությունը: Լսեցք, ինչպես ե պատմում այդ մասին Կամենելը. «1910 թվին մեր ֆրակցիայի մեծամասնությունը փորձ արավ հաշտվելու ու համաձայնելու Տրոցկու հետ: Վլագիմիր Իլիչը վերաբերվեց այդ փորձին խիստ բացասարար և իրեն պատիժ իմ համառության համար՝ համաձայնություն կազելու Տրոցկու հետ, նա պահանջեց, վորպեսզի հենց յետ ուղարկվեմ իրեն Կենտկոմի ներկայացուցիչ Տրոցկու լրագրի խմբագրատուն: 1910 թվի աշնանից այդ խմբագրության մեջ մի քանի ամիս աշխատելուց հետո, յես համոզվեցի, վոր Վլագիմիր Իլիչն իրավացի եր բացասական վերաբերմունքի մեջ դեպի իմ «հաշտարար» վարքագիծը և նրա համաձայնությամբ յես հուացա Տրոցկու լրագրի խմբագրությունից: Մեր կապերի խզումը Տրոցկուց՝ առիթ տվեց մի շարք խիստ հոգվածների կուսակցության կենտրոնական որգանում: Հենց այն ժամանակ Վլագիմիր Իլիչն առաջարկեց իսձ գրել բրոշյուր, ամփոփելով մեր տարածայնությունները լիկվիդատորների, մենշևիկների և Տրոցկու հետ: «Դուք փորձ արիք համաձայնություն կապել հակաբոլշևիկյան խմբակցությունների ամենածախակողմյան (արոցկիայան) թեի հետ, դուք համոզվեցիք, թե անհնարին ե համաձայնություն կապել գուք ել պետք և ամփոփ բրոշյուր գրեք», — ասում եր իսձ Վլագիմիր Իլիչը: Բնական ե, վոր Վլագիմիր Իլիչն առանձնապես պնդում եր, վորպեսզի հենց բոլշևիզմի և տրոցկիզմի փոխհարաբերությունների բնագավառում ամեն ինչ ասված լինի մինչև վերջ»: (Կամենելի առաջարանը նրա «Յերկու կուսակցություն» բրոշյուրի առիթով, 1924 թ. մայիս):

Իսկ ինչպիսի հետևանքներ ստացվեցին դրանից: Լսեցէք շարունակությունը. «Տրոցկու հետ միասին փորձը, համարձակվում եմ ասել մի փորձ, վոր յես անկեղծորեն արի, վորի մասին վկայում են ներկայումն Տրոցկուց շահագործվող նամակներն ու մասնավոր խոսակցությունները, ցույց տվեց, վոր հաշտությունն անգուսապ թավալում ե ի պաշտպանություն լիկվիդատորության ու վճռապես կանգնում ե վերջինիս կողմը»: (Կամենել «Յերկու կուսակցություն», 1911 թ., եջ 136): Այսուհետեւ, «Մհ, յեթե արոցկիզմը հաղթեր — ինչպես տրամադրություն կուսակցության մեջ, — ինչպիսի յերջանկություն կլիներ լիկվիդատորության և կուսակցության դեմ պայքարող բոլոր հոսանքների համար» (եջ 145):

Ահա ձեզ, ընկերներ, Տրոցկու հետ միասին աշխատելու փորձը: (Մի ձայն՝ «խայտառակ փորձ ե»): Այդ փորձի հետևանքները նկարագրեց այն ժամանակ ընկ. Կամենելի հատուկ բրոշյուրով, վոր լույս տեսավ 1911 թ. «Յերկու կուսակցություն» վերնակը գործով: Յես չեմ կասկածում, վոր այդ բրոշյուրը մեծ ոգուած բերեց բոլոր այն ընկերներին, վորոնք զեր պատրանքներ ունեցին Տրոցկու հետ աշխատակցելու նկատմամբ: Այժմ ել յես մի հարց ունեմ. չ՞ փորձի, արդյոք, ընկ. Կամենելի գրել կրկին մի բրոշյուր նույնական «Յերկու կուսակցություն» վերնակը Տրոցկու հետ համագործակցելու նրա այժմյան փորձի առթիվ: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություն): Իցեթե դա անոգուտ չլինի: Իհարկե, յես չեմ կարող տալ ընկ. Կամենելին յերջախիք, թե այժմ Տրոցկին նույն կերպ, ինչպես ե այն ժամանակ, չի ոգտագործի նրա նամակները ու մահերմական խոսակցությունները նրա գեմ: (Ընդհանուր ծիծաղ): Բայց հազիվ թե հարկ լինի դրանից վախենալ: Համենայն գեպս այստեղ պետք ե ընտրություն անել. կամ յերկուուղ կրել, թե Տրոցկին կողտագործի Կամենելի նամակները ու կհրատարակի նրա գաղտնի խոսակցությունները և այն ժամանակ վտանգը կմնա կուսակցությունից դուրս, կամ գեն շպրտել ամեն յերկուուղ ու մնալ կուսակցության մեջ: Այդպես ե այժմ հարցը, ընկերները, Կամ մեկը, կամ մյուսը:

Ասում են, թե ոպողիցիան կամենում ե ներկայացնել համագումարին ինչ վոր հայտարարություն այն մասին, թե նա ոպողիցիան յենթարկվում ե ու կենթարկվի կուսակցության բոլոր վճիներին (մի ձայն՝ «այնպիս, ինչպես 1926 թ. հոկտեմբերին»), կարձակի իր Փրակցիան, (մի ձայն՝ «մենք բայց ենք այդ յերկու

անգամ»), և կպաշտպանի իր հայացքները, վորոնցից նա չի հրաժարվում (ձայներ՝ «վաչ, ավելի լավ ե մենք ինքներս կարձակենք») կուսակցության կանոնադրության շրջանակներում: (Մի ձայն՝ «Ժանոթությամբ, թե մեզ մոտ շրջանակները ուղղինից չեն»): Յես կարծում եմ, ընկերներ, թե դրանից վոշինչ դուրս չի կա: (Ձայներ՝ «Ճիշտ ե», յերկարատև ծափահարություն): Մենք ունենք հայտարարությունների վորոշ փորձ (ծափահարություն), յերկու հայտարարության վորոշ փորձ (մի ձայն՝ «Ճիշտ ե») 1926 թ. հոկտեմբերի 16-ին և 1927 թ. ոգոստոսի 8-ին: Ի՞նչի հանգեց այդ փորձը: Թեև յես մտադիր չեմ գրել «Յերկու կուսակցություն» բրոյալը, սակայն կարող եմ հայտնել, թե այդ փորձը հանգեց ամենաբացասական հետևանքների (մի ձայն՝ «Ճիշտ ե»), յերկու անգամ խափեցին կուսակցությանը, յերկու անգամ՝ թուլացավ կուսակցական դիսցիպլինան: Ի՞նչպիսի հիմքեր ունի այժմ ոպողիցիան պահանջելու մեղանից, վորապեսի մենք—մեծ կուսակցության, իենինի կուսակցության համագումարն այդ տեսակ փորձից հետո—հավատանք նրանց խոսքին: (Մի ձայն՝ «Դա կլինի տըխմարություն»): Ասում են, վոր նրանք նույնպես հարց են դնում արձակվածներին նորից կուսակցության մեջ ընդունելու մասին: (Ձայներ՝ «Դա չի լինի, թռղ գնան մենշեփլյան ճահիճը»): Յես կարծում եմ, ընկերներ, թե դա ել չի անցնի: (Յերկարատև ծափահարություն): Ի՞նչու կուսակցությունն արտաքսեց Տրոցկուն և Զինովյելին: Վորովինետև նրանք ոպողիցիայի ամբողջ գործի կազմակերպության են, (ձայներ՝ «Ճիշտ ե»), վորովինետև նրանք նպատակ են դրել կոտրել կուսակցության որենքները, վորովինետև նրանք պարձենում եյին, թե նրանց չեն համարձակվի ձեռք տալ, վորովինետև նրանք կամեցան ստեղծել իրենց համար ազնվական դրություն կուսակցության մեջ: Բայց միթե մենք կամենում ենք ունենալ կուսակցության մեջ արտօնություններ վայելող ազնը վականներ և այդ արտօնություններից զրկված գյուղացիներ: Միթե մենք՝ բոլեիկներս, վոր արմատից պոկեցինք ազնվական դասակարգը, այժմ կվերականգնենք նրան մեր կուսակցության մեջ: (Ծափահարություն): Դուք հարցնում եք. ի՞նչու մենք արտաքսեցինք Տրոցկուն և Զինովյելին կուսակցությունից: Վորովինետև մենք չենք կամենում ունենալ կուսակցության մեջ ազնվականներ: Վորովինետև մեր կուսակցության մեջ որենքը մեկ ե և կուսակցության բոլոր անդամները հավասար են իրենց իրավունքների մեջ: (Բացականչություններ՝ «Ճիշտ ե», յերկարատև ծափահարու-

թյուն): Յեթե ոպողիցիան կամենում և ապրել կուսակցության մեջ, թռղ յենթարկվի կուսակցության կամքին, նրա որենքներին, նրա ցուցմումքներին առանց ծանոթությունների, առանց յերկմտության: Զե կամենում նա այդ—թռղ գնա այստեղ, ուր ավելի ազատ կլինի նա: (Ձայներ՝ «Ճիշտ», ծափահարություն): Արտօնությունները նոր որենքներ ոպողիցիայի համար մենք չենք կամենում և չենք ստեղծի: (Ծափահարություն): Մեզ հարցնում են պայմանների մասին: Մեր պայմանը մեկ ե. ոպողիցիան պետք և զինաթափ լինի ամբողջովին ու լիովին թե գաղափարական ու թե կազմակերպչական տեսակետից (բացականչություններ՝ «Ճիշտ ե», յերկարատև ծափահարություն), նա պետք և հրաժարվի իր հակաբուշեկյան հայացքներից բացարձակորեն ու ազնվորեն ամբողջ աշխարհի առաջ: Նա պետք և հանձնի մեզ իր բջիջները, վորպեսզի կուսակցությունը հնարավորություն ունենա ցրել նրանց ամբողջովին: (Բացականչություններ՝ «Ճիշտ ե», յերկարատև ծափահարություն): Կամ այդպես, կամ թող հետանան կուսակցությունից: Իսկ յեթե չենան, դուրս կանենք: Այդպես և ոպողիցիայի գործն, ընկերներ:

### Բնդիանուր ամփոփում

Յես վերջացնում եմ, ընկերներ: Ի՞նչպիսի յե բնդիանուր ամփոփումը հաշվետվության ժամանակամիջոցում: Ամփոփումը հետևյալն ե.

1. Մենք պաշտպանեցինք խաղաղությունը շրջապատող պետությունների հետ, չնայած մեծագույն դժվարություններին, «մեծ պետությունների» բուրժուազիայի պրովոկացիոն հերուրանքներին:

2. Մենք ամբազնդեցինք ՍԽՀՄ բանվոր դասակարգի կապը իմպերիալիստական յերկրների ու գաղութների բանվորների հետ, չնայած անթիվ արգելքներին, բուրժուական վաճառված հարյուրբերան մամուլի ծով զրապարտություններին:

3. Մենք բարձրացրինք պրոլետարական գիկտատուրայի հեղինակությունը միլիոնավոր աշխատավոր մասսաների մեջ աշխարհի բոլոր մասերում:

4. Մենք՝ իրեն կուսակցություն ոգնեցինք կոմիստերնին և նրա սեկցիաներին՝ ամրապնդելու իրենց ազդեցությունն աշխարհի բոլոր յերկըներում:

5. Մենք արինք այն ամենը, ինչ միայն կարող և անել մի յերկիր, համաշխարհային հեղափոխական շարժումը զարգացնելու ու արագացնելու համար:

6. Մենք բարձրացրինք մեր սոցիալիստական արդյունաբերությունը, հաստատելով նրա զարգացման համար մրցանիշային տեմպ, ամրացնելով նրա հեգեմոնիան ամբողջ ժողովրդական տքնածության մեջ:

7. Մենք սահմանեցինք սոցիալիստական արդյունաբերության շաղկապ գյուղացիական տնտեսության հետ:

8. Մենք ամրապնդեցինք բանվոր դասակարգի միությունը միջին գյուղացիության հետ, հենվելով ընչազուրկների վրա:

9. Մենք ամրապնդեցինք պրոլետարիատի դիկտատուրան՝ չնայած միջազգային թշնամական շրջապատին, ցույց տալով բոլոր յերկըների բանվորներին, թե պրոլետարիատն ի վիճակի յե վճչ միայն ավերել կապիտալիզմը, այլև դարբնել սոցիալիզմը:

Այդպես ե ընդհանուր ամփոփումը: Ինչպիսի յե յեղրակացությունը: Յեղրակացությունը մեկ ե. մենք կանգնած ենք կանոնավոր ուղիի վրա, մեր կուսակցության քաղաքականությունը ձիւտ ե: (Զայներ՝ «Ճիշտ ե», ծափահարություն): Իսկ դրանից հետում ե, թե առաջ գնալով այդ ուղիով, մենք կհասնենք հավանութեն սոցիալիզմի հաղթության մեր յերկրում և սոցիալիզմի հաղթության բոլոր յերկըներում: (Յեղրաբառն ծափահարություն): Դա գեռ չե նշանակում, թե մենք չենք ունենա դժվարություններ մեր հանապարհին: Դժվարություններ կլինեն: Բայց մենք նրանցից չենք վախենում, վորովհետև մենք հեղափոխության կրակում կարծրացած բոլցեիկներ ենք: Դժվարություններ կլինեն: Բայց մենք նրանց կհաղթահարենք, ինչպես հաղթահարում եյինք մինչև այժմ, վորովհետև մենք կենինի յերկաթե կուսակցությունից կոփած բոլցեիկներ ենք, վորպեսզի կովենք դժվարությունների գեմ ու հաղթահարենք նրանց, և վճչ թե հեկեկանք ու լանք: Յեվ վորովհետև մենք բոլցեիկներ ենք, մենք կհաղթենք հավանորեն:

Հեկերներ! Դեպի կոմմունիզմի հաղթանակը մեր յերկրում, դեպի կոմմունիզմի հաղթանակն ամրողջ աշխարհում — առաջ!! (Աղմկալի յերկարառ ծափահարություն. բոլորը կանգնում են ու ովացիա յեն կազմում ընկ. Ստալինին. յերգում են «Խնտերնացիոնալը»):

## ՀԿԿ (Բ) XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ Կ.Կ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Մոսկվա, 7 դեկտեմբերի, 1927 թ.

Բոլցեիկների համամիութենական կոմմունիստական կուսակցության XV համագումարն ամբողջովին հավանություն և տալիս կենտրոնական կոմիտեյի քաղաքական ու կազմակերպչական ուղեգծին: Համագումարը վկայում է, թե կ.կ. ճիշտ բաղաքականությունն ապահովեց՝ հաշվետվության ժամանակաշրջանի ամենադժվարին պայմաններում՝ ՍԽՀՄ միջազգային հզորության ամրապնդումը, մեր յերկրի՝ իրեն միջազգային խաղաղության գործունի՝ գերի բարձրացումը և ՍԽՀՄ՝ իրեն համաշխարհային հեղափոխական շարժման ոջախի՝ հեղինակության աճումը: Շնորհիվ կ.կ. քաղաքականության — յերկրի ներսում ձեռք բերվեցին լուրջ աջողություններ սոցիալիստական շինարարության ընազագառում, անշեղ ավելանում եյին արտադրական ույժերը քաղաքում և գյուղում՝ հետզհետե գերակշիռ դարձնելով սոցիալիստական տարբերն ամբողջ տնտեսության մեջ, բարձրանում եր բանվորական ու գյուղացիական մասսաների նյութական ու կուլտուրական մակարդակը, ամրացավ խորհրդային հանրապետությունների միությունը՝ լենինյան ազգային քաղաքականության ձգրիտ գործադրության հիման վրա, ամրապնդեց բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ, աճում եր պրոլետարիատի և նրա կուսակցության զեկավար ազդեցությունը, սիստեմատիկաբար ամրանում եյին պրոլետարական դիկտատորայի դիրքերը:

Ներկայումս պրոլետարական պետությունը, բանվոր դասակարգը և կուսակցությունը սկսում են իրենց աշխատանքը բարձականին փոփոխված միջազգային ու ներքին կացության մեջ:

Միջազգային բնագավառում հաշվետվության ժամանակաշրջանը բացեց մի շաբաթ նոր մոմենտներ ու բնորոշ կողմեր, գորոնք յերեան յեկան ինչպես իմպերիալիզմի բանակում, այնպես

և կապիտալիստական յերկրների և Խորհրդային Միության վորխարաբերությունների մեջ։ Կապիտալիզմի մասնակի կայունությունը, վոր մատնանշվեց գեռ XIV համագումարում, բավականին ցայտուն հայտնաբերել և ներկայիս իր եյությունը ու իր մեջ բուն դրած հակասությունները։ Զնայած կապիտալիստական պետությունների վորոշ առաջխաղացման, չնայած համաշխարհային արտադրությունը գերազանցել և մինչպատճերազմյան սահմաններից, չնայած համաշխարհային ապրանքաշրջանառության վերականգնման ու դրամական վայրուտանների ամրապնդման, չնայած միջազգային վորոշ «նորմալ» հարաբերություններին, չնայած տեխնիկայի մասնակի առաջադիմության ու կապիտալիստական նպատակահարմարության, — չնայած այդ ամենին ու վորոշ չափով զրա հիման վրա համաշխարհային կապիտալիստական սիստեմի անհաջող հակասությունները սրվել են։ Սրվել են կապիտալիստական յերկրների զարգացման անհամաշափությունը և — զրա հիման վրա — կորիվ՝ տնտեսական-քաղաքական աղդեցության շրջանների ու աշխարհը բաժանելու համար։ Սրվել են միջազգային կորիվ՝ հում նյութերի սպառման շուկաների ու կապիտալի գործադրության ազգեցությունների համար, այն պատճառով, վոր իմպերիալիստական տնտեսության արտադրական հնարավորությունները չեն համակերպվում կապիտալիզմից թշվառացած ազգաբնակության մասսաների վճարման պահանջին, այն պատճառով, վոր կապիտալիստական արտադրական ապարատն աշխատում են շարունակ վոչ լրիվ, այն պատճառով, վոր ՍԽՀՄ նման հսկայական շուկան պոկիվել և կապիտալիստական տնտեսության համաշխարհային սիստեմից։

Սրվել են հակասությունները յեվրոպական-ամերիկյան յերկրների ու մայր ցամաքների միջև՝ մի կողմից և յենթակա յերկրների ու գաղութների՝ մյուս կողմից, ըստ-վորում յենթակա յերկրների կորիվ իմպերիալիստական հնչման դեմ սկսել և ստանալ զինված ապատամբությունների, ազգային պատերազմների ու գաղութային հեղափոխությունների ձեւ։ (Զինաստան - Ինդիանեղիա)։ Սրվել են զասակարգերի կորիվ իմպերիալիստական յերկրներում, որը ի պատասխան բանվոր դասակարգի ու նրա ապրուստի մակարգակի դեմ բուրժուազիայի ձեռնարկած արշավանքին, ի պատասխան 8 ժամյա բանվորական որը վերացնելուն ու շահագործիչ նպատակահարմարության, ի պատասխան իշխող բուրժուա-կան խմբակցությունների հետագիմական - միլիտարիստական

քաղաքականության — բանվոր դասակարգն սկսում է զիմել արշավանքի։ Սրվել են հակասությունները բուրժուական շրջապատի յերկրների և ՍԽՀՄ միջև, վոր իր հաղթական զարգացմամբ քանդում և համաշխարհային կապիտալիստական տիրապետության հիմքերը։ Սոցիալիստական տարբերի աճումը ՍԽՀՄ մեջ, բուրժուական հույսերի խորակումը՝ պրոլետարական զիկտատուրայի այլասեռման նկատմամբ, ի շարս ՍԽՀՄ միջազգային - հեղափոխական ազգեցության ուժեղացման — այդ սրության ամենագլխավոր գործոնն են հանդիսանաւմ։

Այդպիսով ամրող կապիտալիստական զարգացումը յերևան բերեց տեսնենց՝ կրծատելու համաշխարհային «հանգստի» պատմական ժամանակամիջոցները և արագացնելու համաշխարհային միջադեպերի հեղափոխական վախճանը։ ՍԽՀՄ համար դա նշանակում է ամենից առաջ հարաբերությունների հասունացող լարվածություն բուրժուական պետությունների և բուրժուակայի առանձին խմբակցությունների հետ։ այդ լարված հարաբերությունները տակավին դժվարացնում են միասնական կապիտալիստական ճակատ ստեղծելը, բայց գառնում են ավելի ու ավելի թշնամական ՍԽՀՄ վերաբերմամբ, վորպիսի հանգամանքը ստեղծում և արտաքին իմպերիալիստական հարձակման անմիջական սպառնալիք։

Միջազգային զարգացման վերջին յերկամյա ժամանակաշրջանը մի ավելորդ անգամ բացորոշ ցույց տվեց, թե ինչպես բուրժուական պացիֆիստական քաղաքագեների ջանքերը՝ «միարանեցնելու ու հաշտեցնելու» մեծ պետություններին կապիտալիստական հիմունքով՝ ապարդյուն յերևացին, Աղվերի Լիգայի անվերջ միաբանեցնող կոնֆերենցիաներն ու հանձնաժողովները, սեղանավորների այսպիս անվանված հրավարտակը (Դեկլարացիա յետիբասայան մաքսային վակիսանալիքայի գեմ), միջազգային տնտեսական կոնֆերենցիան, պացիֆիստական նախագիծը, «զինաթափության» յեռապետության կոնֆերենցիան ժընկում, մերկացրին իրենց՝ նորեն խարելու բանվոր դասակարգին։ «Միաբանեցնելու» փորձերը սոսկ բօրսարկում եյին իմպերիալիստների վայրագ մրցությունը կուլիսների յետենում, գաղութային վորսը բաժանելու համար կատարվող կորիվ, սպառազինությունների անընդհատ ճիգերը, նոր իմպերիալիստական պատերազմները նախապատրաստող գաղտնի ու բացարձակ ուղղմական ըլոկներ կազմելը։ Իրականում աճում եյին Փաշիստական ու միլիտարիստական

տեսդեմնցները։ Հոնդոնի պահպանողական մինիստրության ղեկավարությամբ միջազգային բուրժուազիայի հետագեմ տարրերն սկսեցին հող պատրաստել՝ ՍԽՀՄ վրա զինված հարձակում գործելու համար, փաթաթելով այդ պրովոկացիաների մի ամբողջ կծիկով (հարձակումներ ՍԽՀՄ արտասահմանյան ներկայացուցչությունների վրա, խորհրդային դիպլոմատիայի աշխատակիցների սպանություն)։

ՀԿԿ (բ) XV համագումարը վկայում ե, թե Փաշիստական ու ազգեսիվ միլիտարիստական տեսդեմնցների հետզնետե սուբկրապարանք ստանալու հետ միաժամանակ կապիտալիստական պետությունների քաղաքականության մեջ առաջ են գալիս ժամանակակից միջազգային ու ներքին հակասությունների հեղափոխական լուծման նախադրյաներ։ Անդինական ընդհանուր ու քարածուխային գործադրուները 1926 թ., ապստամբությունն Խորհութեական մեծ հեղափոխությունը, բանվորների հեղափոխական յելույթը «կայունացած» Ավստրիայում (1927 թ. հուլիս) — խստորեն մերկացնում են համաշխարհային կապիտալիստական ոեժիմի հակասությունն ու նեխվածությունը։ Ներկա մոմենտին Յերկրոպայում հեղափոխական ալիքի կարճամանակյա տեղատփությունը (1923 թ. գերմանական հեղափոխության պարտությունից հետո) նորից փոխվում ե մակընթացության՝ պրոլետարիատի ուղղմական ակտիվության բարձրացմամբ, բանվորական շարժման շերտափորմամբ ու ձախ թեքումով, կոմինտերնի և նրա սեկցիաների շարքերի խտացմամբ, մասսայական հեղափոխական շարժման աճումով (ցույցեր Սակոյի և Վանցեստի սպանության առթիվ, մի շաբթ կոմկումների ընտրական աջողությունները, արտասահմանյան բանվորների պատվիրակությունների այցը ՍԽՀՄ հոկտեմբերյան հանդեմներին, և այլն)։

Ուշադրության առնելով վերոհիշյալ հանգամանքները, վորոնք բնութագրում են ժամանակակից միջազգային կացությունը, XV համագումարը հանձնարարում է ԿԿ կատարել հետագա աշխատանքը։ —

Խաղաղության քաղաքականությունն անշեղ կիրառելու հիման վրա, վոր վոչ այլ ինչ ե, յեթե վոչ իմպերիալիստական պատերազմների գտանդի դեմ կովելու քաղաքականություն, վորը և միաժամանակ հիմնական պայմանն ե՝ սոցիալիզմի հետագա աճման համար ՍԽՀՄ մեջ։

ՍԽՀՄ բանվորների յեղբայրական կապերն արևմտայեվրոպական պետությունների բանվորների և հարստահարված յերկըրների աշխատավոր մասսաների հետ ըստ ամենայնի ամրապնդելու հիման վրա։

Տնտեսական կապերը կապիտալիստական յերկըրների հետ՝ ապահովելով հանգերձ Խորհրդային Միության տնտեսական ինքնուրույնությունը՝ սիստեմատիկաբար զարգացնելու հիման վրա։

Յերկըրի պաշտպանողական ընդունակությունը, բանվոր-գյուղացիական կարմիր բանակի, ոգային ու ծովային նավատորմերի ույժն ու ռազմունակությունը շարունակ ամրապնդելու հիման վրա։

Անհրաժեշտ տնտեսական պահեստի ույժեր կուտակելու հիման վրա (հացի, ապրանքների ու վայրուտայի և պաշտպանության հատուկ պահեստի ույժերի)։

XV համագումարը միանգամայն ճիշտ և համարում կենտրոնական կոմիտեյի ուղեգիծն ու աշխատանքը՝ ներքին քաղաքականության ու տնտեսական շինարարության բնագավառում։ Լենինյան քաղաքականության հիման վրա կ. կ. ապահովեց պետական արդյունաբերության զարգացումը մինչպատերազմյան մակարդակից ավելի, վորի ժամանակ աճում են աշխատող բանվորների թիվը, աշխատանքի արտագրականությունն ու աշխատավճարը։

Պետական խոշոր արդյունաբերության զարգացման հետ զուգընթաց՝ անընդհատ աճում է արտագրական միջոցների արտադրության բաժինը, Արդյունաբերությունը գերազանցել է մինչպատերազմյան նորմաներից, վերականգնվել է սոցիալիստական արդյունաբերության հիմնական դրամագլուխը, ձեռնարկված և արմատական տեխնիկական ու արտադրական նորամուծումների, խոշոր աշողություններ ելեքտրիֆիկացիայի մեջ, արդյունաբերական արտադրության մի շաբթ նոր ճյուղերի զարգացում (մեքենաների, դագգաների, սավառնակների ու ջրանիֆլերի կառուցում), նոր գործարանների ու խոշոր ֆաբրիկաների կառուցում, հինգործարանների հիմնական վերասարգավորում, — այդպես են կուսակցության և բանվոր գասակարգի զգալի նվաճումները մեր յերկըրի ինդուստրիալիզացիայի ճանապարհին, վոր մատնանշեց կուսակցության XIX-րդ համագումարը։

Պետական սոցիալիստական արդյունաբերության հետ միաժամանակ՝ աճել է պրոլետարական պետության գերիշխող տնտեսական զարգաթների մյուս ամբողջ սիստեմի նշանակությունը — արանապորտի, պետական բյուջեյի, բանվորային-վարկային ցանցի

և առևտրական ապարատի: Պետական ու կոռպերատիվային հասովածը վճռական դիրքեր և գրավել շուկայում, սխատեմատիկաբարյետ մղելով նրանից մասնավոր առևտրական կապիտալը: Նույնական ընդարձակվել են արտաքին առևտրի մենավաճառության հիման վրա, չնայած կապիտալիստական շրջապատի կիսաբոյկոս գործելակերպին, մեր արտաքին առևտրական կապերը, ըստ գորում մեր առևտրական հաշվելիքության հասել և ակտիվ սալգոյի:

Կուսակցության տնտեսական քաղաքականությունն այս վերջին յերկու տարում նպաստեց, սոցիալիստական քաղաքի գերը աստիճանաբար ուժեղացնելու հիման վրա, շարունակաբար զարգացնել զյուղատնտեսությունը, ավելացնել ցանքսային տարածությունները, աճեցնել ապրանքայնությունը, սահմանել ավելի բարձր տեխնիկայի ու ագրարային կուլտուրայի, տեխնիկական կուլտուրաների տարրեր և մեքենայացնել զյուղատնտեսական արտադրությունը: Տնտեսական կապը քաղաքի և զյուղի միջև բարձականին ամրացել է: Գյուղատնտեսության աճման հետ միասին՝ աճել և քաղաքային արդյունաբերական ապրանքների մատակարարումը զյուղին և զյուղատնտեսական կոռպերացիայի նշանակությունը:

Հ. Կ. (բ.) XV-րդ համագումարն անհրաժեշտ և համարում, սակայն, մատնանշել, թե հիշյալ նվաճումները բավական չեն և թե զյուղատնտեսության մակարդակը դեռևս մնում և չափազանց ցածր: Ուստի համագումարը հանձնարարում է Կ. Կ. ձեռք առնել գործնական միջոցներ՝ զյուղատնտեսության վերելքն ուժեղացնելու համար, լսավորում հիմնական միջոցներից մեզը համագումարը համարում է հողային բարեկարգության աշխատանքների շուտափույթ գործադրությունը: Անհրաժեշտ և առաջնակարգ խընդիր դարձնել, շարունակելով անդամագրել զյուղացիությանը կոռպերացիային, աստիճանաբար միացնել ցիրուցան զյուղացիական տնտեսությունները խոշոր արտադրական ընկերակցությունների մեջ (հողի կոլեկտիվ մշակում՝ յերկրագործության բարգործման ու մեքենայացման հիման վրա), ամեն կերպ աջակցելով ու խրախուսելով համայնացրած զյուղատնտեսական աշխատանքի ծիլերը: Գյուղատնտեսության այդ ուժեղ վերելքն անհրաժեշտ և թե զյուղացիության հիմնական մասսայի բարեկեցությունը բարձրացնելու, թե խոշոր արդյունաբերության համար սպառման ու հում նյութերի շուկան ընդարձակելու և թե զյուղը սոցիալիստական կոռպերացիային միացնելու ու տեխնիկապես վերակազմելու

համար, հաղթահարելով այդպիսով գյուղի կապիտալիստական տարրերին:

Տնտեսական դարպացման անցած ժամանակաշրջանն, անպայման, մի քայլ առաջ և սոցիալիզմի կողմը: Այդ աջողությունը, սակայն, չի նշանակում, թե վերացել են դժվարությունները, վտանգներն ու հակասությունները, վրանք կապված են մեր աձման առանձնահատկությունների, յերկրի տնտեսական հետամնացության և պրոլետարիատին թշնամի սոցիալ-դասակարգային ույժերի հետ, վորոնց գեմ սիստեմատիկաբար կոխվ մղելով միայն կարելի յե հաղթահարել այդ դժվարությունները և շարունակել ասածանալ գեղի սոցիալիզմ: Կարեռագույն դժվարությունների թվին անհրաժեշտ և գասել՝ արտահանության ու ներմուծման առեղծվածքը, վոր ծայրատիճան բարգացել և միջազգային սուր գրությունից, ապրանքային սովորակածքը ու վերջապես պահեստի ույժերի (ապրանքային ու վայրուտային) կուտակման առեղծվածքը: Համագումարն ամրող կուսակցության ուշագրությունն և հրավիրում այն հանգամանքի վրա, թե այդ առեղծվածքների աջող լուծումը պահանջում և կուսակցության բոլոր ույժերի առանձին լարում, նրա կամքի միամնականության ու կուսակցական դիրեկտիվերի համերաշխ գործակցություն:

XV համագումարը մասնավոր կապիտալիստական տնտեսության տարրերի վերաբերմար, վորոնք աճում են իրենց բացարձակ զանգվածով — թեև անհամեմատ փոքր աստիճան, քան թե տնտեսության սոցիալիստական հատվածը — հարկավոր և համարում գործադրել տնտեսական ավելի վճռական փարման քաղականություն: Կապիտալիստական տարրերի գեմ տնտեսական հետագա արշավանքի համար նախադրյաներ ստեղծվել են տնտեսական զարգացման նախկին աջողություններով՝ ապրանքային հետզետե աճող շրջանառության ու սազմական կոմմունիզմի մասնագրելով վերացնելու հիման վրա (կուսակցական ԽIV կոնֆերենցիայի վճիռը), վոր կենտրոնացրեց պրոլետարական պետության ձեռքում պատշաճ նյութական՝ տնտեսական միջոցներ, վորոնք անհրաժեշտ են ինչպես կապիտալիստական տարրերին զյուղում աջողությամբ հաղթահարելու (միջին զյուղացիության հետ արշավանք բռունցքների գեմ, մեծ ովնություն ընչազուրկ-միջին զյուղացիության կոռպերացիայի ուժեղացում և արտադրական կոռպերացիա), այնպես և մասնավոր կապիտալին քաղաքում դարձյալ յետ մղելու համար:

Կենտրոնական կոմիտեյին ԽV համագումարը հանձնարարում է շարունակել ուժեղ տեմպով սոցիալիստական ինդուստրիալիզացիայի քաղաքականությունը, վոր արդեն տվել ե իր առաջին դրական հետևանքները: Ամբափնդելով ՍԽՀՄ արդյունաբերական ույժը, կուսակցությունն ամեն կերպ պիտք է շարունակի ծավալել, ոգտագործելով յեղած ֆինանսական-տնտեսական միջոցները, արտադրական միջոցների արտադրությունը, մասնավորապես մետաղաձուլումն ու մեքենակառուցումը, զարգացնել յերկրի ներսում արդյունաբերական հում նյութերի (բամբակի, բրդի, կաշվի և այլն) արտադրությունը, պետք ե շարունակի անշեղ գործադրել ինքնարթեքը և արդյունաբերական ապրանքների գներն իթեցնելու քաղաքականությունը: Մեր յերկրի ինդուստրիալիզացիայի գլխավոր խնդրի հետ միաժամանակ՝ հարկավոր և վճռապես նպատակահարմար հիմքերի վրա դնել արտադրությունն ու վարչական աշխատանքը: Արտադրության աշխատականարմարությունը պետական ու կոռագերատիվային ապարատը բարելավելու ու պարզ դարձնելու հետ միասին՝ առաջիկայում հանդիսանում է հիմնական խնդիրը: Պրոլետարիատի կյանքի նյութական-կուլտուրական մակարդակը բարձրացնելու, ինչպես և արտադրական պլոցեաը նպատակահարմար դարձնելու համար կուսակցությունն ազգարարել ե՝ աստիճանաբար դիմել 7 ժամայ բանվորական սրվա, շարունակելով բարձրացնել բանվոր դասակարգի կենսական մակարդակը, վոր սկզբունքորեն տարբերում և նպատակահարմարության մեր մեթոդները կապիտալիզմի մեթոդներից, ուր նպատակահարմարության գործադրության ժամանակ, ընդհակառակը, ինուում և մասսաների ապրուստի մակարդակը ու յերկարում ե բանվորական որը: Հորդորելով բոլոր կուսակցական-տընտեսական, արհետակցական ու խորհրդային կազմակերպություններին ամբողջ յեռանդով ձեռնամուխ լինել լուծելու սոցիալիստական նպատակահարմարության այդ կարևորագույն ինդիքը, չկե (թ.) XV համագումարը կարծում ե, թե միմիայն դրա հիման վրա հնարավոր ե իրականացնել յերկրի ինդուստրիալիզացիան, (վոր իր մեջ անփոփում ե նաև գյուղատնտեսության ինդուստրիալիզացիան), աստիճանաբար վերացնել գործադրկությունը, վերջ գնել պրոլետարական պետության բյուրոկրատիկ խեղաթյուրումներին, բավարարել բանվոր-գյուղացիական մասսաների աճող պահանջերեւ, ամբողջության ավելի զարկ տալ նրանց կուլտուրական

զարգացմանը և հաղթահարել սոցիալիստական շինարարության գլխավոր գժվարությունները:

Չնայած սոցիալիստական-տնտեսական միջուկի ղեկավար ու շարունակ աճող դերին, ՍԽՀՄ տնտեսության արտադրական ույժերի վերելքը կատարվում է գասակարգային հակասությունների մասնակի զարգացման մեջ: Քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական խավերը, կապակցվելով խորհրդային և տնտեսական ավարատի վորոշ բյուրոկրատիկ տարրերի հետ, ձգտում են ուժեղացնել իրենց գիմադրությունը բանվոր դասակարգի արշավանքին, փորձում են ցույց տալ պրոլետարական դիկտատուրային թշնամական աղղեցություն ծառայողների, ինտելիգենցիայի վորոշ խավերի և տնայնագործ արհետավորների, գյուղացիների և բանվորների հետամնաց շերտերի վրա: Այդ աղղեցությունն արտահայտվում է նաև կուլտուր-քաղաքական ու գաղափարախոսական բնագավառում: (Ճողերը փոխելու վարդապետություն, բոունցքային-գյուղացիական միության լողոնդ, շովինիզմ, հակասեմիտիզմ բուրժուական-գեմոնկրատիվական ազատությունների քարոզ և գրահետ կապված մանր բուրժուական ոպողիցիոն լողոնդ՝ յերկու կուսակցության մասին, և այլն): Կապիտալիստական տարրերի աճող ակտիվության այդ թշնամական աղղեցությանը բանվոր դասակարգը չկե գլխավորությամբ ներհակեց՝ ամրապնդել պրոլետարական գիտատուրայի ոեթիմը, ել ավելի խթանել պրոլետարական մասսաների ակտիվությունը, ինքնագործունեյությունն ու կուլտուրականությունը, (խորհուրդների աշխուժացում, արհետակցական գեմոնկրատիվի և կոռագերատիվային հասարակայնության ծավալում, պրոլետարիատի գաղափարական աղղեցության ուժեղացում գյուղի վրա, կուլտուր-գաստիվարակիչ աշխատանք մասսաների մեջ, և այլն), ինչպես նաև ուժեղացնել պրոլետարիատի գաղափարական աղղեցությունը խորհրդային ինտելիգենցիայի լայն խավերի վրա:

Մասնանշելով մի շարք անյերկբա աշողություններ կումի այդ ճակատում, համագումարն անհրաժեշտ է համարում հետագյում ամեն կերպ համախմբել պրոլետարական մասսաներին և առանձնապես ուժեղացնել կոխվը գաղափարական ու կուլտուրական ճակատում:

Վկայելով մեր կուսակցության քանակային ու վորակային աճումը ԽIV համագումարի ժամանակից, ամբողջովին հավանելով կ քաղաքականությունը՝ կուսակցության սոցիալական կազմը

կանոնավորելու վերաբերմամբ և մատնանշելով խորհրդային իշխանության 10 ամյակի առթիվ կուսակցության մեջ բանվորներին ընդունելու աջողությունը, ՀԿԿ (թ) XV համագումարը հայտնում է, թե ՀԿԿ (թ)՝ իբրև դիկտատուրայի հիմնական լժամիկ՝ դեկայի գիրը կարող ե պահպանվել, ապահովվել ու ուժեղանալ միմիայն լենինյան համերաշխության ու պրոլետարական դիտապետական մակարդակը, հետեղականորեն կիրառելով ներկուսակցական դիմոկրատիան, սիստեմատիկաբար բարելավելով կուսակցության սոցիալական կազմը՝ մշտապես ընդունելու կուսակցության մեջ արտադրող բանվորներ և բանվորուհիներ, Համագումարն անհրաժեշտ ե համարում, առանձնապես ի նկատի ունենալով կուսակցության առաջ կանգնած խնդիրների բարգությունը, կուսակցության բոլոր անդամների ակտիվությունը բարձրացնելու նպատակով, զարգացնել ներկուսակցական դիմոկրատիան, գործնականապես ըննադատել ինչպես խորհրդային ապարատի, այնպես և կուսակցության պակասությունները, ուժեղացնել կոփը կարյերիմի դեմ, և այն։ Դրա հետ միաժամանակ՝ համագումարը կուսակցության ուշադրությունն ե հրավիրում կոմյերիտմիության, բանվոր յերիտասարքության ու կանանց մեջ աշխատանքն ուժեղացնելու անհրաժեշտության վրա։

XV համագումարը վկայում է, թե չնայած կուսակցության XII համագումարի նախազգուշացման, թե ը. Տրոցկու խմբակը «մանր բուրժուական», և, չնայած կուսակցության XI կոնֆերենցիայի նախազգուշացման, թե ը. Տրոցկու դեկայի գործող միացյալ ոպողիցիան «սոցիալ-գեմոկրատիական թեքում» ունի, ոպողիցիան շարունակեց ամիս առ ամիս խորացնել իր վերաստուգչական սխալները, կոփի մղել ՀԿԿ ու լենինի ուսուցման դեմ, կազմելով իր առանձին կուսակցությունը և տանելով կոփը ՀԿԿ սահմաններից գուրս՝ գանգատական դիմում ուղղելով յերկրի վոչ պրոլետարական տարրերին պրոլետարիատի դիկտատուրայի սեժիմի դեմ։

Միջաղգային կոմմունիզմի սենեգատների հետ (Մասլով, Սուվարին և ընկ.) բացիերաց բլոկ կազմած ոպողիցիայի զաղափարախոսությունը ներկայումս հիմնավորվել ու ձեռկերպվել և իբրև մենշերիզմ—սրա յուրահատուկ տրոցկիստյան ֆորմուլայով։

Ժիտելով խորհրդային պետական ձեռնարկների սոցիալիստական բնույթը, ժիտելով սոցիալիստական հաղթական շինարարության հնարավորությունը մեր յերկրում, ժիտելով բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների միության քաղաքականությունը, ժիտելով բոլշեկոմի կազմակերպչական սկզբունքները (ՀԿԿ և կոմինտերնի պառակտման քաղաքականություն), տրոցկիստյան՝ մենշերիզյան ոպողիցիան տրամաբանորեն հասավ այն կետին, վոր սկսեց զրպարտել, թե ՍԽՀՄ այլասեռվելով դառնում է տերմիգորյան պետություն, սկսեց ժիտել պրոլետարական դիկտատուրայի գոյությունը ՍԽՀՄ մեջ և հականեղափոխական կովի ձեռնարկեց ՍԽՀՄ գեմ։ Վերջնականում ոպողիցիան գաղափարապես խզեց իր կապերը լենինիզմից, դարձավ մենշերիզյան խմբակ, վոտք զրեց միջաղգային ու ներբին բուրժուազիայի ույժերի առաջ անձնատուր լինելու ճանապարհի վրա և վերածվեց յերրորդ ույժի որյեկտիվ զենքի պրոլետարական դիկտատուրայի սեժիմի գեմ։ Հենց այդ պատճառով ոպողիցիան ստացավ այնպիսի խորտակիչ գիմազրություն ինչպես կուսակցության անդամների ամբողջ զանգվածի, այնպես և ամբողջ բանվոր դասակարգի կողմից։ Կ. Կ. և Կ. Վ. Զ. բալոր վճիռները տրոցկիստների կաղմալուծիչ աշխատանքի գեմ՝ համագումարը բացարձակապես ճիշտ ու մինիմալ անհրաժեշտ ե համարում և հանձնարում է Կ. Կ. այսուհետեւ և՛ ապահովել կուսակցության լենինյան միաբանությունն ամեն գնով։

Ուշադրության առնելով, վոր կուսակցության և ոպողիցիայի տարածայնությունները տակտիկականից փոխվել են ծրագրայինի, վոր տրոցկիստյան ոպողիցիան որյեկտիվորեն դարձել ե հականորդացիային կովի գործուն, ԽՎ-րդ համագումարը հայտարարում է տրոցկիստյան ոպողիցիային պատկանելու ու նրա հայացքների պրոպագանդն անհարիր բոլշերիզյան կուսակցության շարքերում մնալու հետ։ Հ. Կ. Կ. (թ.), Խորհրդացին Միության բանվոր դասակարգի անունից ԽՎ-րդ համագումարը պրոլետարական հաստատ հավատ և արտահայտում առ այն, թե սոցիալիզմը կհաղթանկի մեր յերկրում՝ չնայած բոլոր գժվարություններին։ Պրոլետարիատի դիկտատուրայի տասնամյա գոյության համաշխարհային պատմական փորձը փայլուն կերպով հաստատում է լենինյան ուղիի ճշտությունը, վորով ընթանում է Հ. Կ. Կ. (թ.): ԽՎ-րդ համագումարն առաջարկում է Կ. Կ. անշեղ առաջանալ այդ ուղիով,

շաբունակել համախմբել սոցիալիստական շինարարության դրուցակի տակ մեր յերկրի աշխատավորների ավելի խոշոր մասսաներին, ամրապնդել համերաշխության յեղբայրական կապերը բոլոր յերկրների պրոլետարիատի հետ, դարձնել ՍԽՀՄ տարեցտարի համաշխարհային սոցիալիստական հեղափոխության ավելի ու ավելի հզոր առաջադիրք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0185636

